



ՄԱԿ-Ի
ՏՆՏԵՍԱԿԱՆ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ
ՀԱՐՑԵՐՈՎ
ԿՈՄԻՏԵԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ
ՈՒՂԴԱԾ
ԵԶՐԱԹԱԿԻՉ
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ
ԸՆԹԱՑՔԸ. **ՉԵԿՈՒՅՑ**

ՄԱԿ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՀԱՐՑԵՐՈՎ ԿՈՄԻՏԵԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ. ԶԵԿՈՒՅՑ

Երևան

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2022



ՄԱԿ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՀԱՐՑԵՐՈՎ ԿՈՄԻՏԵԻ՝
 ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒՂԴՎԱԾ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ. ԶԵԿՈՒՅՑ

Հեղինակ՝ Տաթևիկ Թոխյան

Խմբագիրներ՝ Տաթևիկ Ղարիբջան, Նիկոլայ Հովհաննիսյան, Ազնիվ Նասայան

Այս հրապարակումը պատրաստվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատարի գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի կողմից ՄԱԿ-ի Եզրափակիչ դիտարկումների իրականացման վերլուծություն և իրազեկվածության բարձրացում» նախագծի շրջանակներում: Նախագծի նպատակն է խթանել ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը և բարելավել պետության քաղաքականության համապատասխանությունը մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերին:

Բովանդակություն

Ներածություն.....	5
Մեթոդաբանություն	7
Զեկույցում օգտագործված հապավումները.....	9
1. SUՄԻԿ-ի ներկայացրած դրական զարգացումները.....	10
2. Ուշադրության արժանի հիմնական ոլորտները	11
2.1 SUՄԻՄԴ-ի իրավական կարգավիճակը ՀՀ օրենսդրության մեջ.....	11
2.2 Վիճակագրական տվյալների բացակայություն.....	13
3. Կանանց զբաղվածությունը և մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին.....	14
4. Աշխատանքային իրավունքը (հոդված 6-րդ, 7-րդ, 8-րդ)	17
5. Բավարար կենսամակարդակի իրավունք (հոդված 11-րդ).....	28
6. Առողջության պահպանման իրավունքը (հոդված 12-րդ).....	34
7. Հղիության արհեստական ընդհատումը (հոդված 10-րդ)	40
8. Կրթության իրավունք (հոդված 13-րդ)	42
9. Կոռուպցիայի դեմ պայքար.....	46
10. Դատական իշխանության անկախության երաշխիքներ	53
11. Խտրականության դեմ պայքար	58
12. Ընտանեկան բռնության դեմ պայքար.....	63
13. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ	68
13.1. Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ կարծրատիպերը	68
և խտրական մոտեցումները.....	68
13.2. Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը.....	71
13.3 Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը մշակութային կյանքին.....	79
14. Ապահինստիտուցիոնալացումը և ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը.....	80

Ներածություն

1966 թվականի դեկտեմբերի 16-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունել է «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, որը բաց է ստորագրելու, վավերացնելու և միանալու համար: Հայաստանի Հանրապետության համար այն ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 13-ին:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեն մշտադիտարկում է պետության կողմից «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի դաշնագրի կատարումը, որով սահմանվում են մի շարք հիմնարար իրավունքներ, մասնավորապես՝ աշխատանքի, աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների, արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց մեջ մտնելու, սոցիալական ապահովության, ընտանիքի պաշտպանության իրավունքները և բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որը ներառում է բավարար սնունդ, հագուստ ու բնակարան և կյանքի պայմանների անընդհատ բարելավման, ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի, կրթության, մշակութային կյանքին մասնակցելու իրավունքները:

Դաշնագիրը կոչված է ապահովելու ՄԱԿ-ի կանոնադրությամբ հռչակված սկզբունքներին համապատասխան ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը, որն ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է և բխում է անհատին ներհատուկ արժանապատվությունից:

Վավերացնելով միջազգային դաշնագիրը՝ Հայաստանը պարտավորություն է ստանձնել համապատասխանեցնելու իր ներպետական օրենքները և պրակտիկան միջազգային այս փաստաթղթի պահանջներին:

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունը ստորագրվել է 2008 թվականի դեկտեմբերի 10-ին և 2020 սեպտեմբերի 17-ին վավերացվել Հայաստանի կողմից:

Կամընտիր արձանագրությամբ հնարավորություն է ընձեռվում ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեին իրականացնելու Կամընտիր արձանագրությամբ նախատեսված գործառույթներ, մասնավորապես՝ քննարկել կողմ պետության իրավագործության ներքո գտնվող այն անհատների կամ անհատների խմբերի կողմից կամ նրանց անունից կոմիտեին ներկայացված հաղորդագրությունները, որոնցում առկա են պնդումներ այդ կողմ պետության թույլ տված՝ Դաշնագրով սահմանված տնտեսական, սոցիալական ու մշակութային որևէ իրավունքի խախտման գոհ լինելու մասին:

Այսպիսով՝ Միջազգային դաշնագրի և Կամընտիր արձանագրության՝ անդամ պետությունների կողմից կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեն: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն ստեղծվել է Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 1985/17 բանաձևի հիման վրա: ՏՄԻԿ-ը, ի տարբերություն ՄԱԿ-ի մյուս

կոմիտեների, ստեղծվել է ոչ թե դաշնագրի ուժով, այլ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից՝ որպես պետությունների ներկայացրած զեկույցները քննող մարմին¹:

Վերջինս 18 փորձագետից բաղկացած մարմին է, որին անդամ պետությունները պարտավոր են առաջին զեկույցը ներկայացնել Կոնվենցիային միանալուց հետո երկու տարվա ընթացքում, իսկ հաջորդ պարբերական զեկույցները՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ:

Ձեկույցները ուսումնասիրելուց հետո ՏՄՄԿ-ը տվյալ պետությանը ներկայացնում է Եզրափակիչ դիտարկումներ կոնկրետ խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև առաջարկություններ՝ ուղղված այդ խնդիրների լուծմանը:

Ինչպես նշվեց վերևում, բացի պետությունների ներկայացրած զեկույցների քննումից, ՏՄՄԿ-ն իրականացնում է նաև միջպետական հայցերի, անհատական դիմումների քննություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրավունքների կոպիտ խախտումների հետաքննություն՝ վկայության առկայության դեպքում²: ՏՄՄԿ-ը նաև հրապարակում է ՏՄՄԿ-ի ընդհանուր մեկնաբանությունները (general comments)³:

Հայաստանն առաջին զեկույցը ներկայացրել է 1997 թվականի հուլիսին, որին ի պատասխան՝ ՏՄՄԿ-ն իր դիտարկումները հրապարակել է 1999 թվականին:

Այնուհետև՝ 2013 թվականին, ՀՀ Կառավարությունը ներկայացրել է երկրորդ և երրորդ պարբերական զեկույցները, որից հետո՝ 2014 թվականին, ՏՄՄԿ-ը ներկայացրել է իր երկրորդ Եզրափակիչ դիտարկումները ՏՄՄԿ-ի դրույթների վերաբերյալ, որոնցում անդրադարձել է ընդարձակ հարցերի և դրանց վերաբերյալ կատարել է դիտարկումներ ու ներկայացրել առաջարկություններ:

ՏՄՄԿ-ը հրավիրել է Հայաստանին ներկայացնելու իր հաջորդ՝ չորրորդ զեկույցը մինչև 2019 թվականի մայիսի 30-ը և դրանում ներկայացնելու տեղեկություններ 2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում նշված առաջարկությունների կատարման վերաբերյալ:

Սույն զեկույցը կազմվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատարի գրասենյակի (OHCHR) հետ համատեղ իրականացվող «Հայաստանի կողմից ՄԱԿ-ի Եզրափակիչ դիտարկումների իրականացման վերլուծություն և իրազեկվածության բարձրացում» նախագծի շրջանակում:

Ձեկույցի նպատակն է ներկայացնել, թե որքանով է Հայաստանը կատարել և կատարում ՏՄՄԿ-ի՝ 1999 և 2014 թվականների Եզրափակիչ դիտարկումներում տեղ գտած առաջարկությունները, և որոնք են չկատարման խոչընդոտները:

Ուստի զեկույցն ընդգրկում է 1999 թվականից մինչև 2022 թվականի մարտն ընկած ժամանակահատվածը, որի շրջանակում ուսումնասիրվել են ՏՄՄԿ-ի երկու Եզրափակիչ դիտարկումները, վերհանվել են դրանցում ներկայացված առաջարկությունները, և դրանցից յուրաքանչյուրի կատարման վերաբերյալ ներկայացվել են դիտարկումներ, Միջազգային դաշնագրի

¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.ohchr.org/en/treaty-bodies/cescr/introduction-committee>:

² Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.ohchr.org/EN/HRBodies/CRC/Pages/CRCIndex.aspx>:

³ Հասանելի է հետևյալ հղումով՝

https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=en&TreatyID=9&DocTypeID=11:

մարմինների առջև ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ գնահատականներ և առաջարկություններ:

Մեթոդաբանություն

Ձեկույցը կազմելիս նախնառաջ ուսումնասիրվել են ՏՄՄԿ-ի՝ ՏՄՄԿ-ի երկու Եզրափակիչ դիտարկումները, Հայաստանի Կառավարության՝ ՏՄՄԿ-ին ներկայացրած պարբերական հաշվետվությունները, ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 թ. օրակարգում» և դրանում ներառված կայուն զարգացման նպատակները, ոլորտի իրավասու պետական մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների զեկույցները, այդ թվում՝ այլընտրանքային զեկույցները:

Հատուկ ուսումնասիրության են ենթարկվել նաև ՏՄՄԿ-ի ընդհանուր մեկնաբանությունները վերաբերելի խնդրի կամ մտահոգության վերաբերյալ: Օրինակ՝ ՏՄՄԿ-ի 5-րդ ընդհանուր մեկնաբանությունը հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ (25-րդ հոդված), 6-րդ ընդհանուր մեկնաբանությունը տարեց անձանց տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ, 13-րդ ընդհանուր մեկնաբանությունը կրթության իրավունքի վերաբերյալ (13-րդ հոդված), 16-րդ ընդհանուր մեկնաբանությունը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների՝ տղամարդկանց և կանանց կողմից հավասար իրացման վերաբերյալ և այլն:

Հետազոտության ընթացքում հատուկ ուշադրություն են դարձվել ՄԱԿ-ի պայմանագրային այլ մարմինների՝ Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները, որոնք առնչություն են ունեցել ՏՄՄԿ-ի բարձրաձայնած մտահոգություններին, օրինակ՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի 1997, 2002, 2009 և 2016 թվականների Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները, Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի 2000, 2004, 2013 թվականների Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները:

Առանձին ուսումնասիրության առարկա են դարձել նաև ոլորտային խնդիրների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցների պատրաստած հաղորդումները, հրապարակած նյութերը և ուսումնասիրությունները:

Ձեկույցի կազմման ընթացքում անցկացվել են հարցազրույցներ ոլորտի անկախ փորձագետների, իրավասու պետական ու համայնքային մարմինների աշխատակիցների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, փաստաբանների հետ:

Հետազոտության ընթացքում ձեռք բերված տեղեկությունների, փաստաթղթերի և ոլորտի օրենսդրական կարգավորումների համադրման և վերլուծության ընթացքում վերհանվել են ինչպես գործնական խնդիրներ, այնպես էլ օրենսդրական կարգավորման բացեր և թերություններ: Սույն զեկույցում համակարգված ներկայացված են վերհանված խնդիրների կապակցությամբ մասնագիտական վերլուծություններն ու լուծմանն ուղղված առաջարկները:

Ձեկույցը կազմվել է ըստ SUՄԻԿ-ի վերհանած խնդիրների և ոլորտային ուղղությունների, ոչ թե ըստ Կոնվենցիայի առանձին հոդվածների, ինչն ավելի մատչելի կդարձնի զեկույցում ներկայացված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքները:

Մասնավորապես զեկույցի յուրաքանչյուր բաժնի սկզբում ներկայացվում են SUՄԻԿ-ի մտահոգությունները կոնկրետ թեմայի վերաբերյալ և խնդիրների լուծմանն ուղղված առաջարկները:

Դրան հաջորդում է պետության իրականացրած աշխատանքների, ձեռնարկած միջոցների, ինչպես նաև Հայաստանում փաստացի իրավիճակի նկարագրությունը, ապա՝ հետևություններ այն մասին, թե արդյոք SUՄԻԿ-ի տվյալ առաջարկը կատարվել է Հայաստանի կողմից, թե ոչ:

Զեկույցում օգտագործված հապավումները

ԱԱՀՆ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ԵԽ Եվրոպայի խորհուրդ

ԿԳՄՄՆ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ԿԸՀ Կոռուպցիայի ընկալման համաթիվ

ՀԲԻ Համաշխարհային բանկի ինստիտուտ

ՀՄԿ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

ՄԱԿ Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԻԵԴ Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՄԻՀՀ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

ՄՄԾ Միասնական սոցիալական ծառայություն

ՆԱՄԿՈՒ Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ուսուցում

ՏՀԶԿ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

ՏՄՄԻԿ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտե

ՏՄՄԻՄԴ ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր

ՔՀԿ Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ

1. ՏՄԻԿ-ի ներկայացրած դրական զարգացումները

ՏՄԻԿ-ն իր երկու՝ 1999 և 2014 թվականների Եզրափակիչ դիտարկումներում ներկայացնում է ոչ միայն Հայաստանին ուղղված իր մտահոգությունները և առաջարկությունները, այլև կոնկրետ ոլորտներում Հայաստանի դրական զարգացումները:

Մասնավորապես ՏՄԻԿ-ը 1999 թվականի Եզրափակիչ դիտարկումներում ընդգծում է ՏՄԻՄԴ-ով նախատեսված իր պարտավորությունները կատարելու համար մասնակից պետության պատրաստակամությունը և երախտագիտությամբ ընդունում է Հայաստանի Կառավարության ջանքերը՝ հաղթահարելու բազմաթիվ դժվարություններ, մասնավորապես բնական աղետների և զինված հակամարտությունների հետևանքները, որոնք հանգեցրել են նրա տնտեսական, սոցիալական և քաղաքական վիճակի վատթարացմանը:

ՏՄԻԿ-ը գոհունակությամբ նշում է նաև փախստականների և Հայաստանի քաղաքացիների նկատմամբ հավասար վերաբերմունքը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացման հարցում:

2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում ՏՄԻԿ-ը ողջունում է պետության կողմից մարդու իրավունքների վերաբերյալ հետևյալ միջազգային փաստաթղթերի վավերացումը.

- «Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին» կոնվենցիա, 2011 թվական,
- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, 2010 թվական,
- «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրություն, 2006 թվական,
- «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի կամընտիր արձանագրություն, 2006 թվական,
- «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի՝ «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին», «Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող» կամընտիր արձանագրություններ, 2005 թվական,
- «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիա, 2000 թվական, լրացնող մի քանի արձանագրություն, 2003 և 2012 թվականներ,
- Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 29, 87, 98, 105, 138 և 182 կոնվենցիաներ, 2003, 2004 և 2006 թվականներ,
- «Օլախտի դեմ պայքարի» Առողջապահության համաշխարհային կազմակերպության շրջանակային կոնվենցիա, 2004 թվական,
- Հաագայի թիվ 28, 33 և 34 կոնվենցիաներ, 2007 թվական,
- «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիա, 2007 թվական:

2. Ուշադրության արժանի հիմնական ոլորտները

2.1 ՏՄԻՄԴ-ի իրավական կարգավիճակը ՀՀ օրենսդրության մեջ

ՏՄԻԿ-ը մտահոգված է Հայաստանի ներպետական իրավական համակարգում ՏՄԻՄԴ-ի իրավական կարգավիճակով:

ՏՄԻԿ-ն ավստասանք է հայտնում, որ պատվիրակությունը չի կարողացել պարզաբանել ՏՄԻՄԴ-ի ամրագրումը Հայաստանի օրենսդրության մեջ, ոչ էլ կոնկրետ հղումներ տալ այն գործերին, որոնց դեպքում ՏՄԻՄԴ-ը վկայակոչվել է ազգային դատարաններում⁴:

Այսպես, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ամրագրված են ՀՀ-ի կողմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթերում⁵:

2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ամրագրված էին 2-րդ գլխում՝ մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների շարքում: Դրանց թվում էին անվտանգ աշխատանքային պայմանների, սոցիալական ապահովության, բժշկական սպասարկման, բավարար կենսամակարդակի, բնակարանի, մշակութային կյանքին մասնակցելու, աշխատանքի ազատ ընտրության, գործադուլի, կրթության, սեփականության և այլ իրավունքներ:

2015 թվականի փոփոխություններով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների զգալի մասը՝ սոցիալական ապահովության, առողջության պահպանման, արժանապատիվ կյանքի, նվազագույն աշխատավարձի և աշխատանքի բավարար պայմանների, բնակարանի, մշակութային կյանքին մասնակցելու իրավունքները, ամրագրում չստացան Սահմանադրության 2-րդ գլխում և դադարեցին «հիմնական իրավունքներ» համարվելուց: Դրանք մասնակի ամրագրվեցին Սահմանադրության 3-րդ գլխում որպես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքներ և պետության քաղաքականության հիմնական նպատակներ: Իրավունքների մի շարք էլ՝ բավարար կենսամակարդակի, ներառյալ կենսապայմանների բարելավման, գիտության նվաճումներից օգտվելու և առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքները, ընդհանրապես հանվեցին Սահմանադրության տեքստից⁶:

Մինևս ժամանակ կրթության, սեփականության, աշխատանքի ազատ ընտրության և գործադուլի իրավունքները պահպանվեցին Սահմանադրության 2-րդ գլխում՝ որպես անմիջականորեն գործող հիմնական իրավունքներ:

⁴ Տե՛ս ՏՄԻԿ-ի 1999 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.refworld.org/country_CESCR_ARM_3ae6ae668.0.html հղումով:

⁵ Տե՛ս ՄԱԿ-ի ՏՄԻՄԴ-ը, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, «Մարդու իրավունքների և ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունը, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան և այլն:

⁶ Տե՛ս «ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների երաշխիքների վերանայում և կատարելագործում» հետազոտությունը <https://rb.gy/r5rn5d> հղումով:

Այսպիսով՝ Սահմանադրության 2-րդ գլխից դուրս մնացած իրավունքները դադարեցին «հիմնական իրավունքներ» համարվելուց, ինչի հետևանքով դրանք չունեն Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված անմիջական գործողություն, վերջիններիս նկատմամբ կիրառելի չեն Սահմանադրության 78-80-րդ հոդվածներում ամրագրված համաչափության, որոշակիության, ելության անխախտելիության սկզբունքները, ինչպես նաև Սահմանադրության 81-րդ հոդվածը:

SUՄԻՄԴ-ը կոչված է ապահովելու ՄԱԿ-ի կանոնադրությամբ հռչակված սկզբունքներին համապատասխան ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անքակտելի իրավունքների ճանաչումը, որն ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է և բխում է մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների սահմանադրական ամրագրումը հնարավորություն է տալիս նորմատիվ իրավական ակտերի վիճարկմամբ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելիս դրանք ներառել ներպետական օրենսդրության մեջ և անուղղակիորեն որոշել դրանց համապատասխանությունը միջազգային փաստաթղթերին: Այն նաև կնպաստի դատական պրակտիկայում SUՄԻՄԴ-ով նախատեսված իրավունքների կիրառմանը: Սահմանադրական դրույթների՝ որպես պետության կողմից ձեռնարկվող պատշաճ, այդ թվում օրենսդրական միջոցի ամրագրմանը SUՄԻԿ-ն անդրադարձել է իր ընդհանուր մեկնաբանությամբ⁷:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքները բավարար չեն: 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով սահմանադրորեն ամրագրված չեն բավարար կենսամակարդակի, ներառյալ բնակարանի կամ կենսապայմանների բարելավման, գիտության նվաճումներից օգտվելու, մշակութային կյանքին մասնակցելու իրավունքները: Հետևաբար տեղի է ունեցել իրավունքի պաշտպանության բարձր մակարդակից ցածր մակարդակի անցում, ինչը ևս հակասում է SUՄԻԿ-ի դիտարկումներին:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների՝ դատական կարգով պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ գործող Սահմանադրության 2-րդ և 3-րդ գլուխներում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ամրագրումների հետևանքով սահմանափակվել է տնտեսական, սոցիալական իրավունքների սահմանադրականության վիճարկման հնարավորությունը: Մասնավորապես որոշ իրավունքներ ամրագրվել են որպես պետության քաղաքականության նպատակներ:

Կարևոր է արձանագրել, որ ներպետական դատարանների կողմից սոցիալ-տնտեսական իրավունքների վերաբերյալ դատական հայցերի քննության և որոշումների կայացման հարցում հարուստ փորձ ձևավորել է ՀՀ Սահմանադրական դատարանը⁸:

SUՄԻՄԴ-ի նպատակներին հասնելու և դրա դրույթները կիրարկելու համար SUՄԻՄԴ-ի կամընտիր արձանագրության վավերացմամբ Հայաստանն, ի թիվս այլնի, ստանձնում է պարտավորություններ՝ ընդունելու անհատական հաղորդումներ (կոմունիկացիաներ) SUՄԻՄԴ-ի դրույթների խախտումների մասին, պատշաճ ուշադրություն դարձնելու իր իրավագրության ներքո

⁷ Տե՛ս SUՄԻԿ-ի թիվ 3 ընդհանուր մեկնաբանությունը https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2fCESCR%2fGEC%2f4758&Lang=en հղումով:

⁸ Առավել մանրամասն տե՛ս նույն տեղում՝ <https://rb.gy/r5rn5d> հղումով:

գտնվող անձանց բողոքների վերաբերյալ SUՄԻԿ-ի տեսակետներին և առաջարկություններին և SUՄԻԿ ներկայացնելու գրավոր պատասխան, այդ թվում՝ տեղեկություններ SUՄԻԿ-ի տեսակետների և առաջարկությունների լույսի ներքո ձեռնարկված և նախատեսված ցանկացած գործողության վերաբերյալ:

2.2 Վիճակագրական տվյալների բացակայություն

SUՄԻԿ-ն իր՝ 1999 և 2014 թվականների Եզրափակիչ դիտարկումներում հայտնել է մտահոգություն այն մասին, որ Հայաստանը չի կարողացել ավելի մանրամասն տեղեկատվություն և կոնկրետ փաստեր ու վիճակագրություն տրամադրել տարբեր ոլորտների վերաբերյալ^{9,10}:

Մասնավորապես 1999 թվականի Եզրափակիչ դիտարկումներում նշվում է, որ SUՄԻԿ-ին չեն տրամադրվել կոնկրետ տվյալներ և վիճակագրություն, որոնք համարժեք կերպով արտացոլում են SUՄԻՄԴ-ի 6-8-րդ հոդվածների կատարման փաստացի կարգավիճակը, այն է՝ որոշակի ժամանակահատվածում գործազրկության մակարդակի աճը կամ նվազումը և աշխատողների ու նրանց ընտանիքների նվազագույն ապրուստի ապահովման համար նվազագույն աշխատավարձի համապատասխանությունը:

Վերահաստատելով իր դիրքորոշումը նաև 2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում՝ SUՄԻԿ-ը նշում է, որ շատ գործազուրկներ գրանցված չեն որպես այդպիսին և հետևաբար արտացոլված չեն գործազրկության պաշտոնական վիճակագրության մեջ¹¹:

Բացի այդ՝ SUՄԻԿ-ն ավստոսանք է հայտնում է սննդի, բնակարանի, առողջության և կրթության իրավունքների իրացման վերաբերյալ վիճակագրության բացակայության համար:

Ուստի SUՄԻԿ-ը 1999 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումներում Հայաստանի Կառավարության ուշադրությունն է հրավիրում իրենց առաջիկա պարբերական գեկույցում տնտեսության էվոլյուցիայի, անձնական եկամուտների և երկրում սննդի, բնակարանային, առողջապահության և կրթության վիճակի վերաբերյալ անհրաժեշտ աջակցող վիճակագրական տվյալներ ներառելու անհրաժեշտությանը: Պետության ներկայացրած հաջորդ գեկույցում ևս SUՄԻՄԴ-ի ոլորտների վերաբերյալ վիճակագրական տվյալները թեչի են ներկայացվել:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ կոնկրետ ոլորտների վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայությունը հանգեցրել է նրան, որ SUՄԻԿ-ը չի կարողացել բավարար գնահատել և ներկայացնել առկա իրական վիճակը:

SUՄԻԿ-ի նշած ոլորտների վերաբերյալ վիճակագրական տվյալների մասին մանրամասն ներկայացվում է սույն փաստաթղթի առանձին բաժիններում:

⁹ Տե՛ս SUՄԻԿ-ի 1999 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները <https://www.refworld.org/country,,CESCR,,ARM,,3ae6ae668,0.html> հղումով:

¹⁰ Տե՛ս SUՄԻԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

¹¹ Տե՛ս նույն տեղում՝ https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

3. Կանանց զբաղվածությունը և մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին

1999 թվականի Եզրափակիչ դիտարկումներում SUՄԻԿ-ը մտահոգված է այն փաստով, որ չնայած օրենքի առջև տղամարդկանց և կանանց հավասարությանը՝ գործնականում դեռևս կան հակասություններ տղամարդկանց և կանանց տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից օգտվելու հարցում: Օրինակ, չնայած կանանց բարձր կրթական մակարդակին և մասնագիտական որակավորմամբ կանանց մեծ թվին, կանանց գործազրկության մակարդակը դեռևս բարձր է, և բարձր պաշտոններում, հատկապես խորհրդարանում ներգրավվածության տոկոսը համեմատաբար ցածր է¹²:

2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում SUՄԻԿ-ը վերահաստատել է իր մտահոգությունը ազգային և տեղական կառավարման մարմիններում և այլ պատասխանատու պաշտոններում կանանց ցածր ներգրավվածության վերաբերյալ՝ չնայած գենդերային մասնակցության կապակցությամբ Ընտրական օրենսգրքով նախատեսված քվոտաներին և ձեռնարկված այլ միջոցառումներին¹³:

Ըստ այդմ՝ SUՄԻԿ-ը պահանջում է Կառավարությանը միջոցներ ձեռնարկել, որոնք կնպաստեն կանանց զբաղվածությանը և նրանց ավելի մեծ մասնակցությանը պետական կառավարման բարձրաստիճան պաշտոններում, ուսումնական հաստատություններում և գիտահետազոտական կենտրոններում:

2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում SUՄԻԿ-ը մտահոգված է նաև տնտեսության մեջ ուղղահայաց և հորիզոնական գենդերային սեգրեգացիայի (զատում) բարձր մակարդակով և տնտեսության ցածր վարձատրվող ոլորտներում կանանց կենտրոնացվածությամբ՝ չնայած օրենքի առջև կանանց և տղամարդկանց հավասարությանը: Բացի այդ՝ SUՄԻԿ-ը մտահոգված է վարձատրության գենդերային խզվածքով՝ հաշվի առնելով, որ 2012 թվականին կանայք ստանում էին տղամարդկանց վարձատրության միայն մոտ 60 %-ը (հոդվածներ 6 և 7):

Ըստ այդմ՝ SUՄԻԿ-ն առաջարկում է մասնակից պետությանը՝ ա) ընդլայնել կանանց հնարավորությունները և իրավունքներն աշխատանքային քաղաքականության գենդերային զգայունության հիմքով՝ տնտեսության բոլոր ոլորտներում կանանց զբաղվածության հասանելիությունը մեծացնելու համար, և ապահովել աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց նկատմամբ հավասար վերաբերմունք՝ ներառյալ բոլոր ոլորտներում համարժեք աշխատանքի համար հավասար վարձատրություն, բ) իրազեկության բարձրացման և այլ միջոցառումների միջոցով արդյունավետորեն վերացնել սոցիալական և մշակութային խոչընդոտները, որոնք բացասաբար են ազդում տնտեսության բոլոր ոլորտներում, մասնավորապես՝ բարձր վարձատրվող աշխատավայրում կանանց կարգավիճակի բարելավման հնարավորությունների վրա:

¹² Տե՛ս SUՄԻԿ-ի 1999 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները <https://www.refworld.org/country,,CESCR,,ARM,,3ae6ae668,0.html> հղումով:

¹³ Տե՛ս SUՄԻԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

Ինչպես ցույց են տալիս սոցիալական հարցումները, հայաստանյան ընկերությունների մեծ մասը վարում են տղամարդիկ, որովհետև «տան գործերը և երեխաների խնամքը կանխարգելում են ձեռներեցությամբ կանանց զբաղվել»-ը (տղամարդկանց 48.4 %-ը, կանանց 39.2 %-ը)¹⁴: Սրան հաջորդող պատճառներից են «տղամարդիկ ավելի մեծ հավանականությամբ են ռիսկի գնում իրենց բիզնեսը սկսելիս» (տղամարդկանց 36.2 %-ը և կանանց 27.4 %-ը), «առկա ավանդույթներն ու սովորույթները սահմանափակում են կանանց մասնագիտական ձգտումները» (տղամարդկանց 30.1 %-ը և կանանց 26.1 %-ը), և «իրենց բիզնեսներն անգամ վարելիս կանայք շարունակում են հենվել տղամարդկանց ուղղորդման, հովանավորության կամ հավանության վրա» (տղամարդկանց 28.2 %-ը և կանանց 28.7 %-ը)¹⁵:

Վիճակագրությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տղամարդկանց 36 %-ը և կանանց 25.5 %-ը կարծում են, որ «ներկա ավանդույթներն ու սովորույթներն» են առաջին հերթին խոչընդոտ դառնում կանանց ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար: Սրան հաջորդում են «համապատասխան հմտություններ, գիտելիքի և փորձի պակաս» (տղամարդկանց 16.1 %-ը և կանանց 19.9 %-ը), «հարկերի և հաշվապահական բարդություններից վախ» (տղամարդկանց 13.1 %-ը և կանանց 18 %-ը) և «շուկայավարման հնարավորությունների բացակայություն» (տղամարդկանց 16.4 %-ը և կանանց 12.3 %-ը) պատճառները¹⁶:

ԱՄՆ ՄԶԳ-ի 2019 թվականի «Հայաստան. զենդերային վերլուծություն»-ը նկատում է, որ ՓՄՁ-ներում, չնայած բարձրագույն կրթության բնագավառում երիտասարդ կանանց նվաճումներին, երիտասարդ տղամարդիկ կրկնակի ավելի մեծ հավանականությամբ են զբաղեցնում կառավարչական պաշտոններ: Ավելին՝ թե՛ մասնավոր, թե՛ հանրային հատվածներում առաջատար պաշտոններ զբաղեցնողների մեջ տղամարդկանց թիվն ավելի մեծ է (70.5 %՝ 29.5 %-ի դիմաց)¹⁷:

Օրինակ՝ պատկերն այլ է ՏՏ ոլորտում, որտեղ, ըստ էության, կարծրատիպներն ավելի քիչ են: Այստեղ նպաստավոր են համեմատաբար բաց աշխատանքային միջավայրը և միջազգային կառույցներին առնչությունները (օրինակ՝ պատվիրակված աշխատանքը):

Բայցևայնպես նույն այս ոլորտում ղեկավար պաշտոններում կանանց ներկայությունը նշանակալիորեն ավելի սահմանափակ է, այն է՝ միայն 11 %¹⁸:

Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների՝ 2021 թվականի հունիսի 20-ին արտահերթ խորհրդարանական ընտրությունների թեկնածուների 34.58 %-ը կին է, իսկ 65.42 %-ը՝ տղամարդ¹⁹:

¹⁴ Տե՛ս https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE_Diagnostic_Report_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKImC8h հղումով, էջ 11:

¹⁵ Տե՛ս https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE_Diagnostic_Report_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKImC8h հղումով, էջ 11:

¹⁶ Տե՛ս https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE_Diagnostic_Report_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKImC8h հղումով, էջ 11-12:

¹⁷ Տե՛ս https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE_Diagnostic_Report_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKImC8h հղումով, էջեր 58-59:

¹⁸ Տե՛ս https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE_Diagnostic_Report_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKImC8h հղումով, էջ 59:

¹⁹ Տե՛ս <https://res.elections.am/images/doc/Statistics2021.pdf> հղումով, էջ 6:

Ընդ որում՝ Ազգային ժողովի ընտրված 107 պատգամավորից միայն 35-ն է կին, և ի տարբերություն նախորդ գումարումների՝ այս անգամ ոչ մի կին պատգամավոր չի ընտրվել որպես ԱԺ նախագահի տեղակալ:

ՀՀ Կառավարության բարձր պաշտոններում ևս կանանց մասնակցության թիվը դեռևս փոքր է 2021 թվականի ընթացքում: Կառավարության կազմում երկու փոխվարչապետներից և տասներկու նախարարներից միայն մեկն է կին²⁰:

Կանանց պատշաճ ներգրավվածության խնդիրներ առկա են նաև դատական համակարգում: ԵԽ-ի Գործընկերություն հանուն լավ կառավարման 2019-2021 թվականների «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը» ծրագրի շրջանակում ներկայացված զեկույցի շրջանակում ակնհայտորեն ի ցույց են դրվել կանանց ներգրավվածության հիմնահարցերը ՀՀ դատական համակարգում:

Մասնավորապես Հայաստանում դատավորների ընդհանուր թիվը 244 է, նրանց 26.6 %-ը՝ իգական, 73.4 %-ը արական սեռի ներկայացուցիչներ են²¹: Ավելին՝ բարձր ատյաններում կին դատավորների տոկոսային մասնաբաժինը նվազում է: Առաջին ատյանի 183 դատավորների թվում 27.3 %-ը կանայք են, 72.7 %-ը՝ տղամարդիկ, երրորդ ատյանի 44 դատավորների թվում 25 %-ը կանայք են, 75 %-ը՝ տղամարդիկ, երրորդ ատյանի 17 դատավորի թվում կանայք ընդամենը 24 %-ն են, տղամարդիկ՝ 76 %-ը²²:

Հարկ է նշել, որ ընդհանուր իրավասության և մասնագիտացված առաջին ատյանի դատարանների կազմերում կան տարբերություններ. կին դատավորների տոկոսային մասնաբաժինը շատ ավելի ցածր է մասնագիտացված դատարաններում: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 147 դատավորի թվում կանայք 29.9 %-ն են, տղամարդիկ՝ 70.1 %-ը:

Առաջին ատյանի մասնագիտացված դատարաններում 36 դատավորների թվում կանայք ընդամենը 16.7 %-ն են, տղամարդիկ՝ 83.3 %-ը²³:

Ինչպես երևում է վիճակագրական տվյալներից, կա զգալի անհավասարակշռություն բոլոր երեք ատյաններում, որոնցում կանայք փոքրամասնություն են, և ապահովված չէ Եվրոպայի խորհրդի 2003 թվականի հանձնարարականում նախատեսվող 40 %-ի կրիտիկական զանգվածը²⁴:

Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է դատավորների օգնականներին, ապա գենդերային անհավասարակշռություն կա հոգուտ կանանց. 257 օգնականի թվում կանայք 66.1 %-ն են, տղամարդիկ՝ 33.9 %-ը: Ինչ վերաբերում է դատական համակարգում բարձր պաշտոններին, ապա

²⁰ Տե՛ս <https://www.gov.am/am/structure/> հղումով:

²¹ Տե՛ս <https://rm.coe.int/arm-prems-080621-arm-2651-gender-equality-in-the-judiciary-of-armenia-/1680a3ef53> հղումով էջ 36:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, էջ 37:

²⁴ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003 թ. հանձնարարականը «Քաղաքական և հանրային որոշումների կայացման մեջ կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին». հասանելի է <https://rm.coe.int/1680519084> հղումով:

դատարանների և պալատների 18 նախագահներից ընդամենը 2-ն են կին, այսինքն՝ բարձր պաշտոններում կանայք ընդամենը 11.1 %-ն են, իսկ տղամարդիկ՝ 88.9 %-ը²⁵:

Վիճակագրական տվյալների և ոլորտի խնդիրների համալիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանայք դեռևս բավարար կերպով ներկայացված չեն բարձր պաշտոններում, և հասարակությունում առկա են կարծրատիպեր կանանց՝ որպես որոշում կայացնողների դիտարկման հարցում: Այս մասին նշվում է նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներում²⁶:

Այսպիսով՝ Կոմիտեի առաջարկությունը կատարվում է մասամբ:

4. Աշխատանքային իրավունքը (հոդված 6-րդ, 7-րդ, 8-րդ)

Գործազրկության մակարդակը Հայաստանում

2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում ՏՄԻԿ-ը մտահոգված է մասնակից պետությունում գործազրկության բարձր մակարդակով, հատկապես գյուղական բնակավայրերում, և պետական միջոցների անբավարար հատկացումներով, որոնք ուղղված են պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսուցման և զբաղվածության քաղաքականության ակտիվացմանը: ՏՄԻԿ-ը նաև ավստանք է հայտնել, որ շատ գործազուրկներ գրանցված չեն որպես այդպիսին և հետևաբար արտացոլված չեն գործազրկության պաշտոնական վիճակագրության մեջ: ՏՄԻԿ-ը մտահոգված է նաև ոչ ֆորմալ զբաղվածության մեծ հատվածի առկայությամբ, քանի որ գնահատվում է, որ աշխատողների 40 %-ը զբաղված է տնտեսության ոչ ֆորմալ հատվածում, ինչը փաստորեն խոչընդոտում է նրանց տնտեսական և սոցիալական իրավունքների իրացումը:

Ըստ այդմ՝ ՏՄԻԿ-ը մասնակից պետությանը խնդրում է. ա) հավաքել և ընդհանրացնել գործազրկության վերաբերյալ թարմացված տվյալներ ըստ սեռի, տարիքի, քաղաքային և գյուղական բնակավայրերի և ազգային պատկանելության՝ գործազրկության նվազեցմանն ուղղված հասցեական միջոցներ ձեռնարկելու համար, բ) ձեռնարկել արդյունավետ միջոցներ տնտեսության ոչ ֆորմալ հատվածը կարգավորելու ուղղությամբ, ոչ ֆորմալ հատվածի կրճատման ուղղությամբ ձեռնարկված միջոցների արդյունքների մասին տրամադրել տեղեկություններ և միևնույն ժամանակ դրանով ապահովել ոչ ֆորմալ հատվածի աշխատողների համար հիմնական ծառայություններից և սոցիալական պաշտպանությունից օգտվելու հասանելիություն, գ) ներկայացնել այդ միջոցների արդյունքներ հաջորդ պարբերական զեկույցում²⁷:

²⁵ Տե՛ս <https://rm.coe.int/arm-prems-080621-arm-2651-gender-equality-in-the-judiciary-of-armenia-/1680a3ef53> հղումով էջ 37:

²⁶ Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի Եզրափակիչ դիտարկումներ, 2016 թվական (CEDAW/C/ARM/CO/5-6), կետեր 20, 21:

²⁷ Տե՛ս ՏՄԻԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

SUՄԻԿ-ը մտահոգված է 2014 թվականի հունվարի 1-ից գործազրկության նպաստի վերացման հանգամանքով՝ Ազգային ժողովի կողմից «Զբաղվածության մասին» օրենքում փոփոխությունների ընդունումից հետո:

Ակնկալվում է, որ այս միջոցն առաջին հերթին ազդեցություն կունենա այն կանանց վրա, որոնք ստանում էին գործազրկության նպաստ, որը երկու անգամ գերազանցում էր տղամարդկանց նպաստը: SUՄԻԿ-ը նաև մտահոգված է, որ աջակցությունը, որը կտրամադրվի նրանց, որոնք այլևս նպաստ չեն ստանա, հիմնված կլինի նյութական կարիքների և ոչ թե մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման վրա (հոդվածներ 9 և 11):

SUՄԻԿ-ն առաջարկում է մասնակից պետությանը հատուկ միջոցներ ձեռնարկել պաշտպանելու այն անձանց, որոնց գործազրկության նպաստները վերացվում են՝ SUՄԻՄԴ-ի 9-րդ և 11-րդ հոդվածների համաձայն ստանձնած պարտավորություններին համապատասխան, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնել կանանց վրա դրա անհամաչափ ազդեցության վերացմանը²⁸:

Կառավարությունն իր գրավոր պատասխաններով, ինչպես նաև երկխոսության ընթացքում բավարար հստակությամբ չի նրեկայացրել Հայաստանում զբաղվածության ստույգ իրավիճակը: Մասնավորապես SUՄԻԿ-ին չեն տրամադրվել կոնկրետ տվյալներ և վիճակագրություն, որոնք համարժեք կերպով արտացոլում են SUՄԻՄԴ-ի 6-8-րդ հոդվածների կատարման փաստացի կարգավիճակը, ինչպիսին է՝ որոշակի ժամանակահատվածում գործազրկության մակարդակի աճը կամ նվազումը և աշխատողների ու նրանց ընտանիքների նվազագույն ապրուստի ապահովման համար նվազագույն աշխատավարձի համապատասխանությունը:

Անկախությունից հետո՝ 2000-ականների սկզբին, Հայաստանում արձանագրված տնտեսական աճի կարճատև ժամանակաշրջանն ընդհատվել է համաշխարհային ֆինանսական ճգնաժամով. աճի տեմպերը դանդաղել են, և այն այլևս ներառական բնույթ չի կրել՝ ուղեկցվելով անհավասարության մակարդակի աճով և քաղաքային ու գյուղական բնակավայրերի միջև անհավասարության կայուն մակարդակի պահպանմամբ: Աղքատության մակարդակը ևս աճի նման միտում է գրանցել. 2004-2008 թվականների կտրուկ նվազումից հետո աղքատության մակարդակը դանդաղորեն աճել է՝ 2018 թվականին հասնելով 23.5 %-ի: 2018 թվականին երեխաների մեկ երրորդը (29.2 %) ապրել է աղքատության մեջ: Բնակչության որոշ խմբեր, ինչպիսիք են երեխաները (հատկապես 0-5 և 15-17 տարեկան), երեք կամ ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսությունները և կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները, հատկապես խոցելի են աղքատության նկատմամբ: Աղքատությունը բազմաչափ երևույթ է և տարբեր կերպ է դրսևորվում՝ շոշափելով կյանքի տարբեր կողմերը, ինչպիսիք են սպառումը, պարենային ապահովությունը, առողջությունը, կրթությունը, պաշտպանությունը, անվտանգությունը, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքները: Հայաստանը ծանր ժողովրդագրական իրավիճակում է՝ պայմանավորված ծնելիության անկմամբ, բնակչության ծերացմամբ և զանգվածային արտագաղթով, ինչը ճնշում է տնտեսական աճը և մեծացնում առողջապահությանը, կենսաթոշակներին ու սոցիալական ծառայություններին ուղղված ծախսերի ծավալը: Դա նշանակում է, որ Հայաստանը պետք է իր բնակչության ավելի լայն զանգվածներին

²⁸ Նույն տեղում:

ներգրավի զբաղվածության մեջ՝ հատուկ ուշադրություն դարձնելով բնակչության խոցելի խմբերին և նրանց ընդգրկվածությանը ֆորմալ զբաղվածության մեջ:

Պետք է նաև խրախուսել ընտանիքների ամրապնդմանն ուղղված քաղաքականությունների իրականացումը, որոնք աջակցում են ընտանիքների կենսամակարդակի բարելավմանը և օգնում նրանց՝ հավասարակշռելու աշխատանքային և խնամքի պարտականությունները և դրանով իսկ հնարավորություն տալու ծնողներին՝ իրականացնելու ընտանիքի պլանավորման իրենց մտադրությունները: Գենդերային անհավասարությունները, հատկապես աշխատուժի մեջ կանանց մասնակցության ցածր մակարդակը և կանանց ու տղամարդկանց աշխատավարձերի միջև մեծ տարբերությունը, ավելի են դժվարացնում երկրի աճի հեռանկարները: Մրան զուգահեռ առողջապահության և կրթության ոլորտներում դեռևս կան լուրջ խնդիրներ. կրթության որակը շարունակում է մնալ ցածր, իսկ ոչ ֆորմալ առողջապահական ծախսերը՝ բարձր: Նշված երկու ոլորտների պետական ֆինանսավորման ծավալները տարիներ շարունակ ցածր են եղել: Կրթության կամ առողջապահության ոլորտների համեմատ՝ սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղված ֆինանսավորման ծավալները համեմատաբար բարձր են, սակայն ցածր են ՏՀԶԿ-ի միջին ցուցանիշի համեմատ: Միջոցների առյուծի բաժինն ուղղվում է կենսաթոշակների և այլ դրամական նպաստների վճարմանը, մինչդեռ ծառայությունները բավարար չափով չեն ֆինանսավորվում:

Այսպես՝ 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով վերացվեց գործազրկության նպաստի ինստիտուտը, որը փոխարինվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության կողմից իրականացվող «ակտիվ» ծրագրերով:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության՝ 2016 թվականի դեկտեմբերի դրությամբ գրանցված գործազուրկների թիվը եղել է 80.492, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 4,5 %-ով: Հարկ է նշել, որ գրանցված գործազուրկներից 53.088-ը կանայք են, 19.078-ը՝ երիտասարդներ, իսկ 29.747-ը՝ գյուղաբնակներ²⁹:

Միաժամանակ բազմաթիվ քաղաքացիներ դժգոհություն են հայտնել առ այն, որ տարիներ շարունակ գրանցված լինելով Զբաղվածության պետական ծառայության տարածքային կենտրոններում՝ աշխատանքի որևէ առաջարկ չեն ստացել, որպես պատճառ նշվել է, մասնավորապես՝ նման մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը կամ աշխատանք փնտրող անձի տարիքը: Ընդ որում՝ 2016 թվականի դեկտեմբերի դրությամբ պաշտոնապես գրանցված գործազուրկ անձանցից 29.858-ն աշխատանք է փնտրում 1-3 տարի, իսկ 23.727-ը՝ 3 տարուց ավելի³⁰:

Այս կապակցությամբ հատկանշական է, որ ՄԱԿ-ի ՏՄՄԻՄԴ-ի 19-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ «բացի լիարժեք, արդյունավետ և ազատորեն ընտրված

²⁹ Տե՛ս http://armstat.am/file/article/sv_12_16a_141.pdf հղումով:

³⁰ Նույն տեղում:

զբաղվածության խթանումից՝ (...) աշխատանքը կորցնելու դեպքում անձին պետք է վճարվի համապատասխան գործազրկության նպաստ»³¹:

Հայաստանը դեռևս չի վավերացրել Աշխատանքի միջազգային կազմակերպության սոցիալական քաղաքականության մասին թիվ 117 կոնվենցիան:

Հատկանշական է, որ Աշխատանքի միջազգային կազմակերպության փաստաթղթերում հստակ արձանագրվում է, որ սոցիալական ապահովության համակարգերը (social protection floors), այդ թվում՝ գործազրկության նպաստը, ապրուստի համար անհրաժեշտ հիմնական եկամտային երաշխիքներ են³² առնվազն պետության սահմանած նվազագույն շեմի շրջանակում:

Միաժամանակ «Գործազրկության նպաստի համակարգերի վերաբերյալ» ԱՄԿ-ի 2000 թվականի առաջարկություններում նույնպես հստակ շեշտվում է, որ պետությունում գործազրկության նպաստի չափը պետք է բավարարի ապրուստի համար անհրաժեշտ նվազագույն ծախսերը³³:

Վերոնշյալի հաշվառմամբ պետք է արձանագրել, որ զբաղվածության ծրագրերը չեն կարող փոխարինել գործազրկության դեպքում անձին տրամադրվող սոցիալական ապահովության միջոցներին:

Ըստ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի՝ գործազուրկ է համարվում տարիքային կենսաթոշակի իրավունք սովորաբար չլրացած՝ աշխատանք փնտրող և զբաղվածություն համարվող գործունեության որևէ տեսակով չզբաղված անձը, որը աշխատանք գտնելու նպատակով հաշվառված է Զբաղվածության պետական գործակալության տարածքային որևէ կենտրոնում, ստացել է գործազուրկի կարգավիճակ և պատրաստակամ է անցնելու հարմար աշխատանքի:

Զբաղվածության ապահովման և աշխատանքային ներուժի զարգացման վարչության տվյալների համաձայն՝ 2022 թվականի մայիսի 1-ի դրությամբ ՄՄՕ տարածքային կենտրոններում հաշվառված է 80.4 հազար աշխատանք փնտրող, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 10.8 %-ով³⁴:

Աշխատանք փնտրողների 40.2 %-ը կամ 32.3 հազարը նախորդ տարվա 34.0 հազարի փոխարեն, գյուղաբնակներն են:

Աշխատանք փնտրողների 68.6 %-ը կամ 55.1 հազարը գործազուրկներն են: Այս ցուցանիշը 2021 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.4 %-ով: Գործազուրկների 64.0 %-ը կամ 35.3 հազարը կանայք են, 17.2 %-ը կամ 9.5 հազարը՝ երիտասարդներ, իսկ 4.4 %-ը կամ 2.4 հազարը՝ հաշմանդամություն ունեցող անձինք³⁵:

ՄՄՕ տարածքային կենտրոններում հաշվառված են 23.1 հազար առաջին անգամ աշխատանք փնտրողներ, որոնցից 34,5 %-ը 16-29 տարեկան երիտասարդներն են:

³¹ Տե՛ս http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E/C.12/GC/19&Lang=en հղումով:

³² Տե՛ս http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/conclusions/State/Georgia2013_en.pdf հղումով:

³³ Տե՛ս http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/conclusions/State/Bulgaria2009_en.pdf հղումով:

³⁴ Տե՛ս <https://employment.am/am/40/free.html> հղումով:

³⁵ Նույն տեղում:

Ըստ կրթական կազմի բաշխվածության՝ 12.7 %-ը բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցող գործազուրկներն են, 17.0 %-ը՝ միջին մասնագիտական կրթություն ունեցողները, 4.9 %-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողները, 55.2 %-ը՝ ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողները, 10.2 %-ը՝ հատուկ ընդհանուր, հիմնական ընդհանուր և տարրական կրթություն ունեցողները:

Գործազուրկների մեջ դեռևս մեծ է բարձրագույն կրթություն ունեցող՝ հումանիտար գիտությունների, կրթության և մանկավարժության, տնտեսագիտության և կառավարման, միջին մասնագիտական կրթություն ունեցող՝ կրթության, առողջապահության, տնտեսագիտության և կառավարման, սպասարկման, նախնական մասնագիտական կրթություն ունեցող՝ արվեստի և դիզայնի, էկոնոմիկայի և ղեկավարման, տրանսպորտային միջոցների, թեթև արդյունաբերության որակավորում ունեցող մասնագետների թիվը:

Նրանց 65.2 %-ը մասնագիտություն չունեցող անձինք են:

Ըստ գործազրկության տևողության՝ 27.3 %-ը 1-3 տարի գործազրկության տևողություն ունեցող գործազուրկներն են, 47.9 %-ը՝ 3 տարուց ավելի գործազրկության տևողություն ունեցողները, 24.8 %-ը՝ մինչև 1 տարվա գործազրկության տևողություն ունեցողները:

Ըստ տարիքային կազմի՝ 17.2 %-ը 16-29 տարեկան, 43.1 %-ը՝ 30-44 տարեկան, 20.6 %-ը՝ 45-54 տարեկան, 19.1 %-ը՝ 55-ից բարձր տարիքի անձինք են:

Գործազուրկների 94.7 %-ն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են³⁶:

Տարեսկզբից (2022 թ.) տարբեր պատճառներով դադարեցվել է 7533 գործազուրկի կարգավիճակը: Ընդ որում՝ 5.4 %-ի կարգավիճակը դադարեցվել է երկու անգամ հարմար աշխատանքի առաջարկից հրաժարվելու, 31.5 %-ինը՝ տարածքային կենտրոնների հրավերով հարմար աշխատանքի տեղավորման կամ զբաղվածության պետական ծրագրում ընդգրկվելու առաջարկություն ստանալու համար երկու անգամ անհարգելի պատճառով չներկայանալու, 44.6 %-ինը՝ աշխատանքի տեղավորման և 18.5 %-ինը՝ այլ պատճառներով:

Ըստ տնտեսության ճյուղերի՝ աշխատանք փնտրողների աշխատանքի տեղավորման բաշխվածության ամենամեծ տեսակարար կշիռը եղել է արդյունաբերության (16.8 %), մեծածախ և մանրածախ առևտրի ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման (17.6 %), սպասարկման այլ ծառայությունների (18.3 %), կրթության (10.5 %) և այլ (36.8 %) ոլորտներում:

ՊԱՇՏՈՆԱՊԵՏ ԳՐԱՆՑՎԱԾ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐ³⁷

Հազ.

³⁶ Նույն տեղում:

³⁷ Տե՛ս «Գործազրկությունը ՀՀ-ում» <https://employment.am/am/38/free.html> հղումով:

Գործազուրկների թիվը	2015	2016	2017	2018	2019	2020 3-րդ եռամսյակ
		77.0	80.5	70.2	64.6	61.8
Ըստ կրթության						
Հետբուհական, բարձրագույն	10.2	9.7	8.7	8.5	8.1	8.0
Թերի բարձրագույն, միջին մասնագիտական	14.5	14.3	12.4	11.6	11.2	10.7
Նախնական մասնագիտական (արհեստագործական)	4.8	4.5	3.8	3.6	3.4	3.3
Միջնակարգ ընդհանուր	40.5	44.8	38.7	35.1	33.4	32.4
Հատուկ ընդհանուր, տարրական, ոչ լրիվ տարրական		7.2	6.6	5.8	5.7	5.8
Ըստ տարիքի						
16-29	19.0	19.1	16.9	13.8	12.6	12.0
30-44	30.7	31.9	27.9	26.6	25.4	24.6
45-54	15.9	16.4	13.9	12.9	12.6	12.2
55 և ավելի	11.3	13.1	11.5	11.3	11.2	11.4
Ըստ գործազրկության տևողության						
Մինչև 6 ամիս	15.7	13.4	9.0	8.3	9.5	8.8
7- 11 ամիս	15.6	13.5	8.6	6.8	6.7	7.0
1-3 տարի	26.2	29.9	26.2	19.4	15.5	14.3
3 տարուց ավելի	19.5	23.7	26.4	30.1	30.1	30.1

2022 թվականի մայիսի 1-ի դրությամբ գործատուների ներկայացրած թափուր աշխատատեղերի մեջ մեծ թիվ են կազմել.

➤ բարձր որակավորման մասնագետները՝ ճարտարապետներ, ճարտարագետներ և առողջապահության ոլորտի մասնագետներ (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության), համակարգիչների մասնագետներ,

➤ միջին որակավորման աշխատողներ՝ օժանդակ, համակարգչային սարքավորումների սպասարկման մասնագետներ, տեխնիկներ և օպերատորներ՝ օպտիկական և էլեկտրոնային սարքավորումների, միջին բժշկական անձնակազմի (օժանդակ անձնակազմ), (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության), ֆինանսների և առևտրի բնագավառների, արվեստի, զվարճությունների և մարզական բնագավառների մասնագետներ, դասավանդողներ՝ նախադպրոցական դաստիարակության և կրթության,

➤ որակավորում չպահանջող աշխատատեղերը կազմել են ընդհանուրի 2.5 %-ը³⁸:

³⁸ Տե՛ս <https://employment.am/am/40/free.html> հղումով:

Հայաստանում գործում են զբաղվածության հետևյալ պետական ծրագրերը³⁹.

- «Աշխատաշուկայում անմրցունակ ազատագրկման վայրերից վերադարձած, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում»,
- «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում»,
- «Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում»,
- «Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում»,
- «Աշխատաշուկայի հետագոտման աշխատանքների կազմակերպում»,
- «Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում»,
- «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության, ինչպես նաև անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում»,
- «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում»,
- «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում»,
- «Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում»,
- «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում»,
- «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում»,
- «Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում»,
- «Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող՝ աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալն աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում»:

Հ/Հ	Զբաղվածության պետական ծրագրեր	2021 թ.
-----	-------------------------------	---------

³⁹ Տե՛ս <https://employment.am/am/5/free.html> հղումով:

		Զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկված անձանց թիվը
1	2	3
1	Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում	487
2.	«Ռազմական դրությամբ պայմանավորված Ադրբեջանի կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի ՀՀ-ում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում» ծրագիրը	388
3.	Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում	0
4.	Մասնագիտական աշխատանքային փորձ չունեցող անձանց աշխատանքային պրակտիկայի կազմակերպում	353
5.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում	33
6.	Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում	0
7.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում	359
8.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում	0
9.	Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում	1076
10.	Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում	106

11.	Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալն աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում	597
12.	Ռեզերվացված հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանում գտնվող Արցախի գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովումը՝ ծրագիր(ծրագրում ընդգրկված անձանց թիվը)	85
13.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար աջակցության տրամադրում	475
14.	«Ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողներին աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին պետական աջակցության տրամադրում» ծրագրում ընդգրկված անձանց թիվը	1

Զբաղվածության ծրագրերը հավասարապես չեն խրախուսում ծրագրերի վարչարարությամբ զբաղվող մասնագետներին ծրագրերում ներգրավել դրա իրավունքն ունեցող բոլոր շահառուներին և տրամադրել որակյալ ծառայություններ, ինչպես նաև նախատեսված չեն գործատուների վարքագծի խթանման մեխանիզմներ իրենց աշխատողներին գրանցելու հարցում շահագրգռված լինելու առումով:

Զբաղվածության ծրագրերի մասին հանրային իրազեկվածության մակարդակը ցածր է: Հարկ է նշել, որ Զբաղվածության գործակալությունը և համապատասխան տարածքային կենտրոնները համագործակցում և ծառայություններ են մատուցում միայն հաշվառված գործազուրկներին/աշխատանք փնտրողներին: Չհաշվառված անձանց համար անհատական աջակցման/իրազեկման որևէ մեխանիզմ ԶԱՄ-ի (Զբաղվածության ակտիվ ծրագիր) մասով չի գործում⁴⁰:

ԶԱՄ-երը նախատեսված են խթանելու ներքին աշխատաշուկայում անմրցունակ և որակավորում չունեցող անձանց տնտեսական ակտիվությունը, սակայն այդ ծրագրերը միշտ չէ, որ

⁴⁰ Տե՛ս <https://tinyurl.com/2p88uxrv> հղումով:

հաշվի են առնում ներքին շուկայի պահանջները և գործատուների կարիքները: Ծրագրերի պայմանականությունները խթանում են մինչև 3 տարեկան երեխաներ խնամող երիտասարդ մայրերի զբաղվածությունը, սակայն չկան 3 և բարձր տարիքի երեխաների մայրերի տնտեսական ակտիվությունը խթանելու համար նախատեսված ծրագրեր⁴¹:

Ուստի անհրաժեշտ է ընդլայնել և բարելավել բնակչության խոցելի խմբերի տնտեսական ինտեգրումը ինքնազբաղվածության և ձեռներեցության աջակցության միջոցով, ինչպես նաև ընդլայնել նրանց մասնակցությունը ֆորմալ աշխատաշուկայում և աշխատաշուկան դարձնել նրանց համար հասանելի զբաղվածության ծառայությունների և ծրագրերի միջոցով:

Պետք է արձանագրել նաև, որ նպաստների և դրամական վճարների չափը ցածր է նվազագույն կենսամակարդակի (նվազագույն սպառողական զամբյուղի) համեմատ: ՄՊ ուղորտին ուղղված ծախսերի կառուցվածքն արտացոլում է բնակչության սոցիալական կարիքների մեծ մասը, սակայն կենտրոնացած է սահմանափակ թվով սոցիալական խնդիրների պաշտպանությանը. միջոցների մեծ մասն ուղղվում է կենսաթոշակների և սոցիալական նպաստների վճարմանը: Ծառայությունները բավարար ֆինանսավորում չեն ստանում:

ՄՊ ծրագրերի մեծ մասի կառուցվածն առանձնակի ուշադրություն չի հատկացնում խթանելու շահառուների շրջանում ֆորմալ զբաղվածությունը, եկամտային հարկի վճարներ կատարելը և խնայողություններ անելը: Ցածր աշխատավարձերը և սոցիալական աջակցության նպաստներ ստանալու իրավունքին առնչվող արտոնությունները կորցնելու վախը կարող են ստիպել, որ նպաստառուները հրաժարվեն ֆորմալ զբաղվածության մեջ ներգրավվելու ցանկացած հնարավորությունից:

Մինչ օրս արդիական են հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքի և զբաղվածության իրավունքի իրացման խնդիրները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ 2021 թվականին իրականացվել են զբաղվածության 3 հիմնական և 8 լրացուցիչ ծրագրեր:

2021 թվականի ընթացքում զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկվել է 293 հաշմանդամություն ունեցող անձ, որոնցից աշխատանքի տեղավորվել կամ ինքնազբաղված է դարձել 94-ը, իսկ ժամանակավոր զբաղված՝ 123-ը: Արդյունքում՝ 76 անձ հաշվառվել է զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում, սակայն վերջնարդյունքում չի դարձել դրանցից որևէ մեկի շահառու⁴²:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ 2020 թվականին իրականացվել է զբաղվածության պետական կարգավորման 13 ծրագիր՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսելով դրանցում ընդգրկվելու առաջնահերթություն: Ըստ այդմ՝ 2020 թվականին Զբաղվածության պետական գործակալության միջնորդությամբ, այդ թվում՝ կայուն զբաղվածություն ապահովող ծրագրերի արդյունքում, աշխատանքի է տեղավորվել 343 հաշմանդամություն ունեցող անձ: Ստացվում է, որ 2021 թվականին 2020 թվականի համեմատ զբաղվածություն ապահովող պետական

⁴¹ Նույն տեղում:

⁴² Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2021 թվականի տարեկան հաղորդումը, <https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf> հղումով:

ծրագրերի արդյունքում աշխատանքի տեղավորված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը նվազել է 126-ով⁴³:

ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն 2017 թվականին արձանագրել էր, որ հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում գործազրկության ցուցանիշները, ինչպես նաև նրանց բաց աշխատանքային շուկայում արդյունավետ հնարավորություն տվող ծրագրերի և զբաղվածության քաղաքականության բացակայությունը մտահոգիչ են⁴⁴: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Կոմիտեին ներկայացված զեկույցում քվոտայի համակարգի կասեցումը⁴⁵ պատճառաբանել է կազմակերպությունների կողմից քվոտայի պահանջի կատարման առնչությամբ որոշակի ոլորտներում առաջացած մի շարք օբյեկտիվ խոչընդոտներով⁴⁶:

Մասնավորապես առկա են հետևյալ խնդիրները.

- ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայում առկա տեղեկատվությունը գործող կարգավորումների շրջանակներում հնարավորություն չի տալիս լիարժեք հաշվարկելու քվոտայի պահանջը չկատարած աշխատատեղերի թիվը,

- պետական կառավարման որոշ մարմիններում աշխատողների (ծառայողների) թվի վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը (ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ոստիկանություն և այլն), որը անհնար է դարձնում այդ մարմինների համակարգերում գործող կազմակերպությունների համար քվոտավորման ենթակա աշխատատեղերի թվի հաշվարկը,

- քաղաքացիական, դիվանագիտական, զինվորական, քրեակատարողական, փրկարար ծառայությունների և համայնքային ծառայության պաշտոնների՝ հաշմանդամություն ունեցող անձանցով համալրման օրենսդրական սահմանափակումները և գործնականում առկա օբյեկտիվ մի շարք այլ խոչընդոտներ,

- տնտեսության ճյուղային առանձնահատկություններով պայմանավորված՝ առանձին ճյուղերում ոչ պետական կազմակերպությունների համար քվոտայի պահանջի կատարման օբյեկտիվ, լրացուցիչ դժվարությունները,

- քվոտավորման ենթակա կազմակերպությունների գործատուների համար՝ իրենց մոտ աշխատող հաշմանդամություն ունեցող անձանց մասին ամբողջական տեղեկատվության բացակայությունը,

- քվոտայի պահանջի առաջացման կամ այդ պահանջի կատարման տարվա ընթացքում քվոտավորման ենթակա կազմակերպության վերակազմակերպման դեպքում քվոտայի պահանջի կատարման խնդիրները, այդ թվում՝ օրենսդրական կարգավորման հստակեցման անհրաժեշտությունը:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Տե՛ս ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Եզրափակիչ դիտարկումներն ուղղված Հայաստանին <https://digitallibrary.un.org/record/1310656?ln=ru> հղումով:

⁴⁵ ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպության կողմից մասհանման կատարման և դրա օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 1308-Ն որոշում:

⁴⁶ Տե՛ս Հայաստանի զեկույցը <https://bit.ly/31vG8uP> հղումով:

ՀՀ Կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 981-Ն որոշմամբ հաստատվել է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի մշտադիտարկման և գնահատման կարգը: Ըստ նշված որոշման՝ յուրաքանչյուր տարի ՀՀ ԱՍՀՆ-ն, որպես ամենամյա ծրագրի առանձին հավելված, ՀՀ Կառավարություն է ներկայացնում ամենամյա ծրագրի (նախորդ տարվա) ընդհանրական մշտադիտարկման և գնահատման, ինչպես նաև ամենամյա ծրագրում ներառված զբաղվածության պետական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման արդյունքների մասին (նախորդ տարվա և ընթացիկ տարվա առաջին կիսամյակի) ամփոփ հաշվետվությունը⁴⁷:

ՏՄՄԻԿ-ի դիտարկումներում անդրադարձ է արված նաև աշխատողների և նրանց ընտանիքների նվազագույն ապրուստի ապահովման և նվազագույն աշխատավարձի համապատասխանությանը: Հարկ է նշել, որ 2020 թվականին բարձրացել է Հայաստանում նվազագույն ամսական աշխատավարձը՝ դառնալով 68000 ՀՀ դրամ⁴⁸: Այս կապակցությամբ ՀՀ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրի համաձայն՝ Կառավարությունը մինչև 2026 թվականը քայլեր է ձեռնարկելու նվազագույն աշխատավարձը 85.000 ՀՀ դրամ սահմանելու ուղղությամբ: Նվազագույն ամսական աշխատավարձի շարունակական բարձրացումն ապահովվելու է՝ հաշվի առնելով երկրի մակրոտնտեսական ցուցանիշները:

Այլ կերպ ասած, ըստ Կառավարության, նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացումն անհրաժեշտաբար պետք է ուղեկցվի համապատասխան տնտեսական հնարավորություններով՝ որպես լրացուցիչ ծախսի ֆինանսավորման աղբյուր և հիմք, մինչդեռ տվյալ դեպքում պարզ չէ, թե մակրոտնտեսական ցուցանիշների ինչպիսի փոփոխություններ են հիմք դարձել խնդրո առարկա նախաձեռնության համար⁴⁹:

Այսպիսով, չնայած Հայաստանում իրականացված բազմաթիվ զբաղվածության ծրագրերին, ինչը կարևոր հնարավորություն է ընձեռում կրճատելու գործազրկության մակարդակը և կենսամակարդակի բարձրացման փորձ է, այդուհանդերձ, հաշվի առնելով վիճակագրական տվյալները և գործազրկության նպաստի համարժեք հնարավորությունների բացակայությունը, գտնում ենք, որ Կոմիտեի առաջարկությունները չեն կատարվել:

5. Բավարար կենսամակարդակի իրավունք (հոդված 11-րդ)

2014 թվականին ՏՄՄԻԿ-ը ողջունում է մասնակից պետության ջանքերը՝ ուղղված տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացմանը, որոնք ներառում են Միբրիայի Արաբական Հանրապետությունից ավելի քան 11000 փախստականների և ապաստան հայցողների ընդունումը մասնակից պետության կողմից⁵⁰: Միննույն ժամանակ ՏՄՄԻԿ-ը խորապես մտահոգված է Հայաստանում բնակարանային ապահովության իրավիճակի ճգնաժամի

⁴⁷ Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docID=92858> հղումով:

⁴⁸ Տե՛ս «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենք, հոդված 1:

⁴⁹ Տե՛ս <https://www.irtek.am/views/act.aspx?aid=114356> հղումով:

⁵⁰ Տե՛ս ՏՄՄԻԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

առնչությամբ ոչ համարժեք ջանքերով, որոնք, ի թիվս այլնի, 1988 թվականի երկրաշարժի պատճառած վնասների, ինչպես նաև փախստականների հոսքի պատճառով են առաջացել:

Ավելին՝ 1999 թվականին ՏՄԻԿ-ն ավստսանք է հայտնել բնակարանային պայմանների իրավունքի իրացման վերաբերյալ վիճակագրության բացակայության համար, ինչի հետևանքով դրանք ՏՄԻԿ-ը բավարար չի գնահատել⁵¹:

Ըստ այդմ՝ ՏՄԻԿ-ը Հայաստանի Կառավարության ուշադրությունն է հրավիրում իրենց առաջիկա պարբերական զեկույցում բնակարանային վիճակի վերաբերյալ անհրաժեշտ աջակցող վիճակագրական տվյալներ ներառելու անհրաժեշտությանը⁵²:

ՏՄԻԿ-ն 2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում վերահաստատել է իր մտահոգությունը կարիքավորների համար սոցիալական բնակարանների սահմանափակ հասանելիության առնչությամբ:

ՏՄԻԿ-ն առաջարկում է, որ մասնակից պետությունը ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ երաշխավորելու համարժեք և մատչելի բնակարանների հասանելիությունն անապահով և մարզինալացված անձանց և խմբերի համար, այդ թվում՝ 1988 թվականի երկրաշարժի հետևանքով դեռևս ժամանակավոր պայմաններում ապրող ընտանիքների համար, մասնավորապես՝ սոցիալական բնակարանային ֆոնդի տրամադրմանը բավարար միջոցներ հատկացնելու ճանապարհով՝ հաշվի առնելով ՏՄԻԿ-ի թիվ 4 (1991) ընդհանուր մեկնաբանությունը բավարար բնակարանային պայմանների իրավունքի վերաբերյալ⁵³:

Հարկ է արձանագրել, որ ՀՀ ներպետական օրենսդրությամբ ամրագրված չէ բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքը:

Մինչև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները Հայաստանում բավարար կենսամակարդակ, բնակարանային պայմաններ ունենալու իրավունքը երաշխավորված էր Սահմանադրությամբ: Մասնավորապես Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն, «- Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրացման համար»: Ավելին՝ Սահմանադրության 48-րդ հոդվածը տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներից ամրագրում էր՝ «խթանել բնակարանային շինարարության և նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը»⁵⁴:

2015 թվականին ընդունված Սահմանադրության 32-րդ հոդվածով ամրագրված է բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, իսկ 86-րդ հոդվածը տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակ է ամրագրում բնակարանային շինարարության խթանումը⁵⁵:

⁵¹ Տե՛ս ՏՄԻԿ-ի 1999 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները <https://www.refworld.org/country,,CESCR,,ARM,,3ae6ae668,0.html> հղումով:

⁵² Տե՛ս ՏՄԻԿ-ի 1999 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները <https://www.refworld.org/country,,CESCR,,ARM,,3ae6ae668,0.html> հղումով:

⁵³ Տե՛ս ՏՄԻԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

⁵⁴ Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docID=75780> հղումով:

⁵⁵ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510> հղումով:

Մինչդեռ պետք է արձանագրել, որ նշված հոդվածները չեն արտացոլում ՏՄՄԿ-ի թիվ 4 ընդհանուր մեկնաբանությամբ ամրագրված՝ բավարար բնակարանային պայմանների իրավունքի իրացման շրջանակները:

Ինչ վերաբերում է քաղաքականության փաստաթղթերին, ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով սոցիալական պաշտպանության բնագավառի ընդհանուր առաջնահերթությունների շարքում է հռչակված սոցիալապես անապահով ու խոցելի բնակչության կարողությունների ու հնարավորությունների համալիր ընդլայնումը, այդ թվում՝ բնակարանային ու այլ կարիքների բավարարման միջոցով⁵⁶: Ռազմավարության ծրագիրը նաև մատնանշում է Հայաստանում աղքատության ցուցանիշի տարածքային դինամիկան, որտեղ աղքատության ամենաբարձր մակարդակը Շիրակի մարզում է⁵⁷:

Հայաստանում առկա չէ, սակայն, ազգային բնակարանային քաղաքականությունը ներկայացնող մեկ ամփոփ փաստաթուղթ, որը ՏՄՄԿ-ի թիվ 4 ընդհանուր մեկնաբանությամբ դիտարկվում է իբրև բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման առանցքային բաղադրիչ: ՏՄՄԿ-ի պահանջն է, որ նման փաստաթուղթը մշակվի մասնակցության սկզբունքի պահպանմամբ՝ երաշխավորելով խնդրի շրջանակում առավել խոցելի խմբերի՝ ներառյալ անօթևանների գործուն մասնակցությունը⁵⁸:

Դեռևս արդիական է 1988 թվականի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման խնդիրը:

1988 թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժն ընդգրկեց հանրապետության տարածքի շուրջ 40 %-ը՝ մոտ 1 մլն բնակչությամբ: Երկրաշարժից քանդվեց կամ տարբեր աստիճանի վնասվածություն (I-IV աստիճան) ստացավ 8,9 մլն քառ. մ ընդհանուր մակերեսով բնակարանային ֆոնդ⁵⁹:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման խնդրի առնչությամբ մարդիկ հայտնել են, որ անհիմն կերպով չեն հաշվառվել երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում, և օրենսդրության կարգավորումների բացակայության պատճառով չեն կարողանում վերահաշվառվել համապատասխան ցուցակներում և օգտվել ներկայում գործող բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրերից⁶⁰:

2021 թվականին նշված համակարգային խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների կապակցությամբ Քաղաքաշինության կոմիտեից պարզաբանվել է, որ ծրագրի ավարտական փուլում՝ 2020-2021 թվականների ընթացքում, դիտարկվել է ծրագրի շահառու ճանաչված 242 ընտանիքի բնակարանային խնդրի լուծում: Նշված 242 ընտանիքներից 214-ի խնդիրը դիտարկվել է Կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի թիվ 712-Ն որոշման շրջանակում (187-ը՝ բնակելի տների կառուցման, 20-ը՝ բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար բնակարանի

⁵⁶ Տե՛ս <https://www.gov.am/files/docs/1322.pdf> հղումով:

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ Տե՛ս <https://www.refworld.org/docid/47a7079a1.html> հղումով:

⁵⁹ Տե՛ս «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=922> հղումով:

⁶⁰ Տե՛ս առավել մանրամասն 2021 թվականի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը <https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf> հղումով, էջ 183-186:

գնման վկայագրի միջոցով ֆինանսական աջակցության տրամադրման, իսկ 7-ը՝ ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրման եղանակով) այդ ուղղությամբ հատկացված շուրջ 3.4 մլրդ դրամի հաշվին: Ընդ որում՝ նշված 214 ընտանիքից 7-ն ինչ-ինչ պատճառներով հերթացուցակում չհաշվառված անձինք են, որոնք հերթացուցակում հաշվառված լինելու իրենց իրավունքը վերականգնել են դատական կարգով: 28-ը Ջրաձոր համայնքի բնակիչներ են, որոնց բնակարանային խնդրի լուծումը և ֆինանսավորման հարցը դիտարկվելու են, Կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1411-Լ որոշման համաձայն, Կապսի ջրամբարի կառուցման նպատակով Ջրաձոր համայնքից վերաբնակեցվող ընտանիքների հետ՝ միասնական մոտեցումներով և նախատեսված աջակցության ամբողջ ծավալով⁶¹:

Խնդիրը տեղ է գտել նաև Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված՝ Կառավարության 2021-2026 թվականների միջոցառումների ծրագրի «Քաղաքաշինության կոմիտե» բաժնում (նպատակ 17), որի համաձայն՝ նախատեսվում է 2021-2022 թվականներին ստեղծել իրավական հիմքեր (ոչ հիմնական շինությունների և դրանցում բնակվող ընտանիքների կարգավիճակի գնահատում, գնահատման արդյունքների տեղադրում քարտեզագրական նյութերի վրա, ընտանիքների տարանջատում ըստ կարգավիճակի և յուրաքանչյուր խմբի մասով մոտեցումների ու առաջնահերթությունների մշակում, նախնական ֆինանսական հաշվարկներ և դրանց հիման վրա ծրագրերի իրականացման համար համապատասխան իրավական ակտերի մշակում), 2023 թվականից մեկնարկելու են ծրագրեր՝ Կառավարության սահմանած մոտեցումների և առաջնահերթությունների համաձայն: Ընդ որում՝ 2021 թվականի մասով նախատեսված են եղել ոչ հիմնական շինությունների և դրանցում բնակվող ընտանիքների կարգավիճակի գնահատման, գնահատման արդյունքները քարտեզագրական նյութերի վրա տեղադրման, ըստ կարգավիճակի ընտանիքների տարանջատման աշխատանքները, որոնք սահմանված ժամկետում իրականացվել են:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ Քաղաքաշինության կոմիտեից բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ դեռևս նախորդ տարի պարզաբանվել է, որ 229 ընտանիքի բնակապահովման խնդրի լուծումը մեկնարկել է ՀՀ Կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի թիվ 712-Ն որոշմամբ, որի համաձայն՝ խնդրի լուծումը նախատեսվում է մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ը այդ ուղղությամբ հատկացված շուրջ 3.4 մլրդ դրամի հաշվին: Մինչդեռ, ընթացիկ տարվա Կոմիտեից ստացված պարզաբանմամբ, նշված 226 շահառու ընտանիքների թիվն արդեն դարձել է 242: Ընդ որում՝ կրկին նշվել է, որ դիտարկվում է նշված անձանց խնդրի լուծում, սակայն ըստ նախորդ տարվա պարզաբանման՝ նշված ընտանիքների խնդրի լուծումը նախատեսվել է իրականացնել մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ը, որը փաստացի մինչ օրս չի կատարվել, ընդհակառակը՝ շահառու անձանց թիվն ավելացել է⁶²:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և պետությունից բնակարանային փոխհատուցում ստացած անձանց հետ անցկացված խմբային հարցազրույցների ընթացքում պարզ է դարձել, որ հարցվածների մեծ մասը բնակարանային փոխհատուցում պետությունից ստացել է երկրաշարժից 20-30 տարի անց: Բնակարանային փոխհատուցման տրամադրման շրջանակում դիտարկվել է ընտանիքի կազմի փոփոխությունը՝ միայն նվազման պարագայում, ինչի հետևանքով այն

⁶¹ Նույն տեղում:

⁶² Նույն տեղում:

ընտանիքները, որոնց անդամները տարիներ անց մահացել են, ստացել են ավելի քիչ սենյակով բնակարաններ, քան կորցրած բնակարաններն են եղել: Միննույն ժամանակ այն ընտանիքներին, որոնց կազմը ընդլայնվել է (ամուսնություններ, երեխաների ծնունդ), նոր անդամների թվով սենյակների ավելացում չի եղել, արդյունքում բնակարան ստանալուց հետո ընտանիքի անդամներից մի քանիսը շարունակել են ապրել տնակներում՝ փաստացիորեն մնալով անօթևան⁶³:

Բոլոր հարցվածները նշեցին, որ բնակարանների հանձնումից հետո պետության կողմից չի իրականացվել բնակարանային պայմանների որևէ գնահատում կամ հետադարձ կապ քաղաքացու հետ: Խմբային հարցազրույցների շրջանակներում վերհանվեց այն հանգամանքը, որ պետության կողմից բնակարանային փոխհատուցումն իրականացվել է առանց դրանց պայմանների գնահատման, ինչի հետևանքով որոշ ընտանիքներ չեն տեղափոխվել իրենց ստացած բնակարաններ, քանի որ դրանք չեն ունեցել տարրական պայմաններ և հանձնվել են շահագործման քանդված վիճակում: Միջոցների բացակայության պատճառով այդ ընտանիքները մինչ օրս բնակվում են տնակներում⁶⁴:

Բնակարանների գնման վկայագրերի համար (ԲԳՎ) սահմանված պայմանները և առաջարկված գինը ցածր են եղել բնակարանների շուկայական գնից, ինչի պատճառով շահառուները լրացուցիչ վարկային պարտավորություններ են ստանձնել կամ սահմանված գնով ստիպված բնակելի տուն են ձեռք բերել գյուղական համայնքներում, որոնք հետագայում վաճառելու դեպքում այդպես էլ չեն կարողացել բնակարան գնել և մնացել են անօթևան: Վկայագրով սահմանված գումարի սահմաններում բնակարանի (բնակելի տան) գնման անհնարիության պատճառով եղել են շահառուներ, որոնք կեղծ առքուվաճառք են ձևակերպել, գումարը ստացել, սակայն այն օգտագործել են առողջապահական և/կամ այլ նպատակներով՝ ի վերջո կրկին մնալով անօթևան: Եղել են դեպքեր, երբ շահառուներն իրենք են դարձել խարդախության և կոռուպցիայի գոհ՝ զրկվելով թե՛ գումարից, թե՛ բնակարանից⁶⁵:

Այսպիսով՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային փոխհատուցման տրամադրումը կարգավորող իրավական դաշտն հստակ չէ, պարունակում է բազմաթիվ բացեր, կա հստակեցումների և վերանայումների կարիք: Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց համար պետության առ այսօր իրականացրած բոլոր ծրագրերն ուղղված են եղել միայն բնակարանային փոխհատուցմանը: Իրականացվող բնակապահովման ծրագրերը պետության կողմից չեն ենթարկվել պատշաճ մշտադիտարկման և գնահատման, առկա չէ այդ ծրագրի արդյունքների վերաբերյալ հանրային հաշվետվողականության որևէ մեխանիզմ, ծրագրերը չեն ձևավորվել շահառուների հետ խորհրդակցությունների, հատուկ բնակարանային կարիքների, առողջական և սոցիալական այլ առանձնահատկությունների և խոցելիությունների գնահատման միջոցով, ինչը բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի կարևոր բաղադրիչ է⁶⁶:

⁶³ Տե՛ս «Բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքը Հայաստանում. կենտրոնանալով Գյումրի քաղաքում 1988 թվականի երկրաշարժի հետևանքով անօթևանություն ձեռք բերած քաղաքացիների վրա»
այլընտրանքային
զեկույցը:

https://epfarmeria.am/sites/default/files/Document/Realization_of_the_right_to_adequate_housing_in_Armenia_Gyumri_arm.pdf հղումով:

⁶⁴ Նույն տեղում:

⁶⁵ Նույն տեղում:

⁶⁶ Նույն տեղում:

Ինչ վերաբերում է փախստականների և ապաստան հայցողների՝ բնակարանով ապահովելու իրավունքին, ապա հարկ է նշել, որ օրենսդիրն այս կապակցությամբ նախատեսում է կարգավորումներ:

Այսպես, Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների՝ կացարանում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1440-Ն որոշմամբ հաստատված կարգով: Նշված կարգի 6-րդ կետով սահմանվում է, որ ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորվելու մասին ապաստան հայցողների դիմումի հիման վրա լիազոր մարմնի կողմից նրանց տրվում է ուղեգիր: Այնուամենայնիվ, նույն կարգի 7-րդ կետի համաձայն՝ ուղեգիրը տրվում է ժամանակավոր տեղավորման կենտրոնում ազատ սենյակների առկայության դեպքում:

ՀՀ Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի թիվ 404 որոշմամբ հաստատվել է «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց՝ պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքների սեփականաշնորհման» կարգով:

Հանրակացարանային բնակելի տարածքներն անհատույց սեփականաշնորհվում են դրանցում 3 տարուց ավելի բնակվող՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց:

2019 թվականի հունիսին ամփոփված տվյալներով՝ Հայաստանում կա Ադրբեջանից բռնագաղթած բնակարանային ապահովման կարիք ունեցող 882 ընտանիք՝ 628-ը Երևան քաղաքում և 254-ը մարզերում⁶⁷:

Ադրբեջանի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց բնակարանային խնդիրները լուծելու նպատակով ՀՀ Կառավարության 1997 թվականի օգոստոսի 9-ի թիվ 330 որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգը»: Այդ որոշման համաձայն՝ բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառումն իրականացվում է ըստ նրանց փաստացի բնակության վայրի՝ սոցիալական աջակցության տարածքային բաժիններում բնակարանի կարիք ունենալու վերաբերյալ փախստականների ներկայացրած դիմումների հիման վրա:

Ըստ ներկայացված ցուցակների, որոնք թարմացվել են 2019 թվականի մարտ-ապրիլին՝ ՀՀ-ում բնակարանի կարիք ունեցող փախստականների թիվը եղել է 2589, որից 1070-ը՝ Երևանում, իսկ 1519-ը՝ մարզերում⁶⁸:

Չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ Հայաստանում այդպես էլ չի ստեղծվել սոցիալական բնակարանային ֆոնդ, որով կապահովվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում անօթևան մարդկանց բավարար կենսամակարդակի, մասնավորապես՝ բնակարանով ապահովված լինելու իրավունքը: Մինևույն ժամանակ տարիներ շարունակ անօթևան դարձած մարդկանց հանդեպ սոցիալական աջակցության անարդյունավետ քաղաքականությունն իր հերթին հանգեցրել է խնդրի շարունակական վերարտադրման: Այսպիսով՝ Կոմիտեի առաջարկությունները չեն կատարվել:

⁶⁷ Տե՛ս http://www.migration.am/housing_issue հղումով:

⁶⁸ Նույն տեղում:

6. Առողջության պահպանման իրավունքը (հոդված 12-րդ)

1999 թվականի Եզրափակիչ դիտարկումներում SUՄԻԿ-ն ավստում է, որ Հայաստանի Կառավարության տրամադրած տեղեկատվությունը բավարար չէ պարզելու համար, թե ինչու է նկատվել հայաստանցիների, հատկապես կանանց առողջության ընդհանուր վատթարացում, թե ինչու են առողջապահության համար բյուջետային հատկացումները նվազում, ինչպես նաև քաղցկեղի և սրտանոթային հիվանդությունների բարձր առաջացման պատճառներն ու հետևանքները⁶⁹:

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի՝ օրենքին համապատասխան առողջության պահպանման իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը հռչակված են տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության՝ իբրև քաղաքականության հիմնական նպատակներ:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, լինելով առանցքային ոլորտային իրավական փաստաթուղթ, սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները:

Բացի այդ՝ ընդունվել են նաև շարք ռազմավարություններ և պետական ծրագրեր, որոնք կարգավորում են ոլորտային խնդիրներ, ինչպես, օրինակ՝ Հայաստանում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությունը⁷⁰, Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարությունը և դրան կից՝ 2016-2020 թվականների գործողությունների ծրագիրը⁷¹, Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարությունը և դրան կից՝ 2016-2020 թվականների գործողությունների ծրագիրը⁷², Հայաստանի Հանրապետությունում 2017-2021 թվականների ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիրը⁷³:

Առողջության պահպանման ոլորտին վերաբերող որոշ գործողություններ տեղ են գտել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրերում:

Մինչդեռ պետք է արձանագրել, որ չկա առողջության պահպանման ոլորտի կարգավորմանն ուղղված մեկ համապարփակ ազգային քաղաքականության փաստաթուղթ, որն ամբողջական ձևով կներկայացնի առողջության իրավունքի իրացման պետական ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը:

⁶⁹ Տե՛ս SUՄԻԿ-ի 1999 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները <https://www.refworld.org/country,,CESCR,,ARM,,3ae6ae668,0.html> հղումով:

⁷⁰ Տե՛ս https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/04/15-1ardz.pdf հղումով:

⁷¹ Տե՛ս <http://www.irtek.am/views/act.aspx?aid=86074> հղումով:

⁷² Տե՛ս <http://www.irtek.am/views/act.aspx?aid=86895> հղումով:

⁷³ Տե՛ս <http://www.irtek.am/views/act.aspx?aid=90527> հղումով:

Որոշ խնդիրներ պայմանավորված են երկրում առկա աղքատության վիճակով: Նման խնդիրներին արձագանքումը և լուծումը կարևոր են առողջության և մի շարք հարակից իրավունքների պաշտպանության և իրացման տեսանկյունից:

Լուրջ խնդիր է նաև բնակավայրերում աղքատության վիճակը: Մի շարք վայրերում առկա է աղբի գերկուտակման խնդիր, ինչպես, օրինակ՝ մայրաքաղաքի Նուբարաշեն վարչական շրջանում, որը ստեղծում է սանիտարահիգիենիկ ծայրահեղ պայմաններ՝ մեծապես վտանգելով բնակիչների առողջությունը:

Բազմաթիվ են նաև խնդիրներն առողջ և հիգիենիկ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքի իրացման, ինչպես նաև առողջ սննդի տեսանկյունից:

Վերը նշված խնդիրների լուծման հարցում կարևոր նշանակություն ունի առողջության վերաբերյալ կրթության և տեղեկատվության մատչելիությունը, այդ թվում՝ սեռական և վերարտադրողական առողջության:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պարտավորությունը՝ յուրաքանչյուրին ապահովել իրեն տրամադրվելիք բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի, մեթոդների, ծավալների, տրամադրման կարգի և պայմանների մասին տեղեկատվությամբ:

SUSPՄԴ-ի 14-րդ ընդհանուր մեկնաբանությամբ սահմանվում է, որ առողջության իրավունքի ապահովումը բոլոր մակարդակներում և ձևերում ենթադրում է պետության կողմից հետևյալ առանցքային տարրերի պահպանումը.

- գործող հանրային առողջության և առողջապահական հիմնարկների, ծառայությունների, ապրանքների, ինչպես նաև ծրագրերի հասանելիությունը,
- առողջապահական հիմնարկների, ծառայությունների և ապրանքների մատչելիությունը, ներառյալ ֆինանսական և ֆիզիկական մատչելիությունը, բոլորի համար՝ առանց խտրականության,
- բոլոր առողջապահական հիմնարկների, ծառայությունների և ապրանքների էթիկական-մշակութային համապատասխանելիությունը,
- առողջապահական հիմնարկների, ծառայությունների և ապրանքների որակը, դրանց գիտական և բժշկական համապատասխանելիությունը⁷⁴:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումները, հասարակական կազմակերպությունների իրականացրած հետազոտությունները, ինչպես նաև տվյալ զեկույցի շրջանակում անցկացված հարցումները ցույց են տալիս, որ Հայաստանում առողջապահական հիմնարկներում առկա են շենքային և սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանների ապահովման լրջագույն խնդիրներ:

Օրինակ՝ հատկապես պետական պատվերով բուժօգնության տրամադրման շրջանակում անվճար տրամադրվող հիվանդասենյակների սանիտարահիգիենիկ պայմանները խիստ անբավարար են, ինչի պատճառով պետական պատվերով բուժօգնություն ստացող անձինք հաճախ ստիպված են լինում ընտրել վճարովի հիվանդասենյակներ⁷⁵:

⁷⁴ Տե՛ս <https://www.refworld.org/pdfid/4538838d0.pdf> հղումով:

⁷⁵ Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը <https://www.ombuds.am/images/files/dba762ec5cd6b33aa1e7670c4f8e02e6.pdf> հղումով:

Հարկ է նշել, որ օրինակ՝ Գեղարքունիքի մարզում ուսումնասիրությունների ընթացքում պարզ է դարձել, որ մարզի բնակիչներն անհրաժեշտ շտապ և առաջնային բուժօգնություն ստանում են իրենց բնակավայրերում: Շտապ բուժօգնության ծառայությունը հասանելի է մարզի բոլոր քաղաքներում, սակայն առկա է մասնագետների, սարքավորումների և համակարգային կազմակերպվածության խնդիր: Բնակիչները հատկապես շեշտադրել են որակյալ, վերապատրաստված մասնագետների պակասը, ինչի հետևանքով անգամ բժշկական հաստատություններում առկա մի շարք սարքավորումներ չեն օգտագործվում⁷⁶:

Ուսումնասիրության շրջանակում ընդգրկված քաղաքային բնակավայրերում արձանագրվել են մի շարք բժշկական ծառայությունների բացակայություն կամ ծայրահեղ ցածր որակ (հարցվածների գնահատականով), որի հետևանքով բնակիչները ստիպված են կա՛մ գնալ Երևան, կա՛մ առհասարակ չստանալ անհրաժեշտ ծառայությունը Երևան գնալու ֆինանսական անհնարինության պատճառով: Նման ծառայությունների շարքում են բժշկական հետազոտությունների իրականացումը, սիրտանոթային հիվանդությունների բուժմանն առնչվող և տարատեսակ վիրաբուժական ծառայությունները⁷⁷:

Հայաստանում գործող հիվանդանոցները, պոլիկլինիկաներն ու բուժկենտրոնները հատուկ ուշադրություն չեն հատկացնում հաշմանդամություն ունեցող կանանց առողջապահական ծառայությունների մատուցման պայմաններին, հատկապես վերարտադրողական և սեռական առողջության պահպանմանը: Առողջապահական և բժշկական տեղեկատվությունը, սարքերն ու սարքավորումները հարմար, հասանելի և մատչելի չեն հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի կանանց և աղջիկներին⁷⁸:

Շենքերը չունեն մատչելի մուտք և տեղաշարժման դժվարություններ ունեցող կանանց համար հարմար կաբինետներ, չկան նաև անվասայլակների և քայլակների համար նախատեսված թեքահարթակներ և վերելակներ: Օրինակ՝ չկան բրայյան այբուբենով առողջապահական տեղեկատուներ կամ ձայնագրված սկավառակներ, որոնց միջոցով բժշկական տեղեկությունը հասանելի կլինի նաև տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Լսողության խնդիրներ ունեցող անձանց համար չկան ժեստերի լեզվի թարգմանություն ապահովող մասնագետներ, չեն տրամադրվում մատչելի, այլընտրանքային և հեշտ ընթերցվող տեղեկատվություն և ծառայություններ մտավոր հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին, թեև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքում ամրագրված է, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկներն իրավունք ունեն և պետք է ստանան մատչելի տեղեկություններ վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման վերաբերյալ, ինչպես նաև պետք է ստանան այդ իրավունքներն իրացնելու համար անհրաժեշտ միջոցները: Արձանագրվել են դեպքեր, երբ տարբեր խնդիրներով կանայք հնարավորություն չեն ունեցել հաճախելու տեղական՝ բնակավայրին մոտ գտնվող բժշկական հաստատություն, որտեղ կստանան

⁷⁶ Տե՛ս SUՄԻԿ-ին Հայաստանի ՔՀԿ-ների կողմից ուղարկվող այլընտրանքային զեկույցը «Առողջության իրավունքի իրացման խնդիրները Հայաստանում. կենտրոնանալով Գեղարքունիքի մարզի վրա» https://epfarmeria.am/sites/default/files/Document/REALIZATION_OF_THE_RIGHT_TO_HEALTH_IN_ARMENIA_GEGHARKUNIK_arm.pdf հղումով:

⁷⁷ Նույն տեղում:

⁷⁸ Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը <https://ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf> հղումով:

համապատասխան վերաբերմունք և իրենց կարիքներին համապատասխան պատշաճ և որակով ծառայություններ: Առողջապահական ոլորտի այս բոլոր խնդիրներն ու բացերը, միջավայրային և վերաբերմունքային խոչընդոտներն ու կարծրատիպները բացասական ազդեցություն են ունենում հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների վրա և ավելի խոցելի են դարձնում նրանց⁷⁹:

ՀՀ Կառավարության կողմից 2016 թվականի հունիսի 23-ին հաստատվել է վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարության և 2016-2020 թվականների գործողությունների ծրագիրը, որի համաձայն՝ որպես առողջապահության ոլորտի խնդիր են ճանաչվել, ի թիվս այլնի, բարձր ռիսկի խմբի հղիների հղիության և ծննդաբերության վարման ուղեցույցների վերանայման և համապատասխանեցման անհրաժեշտությունը, վերարտադրողական առողջության ոլորտում նոր ախտորոշիչ միջոցների, տեխնոլոգիաների, ինչպես նաև բուժման և կանխարգելման նորագույն մոտեցումների ներդրման անհրաժեշտությունը և ընտանիքի պլանավորման տեղեկատվության լոգիստիկ համակարգի զարգացման, ընդլայնման և այլ ծառայությունների հետ ինտեգրման անհրաժեշտությունը, իսկ ռազմավարության նպատակներից են վերարտադրողական առողջության ոլորտում ախտորոշման և բուժման արդյունավետության բարձրացումը, մայրական ու նորածնային հիվանդացության և մահացության իջեցումը, նախածննդյան, նորածինների, դեռահասների, վերարտադրողական տարիքի կանանց սկրինինգային ծրագրերի ընդլայնումը և արդյունավետության բարձրացումը, վերարտադրողական առողջության ոլորտի մասնագետների շարունակական ուսուցման ապահովումը և բնակչության իրազեկվածության բարձրացումը⁸⁰:

ՀՀ Կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի թիվ 568-Ն որոշմամբ սահմանվում են անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները⁸¹:

2019 թվականին նշված որոշման մեջ կատարված փոփոխության արդյունքում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների, այդ թվում՝ արտամարմնային բեղմնավորման կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող շահառուների ցանկում ընդգրկվել են նաև այն ամուսնական զույգերը, որոնցում զույգից մեկն ունի հաշմանդամություն, էթե կինը ունի հղիությունը կրելու հակացուցում⁸²:

ՀՀ Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման համաձայն՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում են ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերին համապատասխան՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ստացվում է, որ պացիենտն իրավունք ունի իր ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանության համար դիմելու ՀՀ առողջապահության նախարարություն: Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության նկատմամբ հսկողություն իրականացնում է առողջապահության նախարարության առանձնացված ստորաբաժանումը՝ Պետական առողջապահական գործակալությունը: ՀՀ Կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1301-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարության պետական

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docID=106938> հղումով:

⁸¹ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150363> հղումով:

⁸² Նույն տեղում:

առողջապահական գործակալության կանոնադրությունը: Կանոնադրության համաձայն՝ գործակալության նպատակներից ու խնդիրներից է առողջապահական պետական նպատակային ծրագրերով նախատեսված պետական պատվերի միջոցով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու համար ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ապահովումը: Գործակալությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է բժշկական օգնություն իրականացնողների կողմից պետական պատվերի շրջանակում կատարված աշխատանքների որակի և ծավալի՝ սահմանված չափանիշներին համապատասխանության վերահսկում:

Պետք է արձանագրել, որ բուժօգնության որակի և ծավալի նկատմամբ վերահսկողությունը պատշաճ չի իրականացվում: Որպես կանոն, պացիենտները մասնավոր բժշկական կենտրոնների, ինչպես նաև մարզպետարանների ենթակայության կենտրոնների բժիշկներից, նրանց բուժօգնությունից բողոք ունենալու դեպքում դիմում են առողջապահության նախարարություն, մարզպետարաններ, սակայն արդյունքի չեն հասնում⁸³:

Քաղցկեղի առաջացման միասնական պատճառ չկա: Իրականում դրանք բազմաթիվ են: Ներկայում գոյություն ունեն բազմաթիվ ենթադրություններ և հիպոթեզներ, որոնք բացատրում են քաղցկեղի առաջացման պատճառները:

Քաղցկեղի առաջացման հիմնական պատճառներն են.

- սխալ սնուցումը,
- ճարպակալումը, քիչ շարժուն կենսակերպը,
- ծխելը, թմրանյութերի, ալկոհոլի ընդունումը,
- արտաքին գործոններ՝ ճառագայթային, արդյունաբերական արտանետումների ազդեցությունը,
- ժառանգականությունը,
- վիրուսները,
- դեպրեսիան,
- ընկճված իմունիտետը⁸⁴:

ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 53-Ն հրամանով հաստատվել է բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների տրամադրման չափորոշիչը և ցանկը: Չափորոշիչը կարգավորում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները: Հատուկ և դժվարամատչելի են համարվում այն բժշկական հետազոտությունները, որոնք ՀՀ տարածքում ունեն տարածքային առումով անբավարար հասանելիություն, ընդգրկված չեն առողջապահության նախարարի կողմից հաստատված առողջության առաջնային պահպանում իրականացնող բժշկական

⁸³ Տե՛ս առավել մանրամասն 2021 թվականի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը <https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf> հղումով, էջ 254-257:

⁸⁴ Հասանելի է <https://oncology.am/arm/260/news.more.html> հղումով:

կազմակերպություններում ամբողջ բնակչության համար անվճար իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների փաթեթում:

Հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով, ըստ բժշկական ցուցումների, իրականացվում են.

ա) բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված շահառուների համար,

բ) բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված չարորակ նորագոյացություններով և տուբերկուլյոզ ախտորոշմամբ բոլոր պացիենտների համար,

գ) բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց համար, որոնց սահմանված կարգով ուղեգիր է տրամադրվել ՀՀ տարածքում տեղակայված պոլիկլինիկական բժշկական օգնություն տրամադրող կազմակերպություններում մշտական գործող ուղեգրող հանձնաժողովների կողմից:

Այսպես, ինչպես նշվեց, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված չարորակ նորագոյացություններով բոլոր պացիենտների համար, ըստ բժշկական ցուցումների, իրականացվում են պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով: Մինչդեռ բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված չարորակ նորագոյացություններ ունեցող քաղաքացիները մտահոգություն են հայտնել ախտորոշիչ հետազոտությունների՝ պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով չիրականացվելու վերաբերյալ: Այստեղ խնդիրն այն է, որ գործող չափորոշիչի համաձայն (ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի հունվարի 10-ի թիվ 20-Ս հրամանի)՝ բժշկական կազմակերպության տնօրենի կողմից ուղեգրումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ պացիենտը ստացիոնար բուժում է ստանում⁸⁵: Հետևաբար, եթե պացիենտը ստացիոնար բուժման մեջ չէ, ապա ախտորոշիչ հետազոտությունները չեն կարող իրականացվել անվճար սկզբունքով: Եվ շատ պացիենտներ չեն ստանում ծառայությունը դրա մատչելի չլինելու պատճառով:

Առողջության առաջնային պահպանման օղակում 2015 թվականի հունվարի 1-ից իրականացվում են սկրինինգային ծրագրեր՝ արգանդի վզիկի քաղցկեղի, գարկերակային գերձնշման, շաքարային դիաբետի վաղ հայտնաբերման նպատակով, ինչպես նաև սոցիալական փաթեթի շահառուների տարեկան կանխարգելիչ բժշկական քննություններ: Նախատեսված ծրագրերից օգտվելու համար շատ կարևոր է բնակչության շրջանում հաճախ և ուսանելի իրազեկումների իրականացումը, քանի որ հիվանդության բուժումը վաղ փուլերում շատ ավելի արդյունավետ է և դյուրին: Հիվանդության վաղ ախտորոշումը ոչ պակաս կարևոր է նաև հետազոտությունների և բուժօգնության ծախսատարության տեսակետից և՛ պետության, և՛ պացիենտի համար:

Պետք է արձանագրել, որ բնակչության մի մասը տեղեկացված չէ սկրինինգային ծրագրերի գոյությունից, տեղեկացված չեն նաև, որ այդ ծրագրերով նախատեսված հետազոտություններից կարող են օգտվել պոլիկլինիկաներում անվճար սկզբունքով:

⁸⁵ Տե՛ս առավել մանրամասն 2021 թվականի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը <https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf> հղումով, էջ 259-264:

ՀՀ առողջապահության նախարարության պարզաբանմամբ՝ Հայաստանում Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի (ԿՁԵՀ) միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2021 թվականի հունվարի 19-ից Լոռու մարզում իրականացվում են կրծքագեղձի մամոգրաֆիկ անվճար հետազոտություններ: Ծրագրի շրջանակում շարժական մամոգրաֆը տեղակայվում է ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի բոլոր քաղաքներում, և 50-69 տարեկան կանայք հնարավորություն ունեն անցնելու կրծքագեղձի մամոգրաֆիկ անվճար հետազոտություն⁸⁶:

Հաշվի առնելով մարդկանց առողջության վրա ազդող սոցիալ-տնտեսական ցուցանիշները Հայաստանում, ինչպիսիք են հասարակության ծերացումը, առողջապահական ծառայությունների արժեքը, քրոնիկ հիվանդությունների աճը, աղքատության մակարդակը, գործազրկության մակարդակը, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու կենցաղային պայմանների նկատմամբ պետության ուշադրությունը՝ կարելի է փաստել, որ Կոմիտեի առաջարկությունները կատարված չեն:

7. Հղիության արհեստական ընդհատումը (հոդված 10-րդ)

1999 թվականի Եզրափակիչ դիտարկումներում ՏՄԽԿ-ն անհանգստացած է այն փաստով, որ հղիության արհեստական ընդհատումը շարունակում է մնալ ընտանիքի պլանավորման ամենատարածված միջոցը երկրում, մասնավորապես՝ անբավարար կրթության և հակաբեղմնավորիչների բարձր գնի պատճառով:

Ըստ այդմ՝ ՏՄԽԿ-ն առաջարկում է կանանց համար ներդնել ընտանիքի պլանավորման ծրագրեր՝ մասնավորապես՝ նվազեցնելու հղիության արհեստական ընդհատման դեպքերը⁸⁷:

ՏՄԽԿ-ն իր 2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում վերահաստատել է իր դիրքորոշումը՝ առաջարկելով իրականացնել համապարփակ հետազոտություն՝ բացահայտելու հղիության ընդհատման բուն, արմատական պատճառները՝ պայմանավորված երեխայի սեռի ընտրությամբ, ինչպես նաև մասնակից պետությունում կանանց նկատմամբ խտրականության պատճառները, և հաջորդ գեկույցում ներկայացնել ընտրության վրա հիմնված աբորտի դեմ պայքարի տարեկան ծրագրեր, պլաններ՝ հաշվի առնելով միջգերատեսչական հայտարարությունում ներառված առաջարկությունները երեխաների սեռի՝ գենդերային կարծրատիպների վրա հիմնված ընտրության վերացման վերաբերյալ, որոնցով հանդես են եկել 2011 թվականի Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված հաստատությունները:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների՝ նորածինների սեռերի հարաբերակցությունը խախտվել է 1991 թվականից, երբ գրանցվեց բարձր ցուցանիշ՝ 120 տղա 100 աղջկա հաշվով (կենսաբանորեն ընդունված նորմալ հարաբերակցություն է համարվում 102-106 տղա՝ 100 աղջկա հաշվով): Ընդ որում՝ այդ ցուցանիշը վերաբերում էր ընտանիքում առաջին

⁸⁶ Նույն տեղում, էջ 266-267:

⁸⁷ Տե՛ս ՏՄԽԿ-ի 1999 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները <https://www.refworld.org/country,,CESCR,,ARM,,3ae6ae668,0.html> հղումով:

երեխայի ծնելիությանը, մինչդեռ երրորդ երեխայի ծնելիության դեպքում սեռերի հարաբերակցությունը 2000 թվականին հասնում էր 150 տղա 100 աղջկա հաշվով, իսկ 2010 թվականին՝ 173 տղա 100 աղջկա հաշվով: Այս ցուցանիշները համարվում էին աշխարհում դիտարկված ամենաբարձր ցուցանիշներից երրորդը Չինաստանից և Ադրբեջանից հետո:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2021 թվականի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի՝ սեռերի հարաբերակցության գործակիցը 2019 թվականի համեմատ 2020 թվականին պահպանվել է 1.10, իսկ 2018 թվականի համեմատ նվազել է:

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի 2021 թվականի Հայաստանի ժողովրդագրական տվյալների՝ սեռերի հարաբերակցության գործակիցը, ըստ ծննդի կարգի, առաջին երեխայի դեպքում 1.07 է, երկրորդի դեպքում՝ 1.03, երրորդի դեպքում՝ 1.25, չորրորդի դեպքում՝ 1.33: Սեռերի հարաբերակցության գործակիցների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2019 թվականի համեմատ առաջին և չորրորդ երեխաների դեպքում սեռերի հարաբերակցության գործակիցն աճել է, առաջինի դեպքում 1.03-ից դառնալով 1.07, իսկ չորրորդի երեխայի դեպքում՝ 1.26-ից 1.33: Դրական փոփոխություն առկա է երկրորդ և երրորդ երեխաների պարագայում, քանի որ սեռերի հարաբերակցության գործակիցը համեմատաբար նվազել է՝ 1.07-ից և 1.27-ից դառնալով 1.03 և 1.25:⁸⁸

Հայաստանում տղա երեխայի նախընտրության բարձր ցուցանիշների մասին վկայում են բազմաթիվ հետազոտություններ: Հիմնական պատճառներն իրականում ավելի խորն են ու պայմանավորված են մշակութային պատկերացումներով: Ընտանիքում տղա երեխայի մասին երազում են տոհմի հայրագծային շարունակականությունն ապահովելու, կայուն տնտեսական ապահովվածությունն ունենալու և շատ այլ պատճառներով, որոնց անդրադարձել են հետազոտությունները:

Որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ ընտանիքում խնդիրներ կարող են առաջանալ իգական սեռի երեխա ունենալու դեպքում՝ կնոջը հաճախ մեղադրելով տղա երեխա չունենալու համար, մինչ հղիությունը, հղիության ողջ ընթացքում, ծննդաբերությունից հետո քննադատելով հատկապես միայն աղջիկ երեխաներ ունեցող կանանց: Քննադատական այս մոտեցումը հանգեցրել է կարծիքի, որ կանայք ևս ձգտում են տղա ունենալու՝ ընտանիքում շահեկան դիրք ունենալու, կարգավիճակն ամրապնդելու և ապագայի համար կայունության երաշխիք ունենալու նպատակով⁸⁹:

2017 թվականին հրապարակված հետազոտություններից մեկի շրջանակում պարզվել է նաև, որ Հայաստանի բոլոր մարզերում գերիշխում է տղա առաջնեկ ունենալու նախապատվությունը: Սա առավել արտահայտված է Վայոց ձորի, Արարատի, Շիրակի և Լոռու մարզերում, մինչդեռ Երևանի և Սյունիքի կանանց մեծամասնությունը (համապատասխանաբար՝ 61.6% և 62.4%) առաջին հղիության ժամանակ առաջնեկի սեռը չի կարևորել⁹⁰:

Հետազոտություններով ստացված տվյալները հնարավորություն են տալիս վերհանելու տղաներին տրվող նախապատվության պատճառները. տղան տոհմը շարունակողն է, ունեցվածքի

⁸⁸ Տե՛ս https://www.armstat.am/file/article/demog_2021_3.pdf հղումով:

⁸⁹ Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf> հղումով:

⁹⁰ Տե՛ս Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» գեկույց, <https://ichd.org/?laid=2&com=module&module=menu&id=8> հղումով:

ժառանգորդը, հայրենիքի պաշտպանը, ընտանիքի նյութական բարեկեցության երաշխավորը, անձնավորում է հեղինակություն և ուժ⁹¹:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման արգելքը, համաձայն որի՝ բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների՝ նույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով ընդունված ցանկում չնախատեսված որևէ այլ դեպքում, ներառյալ սեռով պայմանավորված, 12-ից մինչև 22 շաբաթական ընդհատումն արգելվում է: ՀՀ Կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները հաստատելու և ՀՀ Կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1116-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 180-Ն որոշումը սահմանում է հղիության արհեստական ընդհատման բժշկական և սոցիալական ցուցումները, ինչպես նաև արբորտների իրականացման կարգը և պայմանները:

2020 թվականին պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների թվի նվազեցման և խնդրի լուծման նպատակով մշակվել և 2020 թվականի մարտին առողջապահության և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների համատեղ հրամանով հաստատվել է «Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման 2020-2023 թվականների ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը», որի շրջանակում նախատեսված են իրականացնել հանրային իրազեկմանն ուղղված աշխատանքներ պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների և տեղական հասարակական ու համայնքային կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Խնդրի և ստեղծված իրավիճակի իրական պատճառը խտրականությունն է, մասնավորապես՝ կարծրատիպային մտածելակերպը, հետևաբար այս երևույթի դեմ պայքարի գլխավոր ուղղությունը խտրականության արգելքն է: Այդուհանդերձ, սեռի ընտրության հիմքով արհեստական ընդհատումների արգելքի սահմանումը, հանրային իրազեկման միջոցառումների իրականացումը երկարատև կայուն արդյունք չեն կարող ապահովել, եթե չկան ընտանիքի պլանավորման բավարար ծրագրեր: Հետևաբար Կոմիտեի առաջարկությունները մասամբ են կատարվել:

8. Կրթության իրավունք (հոդված 13-րդ)

Հայաստանի կրթական համակարգի ֆինանսավորումը

1999 թվականի Եզրափակիչ դիտարկումներում SUՄԻԿ-ը մտահոգությամբ նշել է կրթությանը Կառավարության հատկացումների տոկոսի զգալի անկումն այլ ոլորտների հատկացումների համեմատ: SUՄԻԿ-ը մտահոգված է նաև վճարովի կրթական ոլորտի աճով⁹²:

⁹¹ Նույն տեղում:

⁹² Տե՛ս SUՄԻԿ-ի 1999 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները <https://www.refworld.org/country,,CESCR,,ARM,,3ae6ae668,0.html> հղումով:

2014 թվականին SUՄԻԿ-ն առաջարկել է բարձրացնել ոլորտային նախարարությունների կարողությունները՝ կառավարելու պետական ֆինանսները, դյուրացնելու ոլորտային նախարարությունների և ֆինանսների նախարարության միջև երկխոսությունը, ապահովելու ռեսուրսների արդյունավետ բաշխումը բյուջետային ծրագրերի չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև բարձրացնելու քաղաքական գիտակցությունը կրթությանը լրացուցիչ էական ռեսուրսներ հատկացնելու անհրաժեշտության կապակցությամբ⁹³:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան:

Օրենքի 46-րդ հոդվածն ամրագրում է պետական և համայնքային ուսումնական հաստատության ֆինանսավորումը: Այսպես, նշված հոդվածի կարգավորումների համաձայն, ուսումնական հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Պետությունը յուրաքանչյուր նոր ուսումնական տարում երաշխավորում է կրթության կարիքների համար միջոցների հատկացումը նրա առաջանցիկությունն ապահովող չափաքանակով: Պետական բյուջեի ընթացիկ ծախսերում կրթության ֆինանսավորման տոկոսային հարաբերությունը չպետք է ցածր լինի նախորդ բյուջետային տարվա համապատասխան ցուցանիշից:

Պետական բյուջեից պետական ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացվում է պետական պատվերի, սուբսիդիայի, պետական սեփականություն հանդիսացող գույքի պահպանության վճարի և այլ ձևերով: Պետական պատվերով ուսումնական հաստատության ֆինանսավորման չափանիշները սահմանում է ՀՀ Կառավարությունը մեկ սովորողի հաշվարկով՝ ըստ ուսումնական հաստատության տիպի, իսկ առանձին դեպքերում (լեռնային և սահմանամերձ շրջաններ)՝ հատուկ չափաքանակներով:

Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավումը չի կարող հանգեցնել պետական բյուջեից ֆինանսավորման չափերի նվազեցմանը:

Ուսումնական հաստատության ֆինանսավորման հիմնական աղբյուրները պետական և համայնքների բյուջեներն են:

Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց ներդրումները.
2) սեփական միջոցները, որոնք գոյանում են վճարովի ուսումնական, հետազոտական, գիտաարտադրական, խորհրդատվական, հրատարակչական և ՀՀ օրենսդրությամբ չարգելված գործունեության այլ ձևերից.

3) ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներ:

ՀՀ Ազգային ժողովը հաստատել է նաև կրթության զարգացման պետական ծրագրերը.

• «Կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիրը» (ՀՕ-199, ընդունվել է 2001 թ. հունիսի 26-ին),

⁹³ Տե՛ս SUՄԻԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

• «Կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը» (ՀՕ-246, ընդունվել է 2011 թ. հունիսի 23-ին):

Ներկայում ՀՀ ԿԳՄՄՆ-ն հանրային քննարկման է ներկայացրել «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը»: Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ՀՀ Կառավարությունը պետք է հաստատի «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրից» բխող գործողությունների ծրագիրը: Գործողությունների ծրագրի իրականացման շրջանակում կրթության կառավարման պետական լիազոր մարմնի ներկայացմամբ ՀՀ Կառավարությունը կհաստատի նպատակային ծրագրեր, այդ թվում՝ ազգային ծրագրեր, որոնք ծրագրային ձևաչափով կներառվեն պետական բյուջեում⁹⁴:

Հանրակրթության ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ Կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշմամբ հաստատված բանաձևով.

$$Ըզ = Մթ \times Սզ + Պզ + ՏՄթ \times ԱՕք \times ՄՆզ + ՀՈԻՀՄթ \times 0,1 \times ՄԱդզ,$$

որտեղ՝ Ըզ-ն մեկ տարվա համար հաստատությանը հատկացվող ընդհանուր գումարն է,

Մթ-ն հաստատության սովորողների թիվն է,

Սզ-ն մեկ սովորողին ընկնող տարեկան գումարն է,

Պզ-ն հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարն է,

ՏՄթ-ն հաստատություններում տարրական դասարաններում սովորողների և

նախակրթարանների երեխաների թվի հանրագումարն է,

ԱՕք-ն աշխատանքային օրերի քանակն է,

ՄՆզ-ն տարրական դասարանների և նախակրթարանների երեխաներին սննդով ապահովման մեկ օրվա գումարն է,

ՀՈԻՀՄթ-ն հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների (բացառությամբ տարրական դասարանների) թիվն է,

ՄԱդզ-ն սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցվող գումարն է:

Ըստ ուսումնասիրությունների՝ վերջին տասնամյակում պետական բյուջեից կրթության ֆինանսավորման ծավալները կայուն չեն: Բացարձակ թվերով կրթության ֆինանսավորումը տատանվում է: Թեև ֆինանսավորման բացարձակ մեծություններն անցյալ տասնամյակում հիմնականում աճել են, 2010 և 2012 թվականներին դրանք նվազել են: 2009-2014 թվականների ժամանակահատվածում կրթության ծախսերն աճել են 14 %-ով կամ տարեկան միջին 2.3 %-ով⁹⁵:

Ի տարբերություն բացարձակ մեծության՝ պետական բյուջեում կրթության ֆինանսավորման ծավալների տեսակարար կշիռը հիմնականում նվազել է՝ 2007 թ. 14.5 %-ից 2016 թ. հասնելով 8.4 %-ի:

Նախադպրոցական և տարրական կրթության խմբի ծախսերի տեսակարար կշիռը 2009-2016 թվականների ընթացքում կրթության բաժնի 18 %-ից հասել է 24 %-ի (պատկեր 3): Միջնակարգ կրթության խմբի ծախսերը կրթության բաժնի ծախսերի 48 %-ից նվազել են մինչև 45 %: Նախնական

⁹⁴ Տե՛ս <https://escs.am/am/news/11602> հղումով:

⁹⁵ Տե՛ս «ՀՀ կրթության համակարգի պետական ֆինանսավորման հիմնական խնդիրները» զեկույցը <https://transparency.am/hy/publication/pdf/134/1203> հղումով:

մասնագիտական (արհեստագործական) և միջնակարգ մասնագիտական կրթության բաժնի ծախսերի տեսակարար կշիռը կրթության բաժնի ծախսերի 4 %-ից հասել է 7 %-ի: Բարձրագույն կրթության խմբի ծախսերի տեսակարար կշիռը կրթության բաժնի 7 %-ից հասել է 10 %-ի: Ըստ մակարդակների չդասակարգվող կրթության խմբի ծախսերը կրթության բաժնի 3 %-ից հասել է 5 %-ի: Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ խմբի ծախսերի տեսակարար կշիռը նվազել է կրթության բաժնի ծախսերի 19 %-ից մինչև 8 %: Անցած տարիների ընթացքում պետական բյուջեն չի նախատեսել ֆինանսավորում կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքների խմբի ծախսերի համար: Կրթության այլ դասերին չպատկանող խմբի ծախսերի ֆինանսավորումը եղել է կրթության բաժնի ծախսերի մոտավորապես 1 %-ը⁹⁶:

ՀՀ Կառավարությունն առանձնահատուկ վերաբերմունք է ցուցաբերում ներառական կրթության հանդեպ: 2016 թվականին, չնայած աշակերտների թվի ավելացմանը (72-ի փոխարեն 80 աշակերտ), ՀՀ ԿԳՆ տարրական դպրոցում ներառական կրթության ծրագրի ֆինանսավորումը նվազեցվել է 2,9 մլն դրամով, ինչի արդյունքում մեկ աշակերտի հաշվով ֆինանսավորումը 582 հազարի փոխարեն եղել է 488 հազար դրամ կամ նվազել է 94 հազար դրամով: Միջին դպրոցում ներառական կրթության ֆինանսավորումը ճշգրտվել է (նախատեսված 186809.6 հազար դրամը նախ ճշգրտվել է նվազեցման ուղղությամբ՝ 155588.4 հազար դրամ, ինչից հետո փաստացի ֆինանսավորումը եղել է 154630.3 հազար դրամ), թեև աշակերտների թիվը մնացել է նույնը՝ 321, ինչի արդյունքում մեկ աշակերտի հաշվով ֆինանսավորումը 582 հազար դրամի փոխարեն եղել է 485 հազար: Ավագ դպրոցում ներառական կրթության ֆինանսավորումը նույնպես նվազեցվել է (90204 հազար դրամից 84767.2 դրամ), իսկ փաստացի ֆինանսավորումը եղել է ավելի սակավ (82981,9 հազար), թեև աշակերտների թիվը 20-ով ավելի է եղել (155-ի փոխարեն 175 աշակերտ), ինչի արդյունքում մեկ աշակերտի հաշվով ֆինանսավորումը ծրագրավորված 582 հազար դրամի փոխարեն եղել է 474 հազար դրամ⁹⁷:

2014 թվականից նախնական մասնագիտական կրթության ծրագրերի ֆինանսավորման համար պետական բյուջեից միջոցներ են ստանում միայն ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (ՀՀ ԿԳՆ) և ՀՀ Կառավարությանն առընթեր ոստիկանությունը (ՀՀ ԿԱՌ): Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագիրն իրականացվում է «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ում: Եթե մինչև 2014 թ. ՀՀ Կառավարությունը մշտապես ավելացնում էր նախնական մասնագիտական կրթության ֆինանսավորման պլանը, ապա 2015-2017 թթ. ընթացքում նվազեցրել է այն:

Բարձրագույն կրթության ֆինանսավորման համար հատկացումներ ստանում են մի քանի նախարարություններ, ՀՀ ԿԱՌ-ն և ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը:

2018 թվականի ՀՀ պետական բյուջեով բարձրագույն կրթության ֆինանսավորման համար նախատեսվել է 11 մլրդ 201 մլն դրամ, 2017 թվականի 11 մլրդ 207 մլն դրամի և 2016 թվականին փաստացի հատկացված 10 մլրդ 723 մլն դրամի ֆինանսավորման դեպքում⁹⁸:

⁹⁶ Տե՛ս «ՀՀ կրթության համակարգի պետական ֆինանսավորման հիմնական խնդիրները» զեկույցը <https://transparency.am/hy/publication/pdf/134/1203> հղումով:

⁹⁷ Նույն տեղում:

⁹⁸ Նույն տեղում:

Տարիներ շարունակ գիտության ֆինանսավորման հարցը եղել է տագնապալի վիճակում, քանի որ գիտական համակարգում գիտաշխատողների աշխատավարձերը շատ ցածր են եղել: Բազային ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերում գիտական աշխատողների միջին ամսական աշխատավարձի չնչին բարձրացումներում հաշվի չի առնվում գնաճային գործընթացների ազդեցությունը: Այսինքն, եթե նույնիսկ արձանագրվում է որոշակի առաջխաղացում բյուջետային ծախսերի մասով, ապա գնաճային գործընթացներն այդ աճը նվազեցնում են՝ թողնելով ծախսերը նախորդ տարվա մակարդակի վրա:

Հայաստանում Կառավարության կողմից գիտության բյուջեից հետազոտությունների ֆինանսավորումը կառավարում է ԳԿ-ն ֆինանսավորման չորս հիմնական մեխանիզմներով՝ գիտության ենթակառուցվածքների պահպանման և զարգացման ֆինանսավորում (ընդհանուր բյուջեի մոտ 60 %-ը), որը հատկացվում է պետական ԳՀԻ-ներին, հատուկ նշանակության ՀնՄ ֆինանսավորում, ինչպիսիք պաշտպանության բնագավառին առնչվող ծրագրերն են (մոտ 11 %), թեմատիկ ֆինանսավորում՝ հիմնված գիտահետազոտական համայնքի կողմից առաջարկների ներկայացման հրավերների վրա (մոտ 7 %), և համագործակցային ու կիրառական հետազոտությունների ֆինանսավորում, որի մասնաբաժինը շատ փոքր է (1,5 %-ից պակաս)⁹⁹:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի ընդունմամբ սահմանվեց գիտության ֆինանսավորման հստակ օրենսդրական երաշխիք, որ գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման համար, սկսած 2002 թվականից, պետությունը միջոցներ է հատկացնում պետական բյուջեի տարեկան ծախսի երեք տոկոսից ոչ պակաս չափով: Այդ միջոցներն ուղղվում են բարձրորակ գիտական կադրերի պատրաստմանն ու որակավորման բարձրացմանը, ինչպես նաև գիտական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, նոր տեխնոլոգիաների մշակմանն ու սարքավորումների ձեռքբերմանը: Այնուհետև օրենսդրական ձևակերպումը փոփոխվեց, ինչը հանգեցրեց գիտության ոլորտի ֆինանսավորման անկման: Հետևաբար անհրաժեշտ է գիտությանն ուղղվող ֆինանսական ծավալները կարգավորել նորմատիվ իրավական հենքով՝ ըստ ՀՆԱ-ում նրա տոկոսային մաս կազմող ցուցանիշի:

Այսպիսով՝ ստեղծված չեն գիտության ոլորտի ֆինանսավորման ինստիտուցիոնալ հիմքեր, որոնք կապահովեին բարելավում այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են թեմատիկ գիտական հետազոտությունների աճը, գիտական ենթակառուցվածքների արդիականացումը, առաջատար գիտաշխատողների խրախուսումը: Հետևաբար Կոմիտեի դիտարկումները կատարված չեն:

9. Կոռուպցիայի դեմ պայքար

⁹⁹ Տե՛ս «Հատուկ օժանդակություն Հայաստանին. Նշաձողի բարձրացում. գիտության նոր առաքելությունը Հայաստանի զարգացման մեջ» զեկույցը https://ec.europa.eu/research-and-innovation/sites/default/files/rio/report/SS%2520Armenia_Final%2520Report%2520in%2520Armenian.pdf հղումով:

2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում նշված է, որ SUՄԻԿ-ն անհանգստացած է համատարած կոռուպցիայի դեպքերով և կոռուպցիայի վերացմանն ուղղված միջոցառումների սահմանափակ արդյունավետությամբ:

Ըստ այդմ՝ SUՄԻԿ-ը խորհուրդ է տալիս մասնակից պետությանը բարելավել Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի իրավական, կառուցվածքային և քաղաքական միջոցների արդյունավետությունը Կառավարությունում, պետական կառավարման մեջ և դատական համակարգում, ինչպես նաև հետաքննել և արդյունավետորեն պատժել անօրինական վարքագիծը և բարձրացնել իրազեկվածությունը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացման համար անհրաժեշտ ռեսուրսների հատկացման վրա կոռուպցիայի վնասակար ազդեցության մասին¹⁰⁰:

Կոռուպցիայի ընկալման վերջին տասը տարիների համաթվերը և ցուցանիշները ցույց են տալիս, որ կոռուպցիան Հայաստանում շարունակաբար եղել է լուրջ հիմնախնդիր և ձեռք է բերել համակարգային բնույթ: Կոռուպցիայի արմատական պատճառներն են եղել քաղաքական և տնտեսական վերնախավերի սերտաճումը, իշխանության ճյուղերի միջև զսպման և հակակշիռների համակարգի բացակայությունը, տնտեսական և քաղաքական իշխանության մենաշնորհացումը, սոցիալական ծայրահեղ բևեռացումը և աղքատության բարձր մակարդակը¹⁰¹:

Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ-ում մեկնարկեց 2000-ականներից, մասնավորապես՝ ՀՀ Կառավարության կողմից 2003 թվականին մշակված և ընդունված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրով: Այս ծրագիրը, ըստ էության, հակակոռուպցիոն բարեփոխումների առաջին սկզբնական փուլն էր, որի շրջանակում ընդունվեցին բազմաթիվ օրենսդրական փաստաթղթեր, երկիրն անդամակցեց հակակոռուպցիոն պայքարի միջազգային հեղինակավոր կազմակերպություններին (ԵՄ ԳՐԵԿՈ, ՏԶՀԿ անցումային տնտեսության երկրների հակակոռուպցիոն պայքարի ցանց և այլն), ինչպես նաև ընդունվեցին ու վավերացվեցին կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ՝ ԵՄ կոռուպցիայի մասին քաղաքացիական և քրեական իրավունքների կոնվենցիաներ, «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիա և այլն:

2012 թվականին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ը վերանայեց համաթվի հաշվարկման համար օգտագործվող մեթոդաբանությունը: Համաթիվը գնահատում է կոռուպցիայի մակարդակը հասարակական ընկալումներում: Համաթվի փոփոխության միջակայքն է 0-100-ը: Որքան բարձր է գնահատականը, այնքան հասարակության ընկալումներում քիչ կոռումպացված է համարվում տվյալ երկիրը: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ի կողմից հաշվարկվող ԿԸՀ-ն գնահատում է պետության կառավարման այն առանձնահատկությունները, որոնք կապված են կոռուպցիայի մակարդակի հետ և ունակ են բացատրելու կոռուպցիայի աճի կամ նվազման պատճառները: Կոռուպցիայի ընկալման համաթվի դասակարգման 2020 թվականի աղյուսակում

¹⁰⁰ Տե՛ս SUՄԻԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

¹⁰¹ Հասանելի է <https://transparency.am/assets/documents/news-1547795825-0-697042.pdf> հղումով:

ուսումնասիրության ենթարկված 180 երկների շարքում Հայաստանը Հորդանանի և Սլովակիայի հետ կիսում է 60-62-րդ տեղերը (2019 թվականին ՀՀ-ն 42 միավորով կիսում էր 77-79-րդ տեղերը):

Երկրի ԿԸՀ-ն 2012-2018 թվականներին, համապատասխանաբար, կազմել է 34-35 միավոր, մինչդեռ 2018-2020 թվականների ընթացքում տեղի է ունեցել համաթվի կտրուկ աճ 35-49 միավորի շրջանակում:

Ըստ Համաշխարհային Բանկի համաշխարհային կառավարման ցուցանիշների (2019 թ.)՝ «կոռուպցիայի վերահսկման համաթվի մասով» Հայաստանն ունի մոտ 50 տոկոսային միավոր (0-ն ամենացածր ցուցանիշն է, իսկ 100-ը՝ ամենաբարձրը): 2017 թվականին 32.69 տոկոսային միավորի նկատմամբ աճը կազմել է շուրջ 17 տոկոսային միավոր:

Հայաստանի երկրորդ հակակոռուպցիոն ռազմավարությունը և միջոցառումների 2009-2012 թթ. ծրագիրն ընդունվել են 2009 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՀ Կառավարության թիվ 1272-Ն որոշմամբ: Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանում կոռուպցիայի ընդհանուր մակարդակի էական կրճատումն էր, իսկ ակնկալվող հիմնական արդյունքներն էին կոռուպցիայի համակարգային բնույթի վերացումը, կոռուպցիայի տարածվածության աստիճանի նշանակալի սահմանափակումը, քաղաքացիներին մատուցվող հանրային ծառայությունների որակի և սոցիալական արդարության ընկալման բարելավումը, քաղաքական համակարգի կայունության ամրապնդումը, երկրի տնտեսական մրցունակության բարձրացումը: 2009-2012 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման համար գործադրված ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ արձանագրել որոշ արդյունքներ: Այսպես՝ Համաշխարհային Բանկի ինստիտուտի կողմից կիրառվող արդար կառավարման ցուցիչների շրջանակներում 2009-2012 թվականների ընթացքում կայուն աճել են իրավունքի գերակայության և ձայնի լսելիության ու հաշվետվողականության ցուցանիշները:

Հանրային ծառայության ոլորտում 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը կանոնակարգեց հանրային ծառայողների իրավունքների ու պարտականությունների, հավաքագրման, առաջխաղացման և պաշտոնաթողության, վարքագծի և շահերի բախման միասնական սկզբունքները: Օրենքով ձևավորվեց բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, և գործարկվեց բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրման էլեկտրոնային համակարգը: Կանոնակարգվեցին ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի, շահերի բախման դեպքերի վարույթի իրականացման կարգերը:

ՀՀ Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1141-Ն «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշմամբ սահմանվեցին հակակոռուպցիոն քաղաքականության բարեփոխումների հիմնական ծրագրային նպատակներն ու խնդիրները:

Հակակոռուպցիոն երրորդ ռազմավարական ծրագրի հիմնական նպատակը կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափանիշներն իրագործելու միջոցով Հայաստանում կոռուպցիայի պրոգրեսիվ և հետևողական նվազեցմանը նպաստելն էր, պետական կառավարման մարմինների նկատմամբ քաղաքացիների վստահության ամրապնդումն ու կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականության սկզբունքի խթանումը: Հակակոռուպցիոն ռազմավարությունն ուղղված

Էր Բարեխիղճ և պատասխանատու պաշտոնյաների միջոցով կոռուպցիայի մակարդակի և տարածվածության նվազեցմանը, կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված գործընթացների նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը, հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման ընթացքում հանրության աջակցության ընդլայնմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման առավել արդյունավետ և գործուն միջոցների կիրառմանը:

Հակակոռուպցիոն երրորդ ռազմավարության հիմնական խնդիր էր սահմանված հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի կանխարգելումը՝ կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանմանը, կոռուպցիոն վարքագծի դրսևորումների արդյունավետ քննությանը և հանրային վստահության բարձրացմանը ուղղված միջոցների համալիր կիրառումը:

Հակակոռուպցիոն երրորդ ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացման արդյունքում 2017 թվականին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ձևավորվեց 2019 թվականին: Հանձնաժողովի ֆունկցիոնալ արդյունավետության ապահովման տեսանկյունից զգալիորեն ընդլայնվել են հանձնաժողովի գործառնությունները՝ 2017 թ. առկա 5-ի փոխարեն 2020 թ. դրությամբ վերջինիս վերապահվել է կոռուպցիայի կանխարգելմանը և հակակոռուպցիոն կրթության ապահովմանը ուղղված 13 գործառնություն: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահված գործառնությունների շարքում նշանակալի են հանձնաժողովի մշակած հակակոռուպցիոն ծրագրերի և միջոցառումների կատարման նկատմամբ մշտադիտարկման իրականացման, պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունների ներկայացման, Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների ներկայացման (ենթակա չեն հրապարակման), «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում նույն օրենքով սահմանված հայտարարագիրը վերլուծելու գործառնությունները:

Բարեփոխումների արդյունքում 2020 թվականին «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին են վերապահվել նաև կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, գույքի վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման, նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացման, պետական նպատակային ֆինանսավորման հիմքերի առկայության կամ բացակայության մասին որոշման ընդունման, բանկային ավանդից կամ կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչական կազմակերպության գործունեությամբ ստացված և կուսակցությանը փոխանցված եկամտի մասին տեղեկատվության ստուգման, ինչպես նաև կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպման գործառնությունները:

Կուսակցությունների ֆինանսավորման և կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպման գործառույթները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կսկսի իրականացնել 2022 թվականի հունվարի 1-ից:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին 2021 թվականի մայիսի 7-ին ընդունված օրենքով հանձնաժողովին վերապահված գործառույթներն ավելացվել են նաև Ընտրական օրենսգրքով, հանրաքվեների և տեղական հանրաքվեի մասին օրենքներով սահմանված դեպքերում և կարգով նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողության իրականացման, քարոզչության ֆինանսավորման, հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողության իրականացման գործառույթներով: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի թվարկված նոր գործառույթներն ուժի մեջ կմտնեն 2023 թվականի հունվարի 1-ից:

2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «Ազդարարման համակարգի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը: Օրենսդրական փաթեթի շրջանակում սահմանվել են ազդարարների պաշտպանության երաշխիքների, ինչպես նաև կոռուպցիոն դեպքերի բացահայտմանը, կոռուպցիոն դեպքեր բացահայտող մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը միտված գործուն կառուցակարգեր (անանուն հաղորդում ներկայացնելու մեխանիզմ):

Պետական կառավարման համակարգի թափանցիկության, մասնակցային գործընթացին հասարակության ներգրավման և հաշվետվողականության ապահովման նպատակով ստեղծվել է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք՝ www.e-draft.am: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համահունչ՝ ՀՀ Կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 25-ի թիվ 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1146-Ն որոշմամբ սահմանվել է հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման նոր կարգը՝ հիմքում ունենալով հրապարակայնության, մատչելիության, թափանցիկության և հանրային հաշվետվողականության սկզբունքները: Ներդրվել են մասնակցային գործընթացի ապահովման էլեկտրոնային մի շարք առանձին գործիքներ, ինչպիսիք են www.e-request.am, www.e-hotline.am, www.e-license.am, www.e-petition.am և այլ կայքերը¹⁰²:

2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի արդյունքում քրեականացվել է ապօրինի հարստացումը:

Հակակոռուպցիոն բարեփոխումների 4-րդ ռազմավարության և միջոցառումների 2019-2022 թվականների ծրագիրը ՀՀ Կառավարությունը հաստատեց 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշման հավելված 1-ով¹⁰³:

¹⁰² Տե՛ս <https://reforms.am/reforms/anti-corruption/> հղումով:

¹⁰³ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134876> հղումով:

Ռազմավարության հիմնական նպատակն են «կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ Կառավարության հոչակած հայեցակարգային կանխադրությունների ու սկզբունքների հետևողական կենսագործումը, այդ թվում՝ կոռուպցիան ծնող պատճառների վերահանումը և դրանց վերացումը, կոռուպցիայի նկատմամբ հասարակության և հանրային ծառայողների անհանդուրժողական վերաբերմունքի սերմանումը և տարածումը, կոռուպցիայի համատարած և շարունակական նվազեցումը»:

ՀՀ Կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի թիվ 165-Ն որոշմամբ ձևավորվեց կոռուպցիայի դեմ պայքարի նոր խորհուրդ: Խորհրդի հիմնական նպատակը կոռուպցիայի դեմ պայքարի, կոռուպցիայի հաղթահարման ուղղությամբ նախանշվող առաջնահերթությունների և առաջարկվող լուծումների քննարկումն է, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող քաղաքականությունների, ծրագրերի և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշում հայտնելը:

Այնուհանդերձ, հարկ է նշել, որ Խորհուրդը, գործունեության կարգի համաձայն, օժտված չէ իրավական ակտեր ընդունելու լիազորությամբ: Իրավական տեսանկյունից այն ընդամենը կարող է առաջարկներ ներկայացնել Կառավարությանը նման ակտեր ընդունելու մասին՝ ներառյալ ակտեր՝ կապված հակակոռուպցիոն քաղաքականության համակարգման հետ: Համակարգման ոլորտում Խորհրդի գործառնությունները փաստացի սահմանափակված են, քանի որ Խորհրդի առաջարկներն ընդունելու կամ չընդունելու հայեցողությունը պատկանում է Կառավարությանը: Բացի դրանից՝ Խորհուրդը մշտապես գործող մարմին չէ և չունի սեփական աշխատակազմ, և այդ հանգամանքը կասկածի տակ է դնում իր պաշտոնական լիազորություններն արդյունավետորեն իրականացնելու՝ Խորհրդի կարողությունը¹⁰⁴:

Հարկ է նշել, որ ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի թիվ 808-Ն որոշմամբ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը լուծարվեց, և նրա փոխարեն ստեղծվեց Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը:

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը և նախաքննությունն իրականացնում են ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, ՀՀ վարչապետին ենթակա ՀՀ ոստիկանությունը, Ազգային անվտանգության ծառայությունը: Համապատասխան գործառնությունն է նաև ՀՀ Կառավարությանը ենթակա Պետական եկամուտների կոմիտեն:

Կոռուպցիոն հանցագործությունների նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործություններով դատարանում մեղադրանքի պաշտպանությունը իրականացնում է ՀՀ դատախազությունը: ՀՀ գլխավոր դատախազության կազմում գործում է մասնագիտացված ստորաբաժանում՝ Կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը:

ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1332-Ն որոշմանը համապատասխան ստեղծվել են Հակակոռուպցիոն կոմիտե, ՀՀ գլխավոր դատախազությունում ձևավորվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում

¹⁰⁴ Տե՛ս <https://transparency.am/hy/publication/pdf/163/1248> հղումով:

մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության մասնագիտացված ստորաբաժանում և հակակոռուպցիոն դատարան, որոնք ապահովելու են միաժամանակ՝ կոռուպցիոն գործերի պատշաճ և արդյունավետ քննությունը:

ՀՀ դատական օրենսգրքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հակակոռուպցիոն դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով հակակոռուպցիոն դատարանների իրավասությանը վերապահված, ինչպես նաև քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը:

Հակակոռուպցիոն դատարանը գործում է առնվազն 15 դատավորի թվակազմով, որից առնվազն 10-ը պետք է լինեն կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ, իսկ առնվազն 5-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներ:

Ինչ վերաբերում է հանրային իրազեկմանը և հակակոռուպցիոն կրթությանը, այս կապակցությամբ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ շարունակաբար պատասխանատու մարմինների կողմից հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման վերաբերյալ տեղեկատվական նյութեր են հրապարակվել արդարադատության նախարարության պաշտոնական կայքում, սոցիալական ցանցերում, զանգվածային լրատվության միջոցներով: Այլ պետական մարմիններ ևս իրականացրել են հանրային իրազեկման աշխատանքներ:

Մինևս ժամանակ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից շահագրգիռ մարմինների և շահակիցների հետ անցկացված ֆոկլուս խմբային քննարկումների ժամանակ փաստվել է, որ գործողությունն, ըստ էության, կատարված չէ և ոչ թե կատարված է մասնակի: Կատարված գրասենյակային հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ արդարադատության նախարարության կայքում հրապարակված տեղեկությունները հիմնականում կատարված աշխատանքների վերաբերյալ մամուլի հաղորդագրություններ են և ոչ թե հանրային արշավներ կամ հանրամատչելի իրազեկման նյութեր, որոնք պարզ եղանակով քաղաքացիներին կտեղեկացնեն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում կատարված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմնի հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ¹⁰⁵:

Երիտասարդների համար հակակոռուպցիոն կրթական ծրագրեր իրականացնում են նաև հասարակական կազմակերպությունները: Այդ ծրագրերի միջոցով տրամադրվում են գիտելիքներ կոռուպցիայի, դրա տեսակների, քաղաքական, տնտեսական, իրավական և սոցիալական ոլորտներում վերջինիս հետևանքների, ինչպես նաև աշխարհում և Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի քայլերի վերաբերյալ:

¹⁰⁵ Հասանելի է https://armla.am/wp-content/uploads/2022/06/%D5%80%D4%BF%D4%BF-%D5%B4%D5%B8%D5%B6%D5%AB%D5%A9%D5%B8%D6%80%D5%AB%D5%B6%D5%A3_%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_AAC.pdf հղումով:

Այսպիսով՝ կոռուպցիայի դեմ պայքարի իրավական, կառուցվածքային և քաղաքական միջոցների ստեղծումն ու գործադրումը, պատժիչ վարքագծի հետաքննության հատուկ մասնագիտացված համակարգի ներդրումը կարևոր քայլեր են կոռուպցիայի դեմ պայքարի գործում, սակայն կոռուպցիայի վերացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը դեռևս մնում է խնդրահարույց: Ըստ այդմ՝ ՏՄՄԿ-ի առաջարկությունները մասամբ են կատարվել:

10. Դատական իշխանության անկախության երաշխիքներ

2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում ՏՄՄԿ-ն անհանգստացած է մասնակից պետությունում դատավորների անբավարար անկախության մասին հաղորդումներով:

ՏՄՄԿ-ն առաջարկում է մասնակից պետությանը

- *ընդունել օրենսդրական, վարչական և այլ անհրաժեշտ միջոցներ, որոնք նախատեսված են երաշխավորելու դատավորների անկախությունը՝ որպես մարդու իրավունքների իրացման ապահովման միջոց, այդ թվում՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների,*

- *շարունակել ջանքերը՝ ապահովելու, որ դատավորները, փաստաբանները կամ դատախազներն անցնեն վերապատրաստում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների՝ դատական կարգով պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև առաջարկում է մասնակից պետությանը մանրամասն տեղեկատվություն տրամադրել ներպետական դատական համակարգի համապատասխան դատական պրակտիկայի վերաբերյալ,*

- *ուշադրություն դարձնել իր՝ մասնակից պետությունների պարտավորությունների բնույթի մասին թիվ 3 (1990 թ.) և թիվ 9 (1998 թ.) և ներպետական օրենսդրության մեջ ՏՄՄԿ-ի կիրառման վերաբերյալ ընդհանուր մեկնաբանություններին¹⁰⁶:*

Հայաստանի Հանրապետությունն անկախությանը հաջորդած առաջին իսկ տարիներից ձեռնամուխ եղավ իրավական և դատական բարեփոխումների իրականացմանը՝ ձգտելով իրավունքի գերակայության և մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորման վրա հիմնված պետականության կայացմանը, որի կարևորագույն գրավականը և նախապայմանն է անկախ և կենսունակ իրավական և դատական համակարգերի առկայությունը¹⁰⁷:

2005 թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունները սկիզբ դարձան Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի իրականացման համար: Պահպանելով 1995 թվականի Սահմանադրությամբ նախատեսված դատական իշխանության հայեցակարգը՝ սահմանադրական բարեփոխումներն ուղղվեցին արդեն ստեղծված համակարգի կատարելագործմանը:

Սահմանադրական բարեփոխումներից հետո իշխանությունների բաժանման և դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքներին համապատասխան անհրաժեշտ էր արդիականացնել դատարանների գործունեությունը և դատավորների կարգավիճակի հիմնարար

¹⁰⁶ Տե՛ս ՏՄՄԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

¹⁰⁷ Տե՛ս ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագիրը <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110851> հղումով:

հարցերը կանոնակարգող օրենսդրությունը, ապահովել Արդարադատության խորհրդի անկախությունը գործադիր իշխանությունից այն հաշվով, որ վերջինս ի գորու լինի երաշխավորելու դատական իշխանության ինքնուրույնությունը¹⁰⁸:

2007 թվականի փետրվարի 21-ին ընդունվեց ՀՀ դատական օրենսգիրքը: Այս կոդիֆիկացված ակտի ընդունմամբ լուծվեցին մի շարք առանցքային հարցեր: Մասնավորապես առաջին անգամ համակարգային ձևով կարգավորվեցին դատական իշխանության կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերությունները, որոնք նախկինում կարգավորվում էին առանձին օրենքներով («Արդարադատության խորհրդի մասին», «Դատարանակազմության մասին», «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներ), ամրագրվեցին դատավորների անկախության լրացուցիչ երաշխիքներ, էպես փոխվեցին Վճռաբեկ դատարանի դերն ու նշանակությունը, ըստ որի՝ Վճռաբեկ դատարանի հիմնական գործառնություններից մեկը դարձավ օրենքի միատեսակ կիրառման ապահովումը, ստեղծվեց գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու կոչված մասնագիտացված դատարան՝ ՀՀ վարչական դատարանը, կազմավորվեց վարչական վերաքննիչ դատարանը, ձևավորվեցին դատական իշխանության ինքնակառավարման մարմիններ՝ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովը և Դատարանների նախագահների խորհուրդը, ստեղծվեց դատավորների թեկնածուների պատրաստման դպրոց (Դատական դպրոց), որի նպատակը դատավորների շրջանակը որակյալ մասնագետներով համալրելն է¹⁰⁹:

Լուրջ քայլեր ձեռնարկվեցին դատավորների նյութական և սոցիալական անկախության ամրապնդման ուղղությամբ: Չնայած տնտեսական համընդգրկուն ճգնաժամին՝ զգալիորեն բարձրացվեց ՀՀ դատավորների աշխատավարձերի դրույքաչափերը:

Դատախրավական բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով 2009 թվականի ապրիլի 21-ին ստորագրվեց «Դատախրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՀՀ նախագահի կարգադրությունը, որի առաջնային նպատակներ սահմանվեցին անկախ, հանրության առջև հաշվետու, թափանցիկ և մատչելի արդարադատության ապահովումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, դատախրավական համակարգի օրենսդրության և ռազմավարության բարելավումը¹¹⁰:

Դատախրավական բարեփոխումների արդյունքում 2018 թվականի փետրվարի 7-ին ընդունվեց նոր՝ «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը:

Անձի արդար դատաքննության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով: Սահմանադրությամբ երաշխավորված անձի արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրատարրերից է դատարանի անկախությունը:

Մասնավորապես Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Որպես ապահովում Սահմանադրությամբ սահմանված արդար դատաքննության իրավունքի՝ դատարանների անկախության երաշխիքն ամրագրվել է նաև Դատական օրենսգրքում:

¹⁰⁸ Նույն տեղում:

¹⁰⁹ Նույն տեղում:

¹¹⁰ Նույն տեղում:

Մասնավորապես Օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս դատավորն անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանցից և հաշվետու չէ որևէ մեկի, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել կամ վնասել դատարանի կամ դատավորի անկախությունը:

Արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելու կապակցությամբ դատարանի կամ դատավորի գործունեությանը որևէ միջամտությունը կամ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը առաջացնում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելու կապակցությամբ իր գործունեությանը միջամտության վերաբերյալ դատավորի հայտարարության հիման վրա Բարձրագույն դատական խորհուրդը ենթադրյալ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ դիմում է իրավասու մարմին: Իրավասու մարմինը պարտավոր է ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ անհապաղ գրավոր տեղեկացնել Բարձրագույն դատական խորհրդին:

Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի իրավասու մարմնի ձեռնարկված միջոցառումների, ինչպես նաև ողջամիտ ժամկետում համապատասխան միջոցառումներ չձեռնարկելու կապակցությամբ հանդես գալու պաշտոնական հայտարարությամբ:

Դատավորներն ունեն օրենքով սահմանված կարգով միավորում ստեղծելու իրավունք: Յուրաքանչյուր դատավոր ունի այդ միավորմանն անդամակցելու իրավունք¹¹¹:

Դատական և իրավական բարեփոխումների առաջին փուլը մեկնարկել է 1996 թվականից՝ նպատակ ունենալով վերացնելու խորհրդային դատական համակարգը և ստեղծելու նոր՝ անկախ դատական համակարգ: Դատաիրավական ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխման հիմքը դարձավ Արդարադատության խորհրդի ձևավորումը¹¹²:

Ըստ էության՝ Արդարադատության խորհուրդը դատական իշխանության ինքնակառավարման մարմին էր, որը պատասխանատու էր դատավորների նշանակման, առաջխաղացման, պաշտոնից ազատման, դատական իշխանության ներքին այլ հարցերի առնչությամբ որոշումներ կայացնելու համար:

Դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլը (2006-2009 թվականների) հիմնականում բնութագրվում է դատարանների գործունեությանն առնչվող օրենսդրական փոփոխություններով:

Դատաիրավական բարեփոխումների հաջորդ ծրագրերն իրականացվել են համապատասխանաբար 2009-2011 և 2012-2016 թվականներին: Այս ծրագրերում ևս թիրախավորվել է անկախ ու հաշվետու արդարադատություն ձևավորելու նպատակը, մասնավորապես՝ դատավորների նշանակման ընթացակարգերի, դատական իշխանության ինքնակառավարման

¹¹¹ Տե՛ս ՀՀ դատական օրենսգիրք, հոդված 7:

¹¹² Տե՛ս <https://tinyurl.com/vfh4e3xh> հղումով:

մարմինների գործունեության արդյունավետության ու կարգապահական վարույթների բարելավմանն ուղղված միջոցառումներով¹¹³:

Ներպետական մակարդակում դատավորների ընտրության և նշանակման հարցերը սահմանվել են ՀՀ Սահմանադրությամբ և առավել մանրամասն կարգավորվել են ՀՀ դատական օրենսգրքով:

ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով ընդունվեց, որ առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է հանրապետության նախագահը Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ: Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է հանրապետության նախագահը Ազգային ժողովի առաջարկությամբ:

Ազգային ժողովը առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից¹¹⁴:

Դատական օրենսգիրքը մանրամասն նախատեսում է ինչպես դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների ցուցակների կազմման ու հաստատման, այնպես էլ դատավորների նշանակման կարգը:

Օրենսգիրքը որպես դատավորի անկախության երաշխիք սահմանում է դրույթներ դատավորի ապաքաղաքականացվածության վերաբերյալ: Մասնավորապես օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն, դատավորը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ հիմնադիր, կուսակցությունում պաշտոն զբաղեցնել, կուսակցության անունից ելույթներ ունենալ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատավորը հրապարակային ելույթներում և ցանկացած այլ հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին դատավորը կարող է մասնակցել միայն որպես ընտրող: Դատավորը չի կարող հրապարակայնորեն որևէ թեկնածուի, կուսակցության, կուսակցության դաշինքի օգտին կամ նրան դեմ արտահայտվել կամ այլ կերպ մասնակցել նախընտրական քարոզչությանը:

Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական քննարկումները կամ եզրակացությունները, դատական իշխանության գործունեության վերաբերյալ քննարկումների ժամանակ արտահայտած կարծիքները և հայտարարությունները, այդ թվում՝ հրապարակային, ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում չեն համարվում:

Դատավորի գործունեության անհամատեղելիության պահանջները ևս ամրագրվում են Դատական օրենսգրքով:

Այսպես, դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Դատավորի նկատմամբ կիրառելի են հանրային ծառայողի համար ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված կարգավորումները:

Դատավորը պետք է ձգտի կառավարելու իր ներդրումներն այնպես, որ նվազագույնի հասցնի այն գործերի քանակը, որոնցով նա պետք է ինքնաբացարկ հայտնի: Դատավորը կարող է զբաղեցնել

¹¹³ Նույն տեղում:

¹¹⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 166:

պաշտոն ոչ առևտրային կազմակերպությունում, եթե՝ 1) իր գործունեությունն այդ պաշտոնում իրականացնում է անհատույց, և 2) այդ պաշտոնը չի ենթադրում ֆինանսական միջոցների տնօրինում, կազմակերպության անունից քաղաքացիաիրավական գործարքների կնքում կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կազմակերպության ներկայացուցչության իրականացում:

Դատավորը չի կարող գործել որպես կտակակատար կամ գույքի հավատարմագրային կառավարիչ, բացառությամբ այն դեպքերի, երբ նա անհատույց գործում է իր մերձավոր ազգականի կամ իր խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձի գույքի կապակցությամբ:

Դատական իշխանության անկախությունը գնահատելիս հաշվի է առնվում նաև ֆինանսավորումը:

Այսպես՝ ՀՀ դատական օրենսգրքի 38-րդ հոդվածի կարգավորումներով՝ դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեից՝ յուրաքանչյուր դատարանի և Բարձրագույն դատական խորհրդի համար առանձին տողով: Դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի ֆինանսավորումը պետք է իրականացվի այնպես, որ ապահովվեն նրանց բնականոն գործունեության համար անհրաժեշտ ծախսերը:

Դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և բյուջետային հայտի նախագիծը նախապատրաստում է Դատական դեպարտամենտը:

Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմինը, ստանալով դատարանների աշխատակազմերի նախապատրաստած միջնաժամկետ ծախսերի ծրագրերի կամ բյուջետային հայտի նախագծերը, կազմում է դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի միջնաժամկետ ծախսերի ծրագրի կամ բյուջետային հայտի նախագիծը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2021 թվականին Հայաստանի դատական համակարգին տրամադրված բյուջեն պետական բյուջեի ծախսերի մոտ 0.66%-ն էր, որը զգալիորեն ցածր է վերը նշված ՄԱԿ-ի զեկուցողի կողմից խորհուրդ տրվող չափից:

Պետք է ընդգծել, որ 2021 թվականին առաջին անգամ վերջին տարիների ընթացքում արձանագրվել է դատական համակարգին տրամադրվող բյուջեի ոչ թե ավելացում, այլ կրճատում, թեև արձանագրված կարիքների՝ 2020 թվականի համեմատ այն կրճատվել է 497 023.1 հազար դրամով: Նվազել է նաև մեկ շնչի հաշվարկով դատական համակարգին տրամադրվող գումարը՝ շարունակելով վերջին տարիների միտումը:

Ավելին՝ 2015-2021 թվականների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև բացարձակ թվերի առումով դատական համակարգին հատկացված բյուջեն որոշ չափով ավելացել է, սակայն պետական բյուջեի՝ դատական համակարգին հատկացվող մասնաբաժինը նվազման կայուն միտում է գրանցում՝ իջնելով 0.81 %-ից մինչև 0.66 %-ի¹¹⁵:

2020 թվականի բյուջեի հայտի հիմնավորման, ինչպես նաև ԲԴԽ տարեկան հաղորդման մեջ նշվում է, որ ՀՀ պետական բյուջեից մեկ շնչին դատական իշխանությանը հատկացվող գումարը մոտ 8 եվրո է: Այս ցուցանիշը մոտ 8 անգամ ցածր է եվրոպական միջին ցուցանիշից (64 եվրո)¹¹⁶:

Ներկայացված միտումներն ավելի անհանգստացնող են դատարանների ծանրաբեռնվածության զգալի աճի համատեքստում. աճել է չավարտված գործերի թիվը և գործերն ավարտելու համար անհրաժեշտ ժամանակը՝ պայմանավորված դատական գործերի թվի աճով և

¹¹⁵Տե՛ս <https://tinyurl.com/3a54rryy> հղումով:

¹¹⁶ Նույն տեղում:

դատավորների անփոփոխ թվով¹¹⁷: Դատական իշխանության անկախությամբ բոլոր մակարդակներում դատավորներին վերապահվում են իրավասություններ և պարտականություններ: Դրանք պատշաճ մակարդակով իրացնելու նպատակով անհրաժեշտ են մասնագիտական բարձր ունակություններ, որոնք կատարելագործելու և պահպանելու համար նրանք պետք է անցնեն վերապատրաստումներ: Դատական համակարգի նկատմամբ քաղաքացիների վստահությունը կամրապնդվի, եթե դատավորներն ունենան խոր և բազմաբնույթ գիտելիքներ, որոնք իրավունքի տեխնիկական ոլորտից զատ կընդգրկեն սոցիալական ոլորտներ: Նման վերապատրաստումը նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիայի պահանջներին համապատասխան դատավորների անկախության և անաչառության երաշխիքն է: Դատավորների պարտադիր վերապատրաստումը նախատեսված է ՀՀ դատական օրենսգրքով: Դատավորների, ՀՀ քննչական կոմիտեի և հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, դատախազների, դատավորների թեկնածուների ցուցակում գտնվող անձանց վերապատրաստումը կազմակերպում և անցկացնում է ՀՀ արդարադատության ակադեմիան:

Ուսումնասիրությունը վկայում է, որ վերապատրաստումներն իրականացվում են որոշակի կոնկրետ ոլորտներին վերաբերող թեմաներով, մինչդեռ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դատական կարգով պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ դրանք չեն անցկացվում: Միննույն ժամանակ այս հետազոտության շրջանակում վերապատրաստումներին որակական գնահատական չի տրվել, դրանց բովանդակությունը, ձևաչափը և արդյունավետությունը կարող են լինել այլ ուսումնասիրության թեմա:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 22.02.2019 թ. 4/11-Լ որոշմամբ հաստատված է փաստաբանների վերապատրաստման կարգը, որին համապատասխան սահմանվում է վերապատրաստման դասընթացների կազմակերպման ժամանակացույցը: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ փաստաբանների վերապատրաստումները, օրինակ, ընդգրկել են հիմնականում աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտը, կոռուպցիայի դեմ պայքարում փաստաբանների մարտահրավերները և այլն:

Այսպիսով՝ Կոմիտեի առաջարկությունները մասամբ են կատարվել:

11. Խտրականության դեմ պայքար

2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում նշվում է, որ ՏՍՄԻԿ-ն անհանգստացած է խտրականության դեմ պայքարի նորմատիվ-իրավական համապարփակ հիմունքների կարգավորման բացակայության առնչությամբ, որոնք ներառում են ՏՍՄԻՄԴ-ում նշված խտրականության բոլոր շարժառիթները:

ՏՍՄԻԿ-ն առաջարկում է, որ մասնակից պետությունն ընդունի հակախտրականության դեմ ուղղված համապարփակ օրենսդրություն, որը երաշխավորում է բոլորի պաշտպանությունը

¹¹⁷ Նույն տեղում: Ավելի մանրամասն ստացված գործերի, ավարտված գործերի, փաստացի տրամադրված բյուջեի մասին տե՛ս ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով ԲԴԽ էլքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ներառյալ 2017-2018 թվականների, տեղեկանքը:

խտրականությունից տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից օգտվելու հարցում, ինչպես նախատեսված է ՏՄԻԿ-ի 2-րդ հոդվածի 2-րդ կետով: Այս առումով մասնակից պետության ուշադրությունը հրավիրում է իր թիվ 20 (2009) խտրականության մասին ընդհանուր դիտարկմանը՝ կապված տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հետ¹¹⁸:

Խտրականության արգելքը սահմանված է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով, համաձայն որի՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Խտրականությունն արգելող նորմերն ամրագրված են իրավական այլ ակտերով, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածով, որի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներից է աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 248-րդ հոդվածը սահմանում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը քաղաքացիների հավասարության սկզբունքներով:

Որոշ իրավական ակտերում խտրականության արգելքի վերաբերյալ դրույթներն ընդհանրապես բացակայում են, օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում և այլն:

ՀՀ Սահմանադրությունը հստակ ամրագրում է նաև կանանց ու տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը: Ընդ որում՝ Սահմանադրության 86-րդ հոդվածը հատկապես ընդգծում է, որ, ի թիվս այլնի, պետության քաղաքականության հիմնական նպատակներից է «կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը»:

Հայաստանը 1993 թվականին վավերացրել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և կանանց իրավունքներն ամրագրող մի շարք միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման երաշխիքներ են նախատեսված նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» 2013 թվականի ՀՀ օրենքում, որը, սակայն, չի նախատեսում կոնկրետ դեպքերում իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման կառուցակարգեր:

¹¹⁸ Տե՛ս ՏՄԻԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

2019 թվականի սեպտեմբերի 19-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության թիվ 1334-Լ որոշումը:

ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից են իրավահավասարության ամրապնդումն ու կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը: ՄԱԿ-ի Կայուն զարգացման 5-րդ նպատակը սահմանում է գենդերային հավասարությունը:

Մինչդեռ պետք է արձանագրել, որ ՀՀ ներպետական օրենսդրությամբ բացակայում է «խտրականություն» հասկացությունը, ինչն անարդյունավետ է դարձնում մարդկանց իրավունքների պաշտպանության իրավական միջոցները: Բացի այդ՝ բացակայում է իրավահավասարությունը երաշխավորող և մարդկանց իրավունքների խախտման դեպքում պաշտպանության արդյունավետ մեխանիզմներն ամրագրող համապարփակ օրենք, ինչը կրիսի նաև ՀՀ միջազգային պարտավորություններից:

Մասնավորապես խտրականության արգելքի և իրավահավասարության ապահովման գործնական և արդյունավետ կառուցակարգեր նախատեսելը բխում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայից, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրից, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայից և հատկապես դրա 12-րդ արձանագրության 1-ին հոդվածից, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայից, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայից և մի շարք այլ միջազգային փաստաթղթերից, ինչպես նաև ՏՄՄԻԿ-ի՝ ՀՀ երկրորդ և երրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ Եզրափակիչ դիտարկումներից, մարդու իրավունքների միջազգային ատյանների կողմից Հայաստանին ուղղված հանձնարարականներից, այդ թվում՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի 2017 թվականի մայիսի 12-ին հրապարակած ՀՀ վեցերորդ և յոթերորդ պարբերական զեկույցների վերաբերյալ դիտարկումներից, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի՝ ՀՀ հինգերորդ և վեցերորդ պարբերական զեկույցների վերաբերյալ իր Եզրափակիչ դիտարկումներից, ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի՝ Հայաստանի սկզբնական զեկույցի վերաբերյալ 2017 թվականի ապրիլի 7-ին կայացած 325-րդ հանդիպման դիտարկումներից և մի շարք այլ փաստաթղթերից:

Ոլորտի համապարփակ օրենսդրության ընդունման կապակցությամբ պետության կողմից ձեռնարկվել են հետևյալ քայլերը:

ՀՀ Կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշմամբ հաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը¹¹⁹, որի 8-րդ կետի շրջանակում սահմանվել է ՀՀ օրենսդրության՝ խտրականության արգելմանը վերաբերող միջազգային իրավական նորմերին համապատասխանության

¹¹⁹ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110649> հղումով:

ուսումնասիրման անհրաժեշտությունը, ինչպես նաև «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենք ընդունելու նպատակահարմարության քննարկումը:

2017 թվականի մայիսի 4-ին հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի 77-րդ կետով արդեն նախատեսված է իրավահավասարության ապահովման համար օրենսդրական կառուցակարգերի ստեղծումը¹²⁰:

2019 թվականին ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում շրջանառության մեջ է դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանվում են «խտրականություն» հասկացությունը և դրա տեսակները, կանոնակարգվում են խտրականության վերացմանն ուղղված և խտրականությունից պաշտպանվելու իրավական մեխանիզմները, ինչպես նաև Իրավահավասարության խորհրդի կարգավիճակը, խնդիրները և գործունեությունը¹²¹:

Նախագծերի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Ամրագրելով խտրականության համընդհանուր արգելքը՝ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը սահմանում է «խտրականություն հասկացությունը» և դրա տեսակները, ինչպիսիք են ուղղակի խտրականությունը, անուղղակի խտրականությունը, խտրականության հրահրումը, հետապնդումը և սեգրեգացիան: Անկյունաքարային նշանակություն ունի Նախագծով խտրականության վերաբերյալ բողոքների քննության համար ապացուցման բեռի բաշխումը: Մասնավորապես, ինչպես Նախագծում, այնպես էլ վերաբերելի դատավարական օրենսգրքերում լրացում կատարելու մասին հարակից նախագծերում սահմանվում է, որ թեև բողոք բերած անձը ներկայացնում է տվյալներ և փաստարկներ, որոնք առերևույթ հիմնավորում են խտրականության առկայությունը, խտրականության բացակայությունն ապացուցելու պարտականությունը, այնուամենայնիվ, կրում է պատասխանողը:

«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծում հասարակական կյանքի առանձին ոլորտներում խտրականության դեպքերի վերացմանը նվիրված է առանձին գլուխ, որն անդրադառնում է անձի իրավունքների տեսանկյունից այնպիսի հիմնաքարային ոլորտների, ինչպիսիք են հավասարության ապահովումն աշխատանքի և հանրությանը մատչելի ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման, տնտեսական գործունեության ոլորտներում¹²²:

¹²⁰ Տե՛ս <https://www.arlis.am/documentView.aspx?docid=113223> հղումով:

¹²¹ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/1801/justification> հղումով:

¹²² Նույն տեղում:

Նախագծով հավասարության մարմնի կարգավիճակը վերապահվում է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին:

«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի հետ միաժամանակ շրջանառության մեջ է դրվել «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը¹²³, որի ընդունման արդյունքում ակնկալվում է հստակեցնել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շրջանակը, սահմանել ազգային փոքրամասնությունների հիմնական իրավունքները և ազատությունները, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունները դրանց իրականացման ապահովման գործում:

Նախագծով նախատեսվում է նաև ստեղծել Ազգային փոքրամասնությունների պալատ, որը կծառայի որպես հարթակ ազգային փոքրամասնությունների հարցերը քննարկելու և լուծումներ առաջարկելու համար: Նման կարգավորումը օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքեր կստեղծի ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածով և ՀՀ միջազգային պայմանագրերով ամրագրված՝ Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների համակարգված իրագործումն ապահովելու համար¹²⁴:

Իրականացված ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ խտրականությունը հիմնականում ազգային ավանդապաշտական մտածողության և մոտեցումների պահպանման արդյունք է, և այդ մտածողության փոփոխությունը երկարաժամկետ գործընթաց է: Փորձագետների մի մասը նշել է, որ նման ազգային պահպանողական մտածողությունը նաև իրագեկված չլինելու, գիտելիքի պակասի հետևանք է. հասարակությունը խտրականությունը որպես խնդիր չի դիտարկում, որովհետև չունի խտրական վերաբերմունքի մասին պատկերացում, գիտելիք¹²⁵:

Հաճախ հասարակական լայն շրջանակներն այս կամ այն սոցիալական խմբի նկատմամբ ունեն խտրական մոտեցում, որովհետև իրապես կամ օբյեկտիվորեն տեղեկացված չեն այդ խմբերի այս կամ այն կերպ տարբերակվող հատկանիշների մասին, որոնց նկատմամբ ունեն ներքին վախեր կամ կարծրատիպներ:

Ըստ խտրականության տեսանկյունից առավել ռիսկային, խոցելի խմբերի վերաբերյալ փորձագետների կարծիքների՝ խտրական վերաբերմունքի առավել հաճախ ենթարկվում են սեռական, կրոնական փոքրամասնությունները, հաշմանդամություն ունեցող անձինք, սոցիալապես անապահով ընտանիքները, կանայք, տարեցները, ինչպես նաև փակ հաստատություններում գտնվող անձինք: Այսպիսով, ըստ փորձագիտական գնահատականի, Հայաստանում խտրական մոտեցում առավել հաճախ դրսևորվում է կրոնի, սեռական կողմնորոշման, ֆիզիկական և հոգեկան առողջության, գույքային դրության, սեռի, տարիքի հիմքերով: Որոշ փորձագետներ խտրականության հիմք են համարում նաև որոշակի խմբին պատկանելությունը, որի դեպքում յուրային, կլանային, ազգակցա-արյունակցական կապերի

¹²³ Նույն տեղում:

¹²⁴ Նույն տեղում:

¹²⁵ Տե՛ս «Խտրականության փորձագիտական ընկալումները Հայաստանում» որակական հետազոտության արդյունքների վերլուծությունը https://www.moj.am/storage/uploads/T8kk_4_1.pdf հղումով:

հիմքով ստեղծված խմբերի նկատմամբ ցուցաբերվում է առավել հովանավորյալ մոտեցում՝ ի վնաս մյուս խմբերի¹²⁶:

Խտրական մոտեցումները դրսևորվում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում. սոցիալական դաշտում, աշխատավայրում, հանրային, մշակութային վայրերում, կրթական հաստատություններում, խտրականության ենթարկված անձանց առաջնային սոցիալական միջավայրում: Խտրական մոտեցումները բավական տարածված են զբաղվածության ոլորտում, որտեղ անուղղակի և ուղղակի խտրական մոտեցումները հանգեցնում են սոցիալական բացառման, սոցիալ-տնտեսական լուրջ հետևանքների և ընդգրկում բնակչության բավական լայն շերտեր:

Ըստ փորձագետների՝ խտրականությունը զբաղվածության ոլորտում դրսևորվում է սեռի, տարիքի, սոցիալական կամ առողջական կարգավիճակի հիմքերով ինչպես աշխատանքի ընդունելու, այնպես էլ աշխատանքային, պաշտոնեական առաջխաղացման դեպքերում: Կրթության համակարգում սոցիալական լայն շերտեր են ենթարկվում խտրականության, որը հատկապես հիմնված է երեխաների ծնողների սոցիալական դիրքի վրա¹²⁷:

Այսպիսով, հաշվի առնելով, որ դեռևս չի ընդունվել խտրականության արգելքի մասին առանձին օրենք, գտնում ենք, որ Կոմիտեի դիտարկումները կատարված չեն:

12. Ընտանեկան բռնության դեմ պայքար

2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում SUՄԻԿ-ը մտահոգություն է հայտնել կանանց նկատմամբ բռնության զգալի մակարդակի վերաբերյալ, հատկապես ընտանիքում. և ավստսանք է հայտնել, որ ընտանեկան բռնությունը քրեական հետապնդելի արարք չէ օրենսդրությամբ: SUՄԻԿ-ը նաև մտահոգված է ընտանեկան բռնության զոհերի համար նախատեսված ապաստարանների անբավարար քանակով¹²⁸:

SUՄԻԿ-ն առաջարկում է մասնակից պետությանը պատշաճ կերպով արձագանքել ընտանեկան բռնության խնդրին կանխարգելիչ, պաշտպանության և պատասխանատվության միջոցներով: Ըստ այդմ՝ SUՄԻԿ-ը հատուկ առաջարկում է մասնակից պետությանը.

- *անհապաղ ընդունել օրենսդրություն, որն ուղղակիորեն արգելում է ընտանեկան բռնությունը և այն բնորոշում որպես առանձին հանցագործություն,*
- *ապահովել ընտանեկան բռնության զոհերի համար ապաստարանների բավարար քանակ,*
- *իրականացնել իրավապահ մարմինների աշխատակիցների՝ ոստիկանների, դատախազության և դատարանների աշխատակիցների, ինչպես նաև սոցիալական աշխատողների, ուսուցիչների և լայն հանրության համար ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման միջոցառումներ:*

ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ հանձնաժողովը Հայաստանի չորրորդ պարբերական հաշվետվության (2017) վերաբերյալ իր Եզրափակիչ դիտարկումներում արտահայտել է

¹²⁶ Նույն տեղում:

¹²⁷ Նույն տեղում:

¹²⁸ Տե՛ս SUՄԻԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

մտահոգություն առ այն, որ Հայաստանում ընտանեկան բռնությունը տարածված է, և հաճախ տուժածները չեն բողոքում նման բռնությունն արդարացնող գենդերային կարծրատիպների պատճառով¹²⁹:

Ընտանեկան բռնության հարցի վերաբերյալ թերի պատկերացումների և թյուրընկալման օրինակ է այն, որ այդ խնդիրը և դրա շուրջ քննարկումը շարունակում են կրել ներընտանեկան բնույթ: Այս կարծրատիպային մոտեցումն առավել խնդրահարույց է դառնում իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների կողմից այդ մոտեցման դրսևորման պարագայում, քանի որ այն հաճախ հանգեցնում է կրկնակի գոհացման: Սա էլ իր հերթին կարող է խոչընդոտել հետագա դեպքերի բացահայտումը՝ հանգեցնելով մի իրավիճակի, երբ տուժողները խուսափում են կրկին իրավասու մարմիններին դիմելուց¹³⁰:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքներով՝ հարցվածների 35.7 %-ը, որից 44.6 %-ը տղամարդ է, և 27.8 %-ը՝ կանայք, կարծում են, որ կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ ընտանիքի միասնությունը պահպանելու համար: Որոշ դեպքերում «կինը ծեծի է արժանի» պնդմանը համաձայն է հարցվածների 27.7 %-ը, որից 35.2 %-ը տղամարդ է, 21 %-ը՝ կին: Ավելին՝ յուրաքանչյուր երեք տղամարդ հարցվածներից մեկը (35.2 %) համաձայնել է այն պնդմանը, որ որոշ դեպքերում կինն արժանի է, որ իրեն ծեծեն. յուրաքանչյուր հինգ կին հարցվածներից մեկն է համաձայնել դրան (21.0 %): Հարցվածների 70.3 %-ը, որից 78.6 %-ը տղամարդ է, իսկ 62.9 %-ը՝ կին, արդարացնում է գուզընկերոջ կողմից ֆիզիկական բռնությունը¹³¹:

Այս կապակցությամբ շատ կարևոր է տարբեր մարմինների ու անձանց համար հատուկ դասընթացների և վերապատրաստումների անցկացումը, որոնք ուղղված կլինեն կոնկրետ հասարակությունում և ընտանիքում դերի կանանց վերաբերյալ կարծրատիպների ու դրանցով պայմանավորված ընտանեկան բռնության դեմ պայքարի խնդիրների հաղթահարմանը:

Քննարկվող խնդրի շրջանակում հարկ է նաև նշել, որ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ վերապատրաստման դասընթացներ են անցկացվել ՀՀ բոլոր մարզերում գործող ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների և 2 ապաստարանի սոցիալական աշխատողների, իրավաբանների և հոգեբանների համար, ինչպես նաև նախարարության ենթակայությամբ գործող 16 ՊՈԱԿ-ների սոցիալական աշխատողների և հոգեբանների համար, վերապատրաստումներ են անցկացվել նաև նախարարության ոլորտային ստորաբաժանումների աշխատակիցների, ինչպես նաև «114» և «911» թեժ գծի աշխատակիցների համար: Ընդհանուր առմամբ վերոգրյալ վերապատրաստումներին մասնակցել է ոլորտային 110 աշխատակից¹³²:

¹²⁹ Տե՛ս Խոշտանգումների դեմ հանձնաժողով, Հայաստանի չորրորդ պարբերական հաշվետվության վերաբերյալ Եզրափակիչ դիտարկումներ, 26 հունվարի 2017թ., CAT/C/ARM/CO/4:

¹³⁰ Հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արձանագրվել են նաև դատարանի ու նախաքննության մարմինների կողմից երկակի ստանդարտների կիրառման դեպքեր, որոնց հիմքով էլ խախտվել է տուժողի արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների իրավունքը, հասանելի է՝ <http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2017/01/Report-short.pdf?x24321> հղումով:

¹³¹ Տե՛ս <https://rm.coe.int/eur-justice-arm/168093c14b> հղումով:

¹³² Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2021 թվականի տարեկան հաղորդումը <https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf> հղումով, էջ 1087-1093:

Ըստ նույն նախարարության՝ 2021 թվականի ընթացքում մարզային գանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար կազմակերպվել է վերապատրաստման եռօրյա դասընթաց գենդերային հավասարության, ընտանեկան և կանանց նկատմամբ բռնության կանխարգելման վերաբերյալ, որի շրջանակում գանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել ծանոթանալու կանանց նկատմամբ դրսևորվող խտրականության դեպքերին, գենդերային կարծրատիպների դրսևորումներին ու բռնության ենթարկված կանանց մասնակցությամբ հարցազրույց անցկացնելու առանձնահատկություններին:

ՀՀ ոստիկանության պարզաբանումների համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելման ոլորտում ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողների մասնագիտական կարողությունների զարգացմանն ու ուժեղացմանն ուղղված միջոցառումների շրջանակում ՀՀ ոստիկանության ՀԱԱԳՎ ԱՀ և ԸԲԿ վարչության նախաձեռնությամբ և միջազգային ու տեղական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային փորձագետների կողմից ոստիկանության անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման բաժանմունքների (խմբերի) ծառայողների համար (145) կազմակերպվել և անցկացվել են վերապատրաստման դասընթացներ: Բացի այդ՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման կենտրոնում 2021 թվականի ընթացքում «Ընտանիքում բռնություն և կանխարգելում» թեմայով վերապատրաստվել է ոստիկանության այլ ստորաբաժանումների 113 ծառայող¹³³:

Ըստ ԿԳՄՄՆ հանրակրթական ծրագրերի դասագրքերի՝ սեռով պայմանավորված կարծրատիպների վերհանման և դրանց փոփոխության ենթարկելու ուղղությամբ նախարարության կողմից փորձագիտական կարծիքի են ներկայացվել նոր հանրակրթության պետական չափորոշիչի համաձայն մշակված առարկայական ծրագրերն ու չափորոշիչները, և արվել են դիտարկումներ և առաջարկներ, ըստ որոնց՝ վերանայվել և լրամշակվել են չափորոշիչները¹³⁴: «Առողջ ապրելակերպ» դասընթացի բովանդակային 8 բաղադրիչներից մեկի՝ «Փոխհարաբերություններ, սեռային խնդիրներ», ուղղությամբ բավականաչափ նյութ է ներառվել 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների ձեռնարկներում, մշակվել են ինտերակտիվ դասեր՝ որպես օգնություն ուսուցիչներին և սովորողներին: Ստեղծված ձեռնարկները 2021–2022 ուստարվա 2-րդ կիսամյակից փորձարկվելու են Տավուշի մարզի՝ փորձարկման գործընթացում ներառված բոլոր դպրոցներում: Բացի այդ՝ Տավուշի մարզում հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայական նոր չափորոշիչների ու ծրագրերի փորձարկման նպատակով փորձագիտական խմբերի կողմից ստեղծվող ուսումնական նյութերը փորձաքննելիս հաշվի են առնվում դրանց՝ սեռային կարծրատիպներից զերծ լինելը, տղաների ու աղջիկների հավասարաչափ արտացոլումը նկարներում, տեքստերում և բովանդակային այլ բաղադրիչներում, մասնագիտությունների ու դերերի ներկայացումն առանց սեռային խտրականության¹³⁵:

ԿԳՄՄՆ տվյալների համաձայն՝ ՀՄԿ-ն և շվեդական «Գլոբալ թու լոքալ» կազմակերպությունը համատեղ 2021 թվականին Երևանի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի 5 դպրոցների մանկավարժների համար անցկացրել են «Բուլինգի նվազեցումը հանրակրթական դպրոցներում» թեմայով վերապատրաստումներ:

¹³³ Նույն տեղում:

¹³⁴ Նույն տեղում:

¹³⁵ Նույն տեղում:

ՀՄԿ-ն «Դասավանդի՛ր, Հայաստան» կազմակերպության հետ համագործակցությամբ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ 2021 թվականին իրականացրել է «Գենդերային ինտեգրման խթանում ուսուցիչների կարողությունների զարգացման ծրագրերում և համայնքային ներգրավման նախաձեռնություններում» ծրագիրը, որի շրջանակում մշակված վերապատրաստման դասընթացների մոդուլներից մեկը վերաբերում էր գենդերազգայուն և գենդերարձագանքող մանկավարժությանը և շեշտադրում էր սեռով պայմանավորված բռնությունների նվազեցման կարևորությունը: Վերոնշյալ մոդուլը ներդրվել է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվող «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի վերապատրաստման մոդուլների ցանկում: Ծրագրի երկու փուլերում գենդերարձագանքող մանկավարժության վերաբերյալ դասընթացների են մասնակցել հանրապետության 120 դպրոցների 2861 մանկավարժներ:

ՆՄՄԿՈՒ համակարգի մանկավարժների համար կազմակերպված վերապատրաստումներն անցկացվել են թե՛ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության և թե՛ իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով: Վերապատրաստումներին մասնակցել է 1141 աշխատակից¹³⁶:

Առողջապահության նախարարության պարզաբանումների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում բժշկական հաստատություններում պարբերական վերապատրաստումներ, ընտանիքում բռնության հետևանքով բժշկական օգնության դիմած անձանց հասանելի հոգեբանական և այլ ծառայությունների մասին տեղեկացնելու, նրանց աջակցության կենտրոններ ուղղորդելու վերաբերյալ դասընթացներ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից չեն կազմակերպվել¹³⁷:

2021 թվականի ընթացքում ընտանիքում բռնության դեպքերի մասին ՀՀ ոստիկանությանը, քննչական կոմիտեին կամ դատախազությանը հայտնելու պայմանների և կարգի վերաբերյալ բժշկական կազմակերպությունների աշխատակիցներին իրազեկելու միջոցառումներ չեն իրականացվել:

Գենդերային քաղաքականության ոլորտում 2021 թվականին ապահովվել է պետական բյուջեի համաֆինանսավորմամբ բոլոր մարզերում և Երևանում գործող ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների և ապաստարանների գործունեության շարունակականությունը. 2021 թվականին ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոններին է դիմել և օգնություն ստացել 1516 շահառու, իսկ ապաստարանների ծառայություններից օգտվել է 160 շահառու:

Վերոգրյալ աջակցության կենտրոններն ընտանիքում բռնության ենթարկվածներին, բացի օրենսդրությամբ նախատեսված սոցիալ-հոգեբանական և իրավաբանական աջակցության տրամադրումից, ուղղորդել և աջակցել են նաև հմտությունների ձեռքբերման, կարողությունների

¹³⁶ Նույն տեղում:

¹³⁷ Նույն տեղում:

զարգացման և կայուն աշխատանք գտնելու հարցերում. կայուն աշխատանքով է ապահովվել 88 կին¹³⁸:

Արդյունքում, պետք է արձանագրել, որ դեռևս արդիական են հասարակությունում կանանց նկատմամբ և ընտանիքում բռնության վերաբերյալ թյուրընկալումները, պատկերացումներն ու կարծրատիպները:

Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության հարաբերությունները կարգավորող հիմնական իրավական փաստաթուղթը «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքն է, որն ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 13-ին, ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 31-ից:

Այն կանոնակարգում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության կազմակերպչական հիմքերը, սահմանում է «ընտանիքում բռնություն» հասկացությունը, ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում իրավասու մարմինների լիազորությունները, պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման հիմքերը, ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկությունների իրավական պաշտպանության առանձնահատկությունները:

Ըստ այդմ՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ նախատեսվել է բռնությունից տուժած անձանց համար բազմաթիվ ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը: Այսպես՝ օրենքով սահմանվում է պետության կողմից ապաստարանների, աջակցման կենտրոնների ստեղծման, ինչպես նաև այլ ծառայությունների մատուցման հնարավորությունը:

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ամրագրվում են ապաստարանների ստեղծման ուղղությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության լիազորությունները: Մասնավորապես, նույն կետի համաձայն, ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազոր մարմինը հիմնում է ապաստարաններ, ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ կնքում ապաստարանի ֆինանսավորման պայմանագիր Կառավարության սահմանած պայմանագրի օրինակելի ձևի հիման վրա և վերահսկողություն իրականացնում իր կողմից մասնակի կամ ամբողջապես ֆինանսավորվող ապաստարանների գործունեության նկատմամբ, այդ թվում՝ ֆինանսական միջոցների օգտագործման մասով:

Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ աջակցության կենտրոնների և ապաստարանների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից մեկ տարի անց:

¹³⁸ Տե՛ս «ՀՀ Կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2021 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին» զեկույցը http://parliament.am/draft_docs8/176_2022_Karavarityan_Zekuyts.pdf հղումով:

Այսինքն՝ 2019 թվականի հունվարից ապաստարանները պետք է հիմնադրված լինեին, մինչդեռ 2021 թվականին հանրապետությունում գործել է 2 ապաստարան¹³⁹:

«Բռնությունից կանանց պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2002)5 հանձնարարականով¹⁴⁰ նշվում է, որ պետությունները պետք է ցուցաբերեն պատշաճ ջանասիրություն, որպեսզի կանխվի, քննություն իրականացվի և պատասխանատվություն կիրառվի բռնություն գործադրած անձանց նկատմամբ: Նույն հանձնարարականի 3-րդ կետով նախատեսվում է բռնության դեմ պայքարի քաղաքականություն մշակելիս բռնության ենթարկված անձանց անվտանգությունը հիմք ընդունելու պետությունների պարտականությունը:

Ըստ նույն հանձնարարականի 58-րդ կետի «դ» ենթակետի՝ անդամ պետությունները պետք է քաջալերեն բռնությունից տուժած անձանց պաշտպանության նախաձեռնող (pro-active) ծառայություններ, որոնց շնորհիվ բռնությունից տուժած անձանց հետ կապ կհաստատվի անմիջապես ոստիկանությանը դեպքի մասին հայտնի դառնալու պահից: Նույն կետի «ե» ենթակետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ապահովեն արդյունավետ համագործակցություն բոլոր իրավասու մարմինների միջև, ինչպիսիք են ոստիկանությունը, դատարանները և բռնությունից տուժած անձանց պաշտպանության ծառայությունները, որպեսզի տուժողներին հնարավորություն ընձեռվեն կիրառելու աջակցություն ստանալու համար անհրաժեշտ բոլոր հնարավոր իրավական և գործնական քայլերը:

Այսպիսով՝ Կոմիտեի առաջարկությունները մասամբ են կատարվել, ընդունվել է ընտանեկան բռնությունն ուղղակիորեն բնորոշող օրենսդրություն, ստեղծվել են ապաստարաններ, և շարունակաբար իրականացվում են ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման միջոցառումներ: Մինչդեռ դեռևս խնդրահարույց է ապաստարանների բավարար քանակը, ինչպես նաև հանրության և հատկապես ընտանեկան բռնության զոհերի հետ ուղղակիորեն աշխատող իրավապահ համակարգի աշխատակիցների իրազեկվածության բարձրացման արդյունավետությունը:

13. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ

13.1. Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ կարծրատիպերը

և խտրական մոտեցումները

2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում ՏՄՄԻԿ-ը մտահոգությամբ նշում է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ համատարած խտրականությունը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող

¹³⁹ Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2021 թվականի տարեկան հաղորդումը <https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf> հղումով, էջ 1093-1103:

¹⁴⁰ Տե՛ս Եվրոպայի խորհրդի «Բռնությունից կանանց պաշտպանության մասին» Նախարարների կոմիտեի թիվ (2002)5 հանձնարարական, հասանելի է https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e2612 հղումով:

անձանց սոցիալական մեկուսացումը (բացառումը) բոլոր ոլորտներում: SUՄԻԿ-ն այնուհետև շեշտում է մասնակից պետության տրամադրած տեղեկատվության անբավարարությունը հաշմանդամություն ունեցող անձանց համատարած խարանի բացառման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ:

Ըստ այդմ՝ SUՄԻԿ-ն առաջարկում է մասնակից պետությանն անդրադառնալ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական բացառմանը տեղեկատվական արշավների և իրազեկման բարձրացման այլ միջոցներով, ինչպես նաև ընդունել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և նրանց սոցիալական ներառման մասին օրենքի նախագիծ, որը միաժամանակ կներառի հաշմանդամություն ունեցող անձանց համար «ողջամիտ հարմարեցումների» և հանրային ծառայությունների մատչելիության մասին դրույթներ¹⁴¹:

Հայաստանում տարիներ շարունակ կիրառված հաշմանդամության բժշկական մոդելի պատճառով հաշմանդամություն ունեցող անձինք չեն դիտվել որպես իրավունքի լիիրավ սուբյեկտներ, իսկ հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների իրացումն առնչվել է բացառապես վերջիններիս օգնություն տրամադրելու ձևով: Արդյունքում, հաշմանդամություն ունեցող մարդիկ մեկուսացվել են հասարակությունից և չեն կարողացել իրացնել իրենց իրավունքները:

Հաշմանդամություն ունեցող մարդկանց մասին տարածված մեկ այլ կարծիք է, որ նրանց առաքելությունը բարություն, մարդասիրություն և մեծահոգություն առաջացնելն է այն պատճառով, որ նրանք կյանքի բավարար մակարդակ չունեն, ինտեգրված չեն և մշտական կարիքի մեջ են: Ըստ այս կարծրատիպի՝ սահմանափակ կարողությունների տեր անձինք չեն կարող ընտանիք կազմել, լավ աշխատանք ունենալ և լիարժեք կյանքով ապրել¹⁴²:

ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 8-րդ հոդվածն ամրագրում է պետությունների պարտավորությունը՝ ձեռնարկել անհապաղ, արդյունավետ և անհրաժեշտ միջոցներ՝ պայքարելու համար հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող, նաև սեռային ու տարիքային առանձնահատկություններով պայմանավորված կարծրատիպների, նախապաշարմունքների և վնասակար ավանդույթների դեմ կյանքի բոլոր բնագավառներում:

1993 թվականին ընդունված «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը չէր համապատասխանում Կոնվենցիայի պահանջներին, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման միջազգային սկզբունքներին ու չափորոշիչներին և ամբողջությամբ հիմնված էր հաշմանդամության բժշկական մոդելի վրա:

Ըստ այդմ՝ 2021 թվականին ընդունվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը¹⁴³, որն ամրագրում է հաշմանդամության, մատչելիության, խելամիտ հարմարեցումների, համընդհանուր դիզայնի, հաշմանդամության հիմքով խտրականության, անկախ կյանքի սահմանումները՝ հիմնվելով հաշմանդամության ֆունկցիոնալության մոդելի վրա: Օրենքը հնարավորություն է տալիս նաև հասարակական կազմակերպություններին խտրականության հիմքով ներկայացնելու դատական հայց՝ իրենց շահառուների իրավունքները

¹⁴¹ Տե՛ս SUՄԻԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

¹⁴² Տե՛ս <https://tinyurl.com/2p8tvf8j> հղումով:

¹⁴³ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=158714> հղումով:

պաշտպանելու նպատակով, եթե նրանք, առողջական վիճակով կամ այլ հանգամանքով պայմանավորված, ի վիճակի չեն անձամբ իրենց իրավունքները ներկայացնելու դատարանում:

Օրենքով ամրագրվել է նաև անձնական օգնականի ինստիտուտը: Նախատեսվում է, որ անձնական օգնականի ծառայությունները կտրամադրվեն հաշմանդամություն ունեցող անձին (երեխային) ծառայությունների անհատական ծրագրով սահմանված լինելու դեպքում: Ծառայությունը կմատուցվի անձնական օգնականի և հաշմանդամություն ունեցող անձի (նրա օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա, որում ներառվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Չնայած վերոգրյալին՝ այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Օրենքի կիրառումն ապահովելու նպատակով պետք է մշակվեն և ընդունվեն մի շարք ենթաօրենսդրական ակտեր, որոնք դեռևս չեն ընդունվել: Մասնավորապես պետք է ընդունվեն.

- «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022-2027 թվականների համալիր ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը,
- «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը,
- «Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը,
- «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող մատչելիության պահանջները հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել, իսկ սեպտեմբերի 1-ին ուժի մեջ է մտել նաև «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքը¹⁴⁴: Սույն օրենքը կարգավորում է վարչարարության շրջանակում անձի ֆունկցիոնալության գնահատման, դրա սահմանափակման աստիճանը որոշելու (սահմանվում է թեթև, միջին, ծանր և խորն աստիճաններ, ի տարբերություն նախկին օրենքով սահմանված՝ 1-ին, 2-րդ և 3-րդ խմբերի), հաշմանդամություն ունեցող անձի ծառայությունների անհատական ծրագիրը որոշելու, գնահատման հանձնաժողովների որոշումների բողոքարկման և վերահսկողության հիմքերը և ընթացակարգերը:

Այս համատեքստում սկզբունքային նշանակություն ունի հաշմանդամության հիմքով խտրականության բացառումը, որի նպատակով ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն 2017 թվականի Եզրափակիչ դիտարկումներով առաջարկել է արագացնել հակախտրականության մասին օրենքի ընդունումը և ապահովել, որ օրենքը ներառի հաշմանդամության հիմքով խտրականության սահմանումը և՛ հանրային, և՛ մասնավոր ոլորտներում, բազմակի և փոխհատվող խտրականության սահմանումները, ինչպես նաև սահմանի սանկցիաների համակարգ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտման համար¹⁴⁵:

Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ կարծրատիպային մոտեցումները գործնականում խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող մարդկանց խնդիրների մասին

¹⁴⁴ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=158713> հղումով:

¹⁴⁵ Տե՛ս «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ Եզրափակիչ դիտարկումները» <https://digitallibrary.un.org/record/1310656?ln=ru> հղումով:

բարձրաձայնելու հարցում: Օրինակ, ըստ «Արև երեխաներ» ՀԿ-ի ներկայացուցչի, դաունի համախտանիշով մարդիկ և նրանց ծնողներն առօրյայում բախվում են բազմաթիվ խնդիրների ինչպես կրթական, այնպես էլ առողջապահական ոլորտներում, ինչի հետևանքով խարանի ու խտրականության են ենթարկվում¹⁴⁶:

Մինևույն ժամանակ որոշ դպրոցների ուսուցիչներ հաստատել են, որ ներառական կրթությունն օգնել է կոտրելու կարծրատիպները երեխաների, ծնողների և ուսուցիչների շրջանում¹⁴⁷:

Պաշտպանին հասցեագրված դիմումների և ահազանգերի ուսումնասիրությունը վկայում է, որ խնդրի խորքային պատճառներից են ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ կարծրատիպային ընկալումները, այլև երեխայի զարգացման հնարավորությունների և նրա արժանապատվության նկատմամբ հարգանքի ոտնահարումը, ինչպես նաև ուսումնամանկավարժական անձնակազմների ոլորտային կարողությունների, ուսումնական հաստատություններին հասկացված ռեսուրսների, այդ թվում՝ նեղ մասնագետների սղությունը¹⁴⁸:

Միաժամանակ ոլորտային ուսումնասիրությունները, մշտադիտարկումները, հասարակական կազմակերպությունների ներկայացրած տեղեկությունները վկայում են, որ իրականացվող վերապատրաստումները ոչ միշտ են կարիքահենք և թիրախային: Դրանք գործնականում չեն ապահովում այն խնդիրների լուծման համար անհրաժեշտ կարողությունները, որոնց առնչվում են մասնագետները: Արդյունքում՝ հաճախ այդ խնդիրների լուծման ամբողջ բեռը կրում են մասնագետները: Ավելին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրած տեղեկությունների ուսումնասիրության արդյունքներում խիստ մտահոգիչ է հաշմանդամություն ունեցող անձանց խնամք, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, ուսումնական հաստատություններում խտրականության, ծաղրի և խարանի դեպքերի բացահայտման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը:

13.2. Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը

2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում SUՄԻԿ-ն անհանգստացած է, որ հաշմանդամություն ունեցող երեխաների զգալի մասը ֆորմալ կրթությանը (18 %) հասանելիություն չունի: SUՄԻԿ-ը նաև մտահոգված է, որ չնայած մասնակից պետության ջանքերին՝ ընդլայնելու ներառական դպրոցների քանակը, ներառական կրթությունը դեռևս ամբողջությամբ չի ապահովվում¹⁴⁹:

¹⁴⁶ Տե՛ս http://surbzoravor.am/post/view/arev-erekhaner-hk-n-handipec-mardu-iravunqneripashptpanin?fbclid=IwAR2qGrKkDcqB0LKD6gAbaftYo99_dTTZx7Ufjo6K_5X4IHfMtMhUJq1Lf9z4 հղումով:

¹⁴⁷ Տե՛ս «Ե՞րբ ես կկարողանամ տուն գնալ». չարաշահումներ և խտրականություն հաստատություններում գտնվող երեխաների նկատմամբ և որակյալ ներառական կրթության մատչելիության պակասը Հայաստանում» զեկույցը, հասանելի է <https://www.hrw.org/hy/report/2017/02/22/300330> հղումով:

¹⁴⁸ Տե՛ս առավել մանրամասն 2021 թվականի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 1306-1312 <https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf> հղումով:

¹⁴⁹ Տե՛ս SUՄԻԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

Ըստ այդմ՝ *SUUP*-ն առաջարկում է մասնակից պետությանը արագացնել ներառական կրթության ներդրումը՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաների՝ կրթության մեջ ընդգրկումը:

2017 թվականին ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն, դիտարկելով Հայաստանի նախնական զեկույցը, հայտնել է իր մտահոգությունը, որ չնայած ներառական կրթության աճող միտմանը՝ հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ սովորում են տարանջատված կրթական համակարգերում և չեն ստանում այն աջակցությունը, որն անհրաժեշտ է ներառական կրթության մեջ ընդգրկվելու համար: Կոմիտեին մտահոգել է նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար հանրակրթական դպրոցների մատչելիության և խելամիտ հարմարեցումների, ինչպես նաև վարչական և ուսումնական կազմի՝ ներառական կրթության մասին ոչ բավարար աջակցության և դասընթացների բացակայությունը: Կոմիտեն ընդգծել է նաև ներառական կրթությունը քաղաքներում և գյուղական վայրերում խթանող համապարփակ ռազմավարության բացակայության փաստը¹⁵⁰:

Այս կապակցությամբ ՀՀ Կառավարությունը 2020 թվականի հունվարին Կոմիտե ներկայացրած հաշվետվությունում նշել է, որ նորաստեղծ ներառական համակարգը հնարավորություն է տալիս կազմակերպելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը՝ չբաժանելով երեխային ընտանիքից՝ ապահովելով երեխայի սոցիալական համակողմանի զարգացումը և հանրակրթական հաստատությունում ընդգրկվելը: Կառավարությունը նաև նշել է, որ նախատեսվում է ընդլայնել կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթական համակարգ բոլոր հանրակրթական դպրոցներում: Այդ շրջանակում նախատեսվում է հատուկ հանրակրթական դպրոցներում կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տեղափոխում իրենց բնակության վայրի մոտ գտնվող հանրակրթական դպրոց: Արդյունքում, կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան երեք մակարդակներում՝ հանրակրթական դպրոցում, մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային և հանրապետական կենտրոններում: Կառավարությունը նաև նշել է, որ ներկայումս համակարգը անցումային փուլում է, որի ընթացքում կգործեն ներառական կրթության առանձին դպրոցներ և հատուկ դպրոցների համակարգը, իսկ հաստատված ժամանակացույցի համաձայն՝ 2016 թվականից դպրոցների վերակազմակերպման գործընթացը կավարտվի, և ներառական կրթության համակարգն ամբողջությամբ կներդրվի մինչև 2022 թվականը՝ ներառյալ Հայաստանի բոլոր մարզերում¹⁵¹:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանվում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատելու և

¹⁵⁰ Տե՛ս «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ Եզրափակիչ դիտարկումները» <https://digitallibrary.un.org/record/1310656?ln=ru> հղումով:

¹⁵¹ Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը <https://ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf> հղումով:

կրթություն ստանալու իրավունքի նկատմամբ հարգանքը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է:

Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ հոդվածի համաձայն՝ կրթության մատչելիությունը խթանող միջոցառումները միտված են անձի մտավոր կարողությունները, անհատականությունը, տաղանդը և ստեղծագործական միտքը զարգացնելուն, այդ թվում՝ բոլոր ուսումնական և կրթական հաստատություններում ներառական կրթական ծրագրերի և անհրաժեշտ տեղեկության հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու միջոցով:

«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված է նախադպրոցական կրթության հասանելիությունը և մատչելիությունը բոլորի համար:

Ըստ այդմ՝ նախադպրոցական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների շարքում օրենքը սահմանում է ուսուցման և խնամքի հավասար հնարավորությունները, մատչելիությունը, հասանելիությունը, ներառականությունը և համապատասխանությունը երեխայի զարգացման տարիքային և անհատական առանձնահատկություններին:

Օրենքը նաև սահմանում է այդ առումով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների լիազորությունները, որոնց թվում նաև պետական լիազոր մարմնի ենթակայության նախադպրոցական հաստատությունների շենքերի շահագործումը և պահպանումը, դրանց անվտանգությունը և մատչելիությունը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 76-Ն հրամանով հաստատվել է նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգը:

Այսպես՝ նախադպրոցական հաստատություններում ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթությունը տրվում է նաև առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող ծնողի երեխաներին, ինչպես նաև կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Մինչդեռ պետք է արձանագրել, որ համընդհանուր ներառական կրթության համատեքստում հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին համապատասխանության տեսանկյունից հարմարեցումներ ոչ բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններում են առկա: Նշված խնդիրն առավել արդիական է հատկապես մարզերում:

Օրինակ՝ ըստ «Կոնտակտ Պլյուս» իրավապաշտպան հասարակական կազմակերպության՝ Գյումրիում հաշմանդամության խնդիրներ ունեցող շատ երեխաներ մանկապարտեզ չեն հաճախում համապատասխան հարմարությունների ու հատուկ մանկավարժների բացակայության պատճառով: Գյումրին ունի համայնքապատկան 22 մանկապարտեզ, սակայն դրանց մեծ մասը զուրկ է կրթության հատուկ խնդիրներ ունեցող երեխաների մանկապարտեզային պրոցեսը կազմակերպելու պայմաններից: Որոշ մանկապարտեզներ հրաժարվում են հաշմանդամություն ունեցող երեխաներին ընդունելուց՝ հաշվի առնելով այն, որ իրենք պատրաստ չեն իրականացնելու այդ

երեխաների պատշաճ խնամքը շենքային համապատասխան պայմաններ, ինչպես նաև կրթության համապատասխան որակավորմամբ մասնագետներ չունենալու պատճառով¹⁵²:

2021 թվականի ընթացքում Կոտայքի մարզում նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանհանգույցները հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցնելու ուղղությամբ աշխատանքներ չեն կատարվել, նման աշխատանքներ իրականացվում են նոր կառուցվող և հիմնանորոգվող նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Լոռու մարզի Վանաձորի թիվ 8 մանկապարտեզի և Տավուշի և Շիրակի մարզերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանհանգույցները հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցնելու ուղղությամբ 2021 թվականի ընթացքում աշխատանքներ չեն իրականացվել¹⁵³:

Խնդիրը համակարգային բնույթի է նաև այն պատճառով, որ հաշմանդամություն ունեցող երեխաների նախադպրոցական կրթության իրավունքի փաստացի իրացման խոչընդոտներից է նաև բազմամասնագիտական թիմերի սղությունը, ինչպես նաև որոշ դեպքերում հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատելու մասնագիտական հմտությունների ոչ բավարար լինելը: Այս մասին են վկայում նաև Պաշտպանի Արտահերթ զեկույցի մշակման աշխատանքների շրջանակում հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների հետ անցկացված քննարկումները: Մասնավորապես ծնողները նշել են, որ նշված խնդիրներով պայմանավորված՝ երեխաները վաղ տարիքից չեն ներգրավվում կրթական գործընթացում: Մինչդեռ հաշմանդամություն ունեցող երեխաների ներգրավումը նախադպրոցական կրթությունում կարևոր է նաև հանրակրթական կրթությանը և միջավայրային ինտեգրմանը նախապատրաստելու տեսանկյունից¹⁵⁴:

Խնդիրներ են առաջանում նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների խմբերի ձևավորման առնչությամբ: Մասնավորապես խնդրահարույց է այն, որ պետության կողմից առաջարկվող խմբերի քվոտաները կամ գործնականում կիրառվող մեխանիզմներն արդյունավետ չեն երեխաների լավագույն շահի տեսանկյունից և կարիքահենք չեն: Մասնավորապես առաջարկվող նորմերի համաձայն, նախադպրոցական ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր խմբում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը 10 %-ից ավելի չի կարող լինել: Մինչդեռ գործնականում խմբերը հիմնականում կազմված են 20-25 երեխայից (ըստ շենքային պայմանների), որոնց հետ աշխատում են մեկ դաստիարակ և մեկ դայակ: Արդյունքում՝ խմբերում առավելապես իրականացվում է սաների կենցաղային և ֆիզիկական խնամքի գործառնություն, որը զբաղեցնում է մասնագետների աշխատաժամանակի գրեթե մեծ մասը: Խնդիրն ավելի սուր է դառնում այն պատճառով, որ գործող իրավակարգավորումներով պետությունը լրացուցիչ ֆինանսավորում է հատկացնում նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների

¹⁵² Հասանելի է <https://armenpress.am/arm/news/952691.html> հղումով:

¹⁵³ Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2021 թվականի տարեկան հաղորդումը, «Նախադպրոցական կրթություն» բաժինը <https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf> հղումով:

¹⁵⁴ Նույն տեղում:

համար, մինչդեռ խմբերում լրացուցիչ մասնագետների հաստիքներ ավելացնելու համար ֆինանսավորում չի հատկացվում¹⁵⁵:

Երեխայի իրավունքների կոմիտեի 2016 թվականի «Երեխաները և միջավայրը» զեկույցի «Երեխաների իրավունքների պաշտպանությունը միջավայրի վնասից» 4.1-րդ բաժնում նշվում է, որ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 24-րդ հոդվածի համատեքստում պետություններից պահանջվում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու երեխաների համար առողջ միջավայր, որը սերտորեն առնչվում է այլ իրավունքների հետ: Սա ներառում է նաև զարգացման համար բավարար պայմանների և հնարավորությունների իրավունքը: Ընդ որում՝ հավասարության և խտրականության չենթարկվելու իրավունքները ենթադրում են, որ բոլոր երեխաները պետք է ունենան առողջ և ապահով միջավայր¹⁵⁶:

Համակարգային բնույթ են կրում հանրակրթության ոլորտում հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների իրացմանն առնչվող խնդիրները:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը¹⁵⁷:

Ըստ ՀՀ ԿԳՄՄՆ-ի՝ կկիրառվի երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում:

Մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը ՀՀ յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ, Երևան քաղաքում առնվազն չորս հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն վերակազմակերպվելու է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի:

Եթե տվյալ մարզում առկա չէ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն, ապա մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը կարող է վերակազմակերպվել կամ

¹⁵⁵ Նույն տեղում:

¹⁵⁶ Տե՛ս <https://www.ohchr.org/sites/default/files/Documents/HRBodies/CRC/Discussions/2016/DGDoutcomereport-May2017.pdf> հղումով:

¹⁵⁷ Տե՛ս <https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu> հղումով:

պատվիրակվել այնպիսի կազմակերպության, որում առկա են ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմաններ¹⁵⁸:

ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում կներդրվեն ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը որոշվելու է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 %-ի հաշվարկի հարաբերակցությունից՝ համաձայն ՀՀ Կառավարության կողմից հաստատված կարգի¹⁵⁹:

Մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը՝ համաձայն ՀՀ Կառավարության հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի¹⁶⁰:

Նոր ձևավորված համակարգը հնարավորություն կընձեռի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպելու առանց երեխային ընտանիքից առանձնացնելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատությունում: Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության համակարգ բոլոր հանրակրթական դպրոցներում¹⁶¹:

Թեև 2017 թվականին ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն ողջունել է անցումը համընդհանուր ներառական կրթության, այնուամենայնիվ, Կոմիտեին մտահոգել է, որ չնայած ներառական կրթության ավելացող միտումներին՝ հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ, որոնք ապրում են խնամքի հաստատություններում և գյուղական շրջաններում, ֆորմալ կրթություն չեն ստանում, կրթական հաստատություններն ու ծրագրերը պետք է համապատասխանեցվեն համընդհանուր դիզայնի պահանջներին, որպեսզի նվազագույնի հասցվեն հաշմանդամություն ունեցող երեխաների հատուկ դպրոցներում կրթության տրամադրումը: Կոմիտեն առաջարկել է շարունակել ջանքեր գործադրել՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին ներառելու ընդհանուր կրթական համակարգում, ընդ որում՝ այդ ընթացքում առանձնակի ուշադրություն դարձնել խնամքի հաստատություններում և գյուղական շրջաններում բնակվող հաշմանդամություն ունեցող երեխաներին¹⁶²:

¹⁵⁸ Նույն տեղում:

¹⁵⁹ Տե՛ս ՀՀ Կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, ՀՀ Կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի թիվ 1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի թիվ 46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 141-Ն որոշումը:

¹⁶⁰ Տե՛ս «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի արձանագրային որոշումը:

¹⁶¹ Տե՛ս <https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu> հղումով:

¹⁶² Տե՛ս «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ Եզրափակիչ դիտարկումները» <https://digitallibrary.un.org/record/1310656?ln=ru> հղումով:

Հանրակրթական դպրոցներում սովորող հաշմանդամություն ունեցող երեխաները շարունակում են առանձնացվել մյուս երեխաներից: Բազմաթիվ դպրոցներում երեխաներին պիտակավորում են «ներառական երեխաներ» արտահայտությամբ: Թեև իրականացվում են վերապատրաստումներ դպրոցների տնօրենների, ուսուցիչների համար, բայց դեռևս պարզ չէ, թե որքանով են դրանք արդյունավետ, որքանով են ուսուցիչները կարողանում արդյունավետորեն կիրառել ներառականությունը: Լուրջ անելիքներ կան նաև ուսուցչի օգնականի հաստիքն առավելապես արդյունավետ օգտագործելու ուղղությամբ¹⁶³:

Մտահոգիչ է այն, որ հաշմանդամություն ունեցող երեխաները, այդ թվում՝ ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներում, հաճախ չեն ստանում որակյալ կրթություն մյուսների հետ հավասար հիմունքներով: Մասնավորապես ողջամիտ հարմարեցումների բացակայությունը, այդ թվում՝ շենքերի տարրական ֆիզիկական և տրանսպորտային միջոցների մատչելիությունը, բավարար թվով վերապատրաստված աշխատակիցների՝ երեխաների կրթության նկատմամբ անհատականացված մոտեցման և իրազեկման պակասը խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող շատ երեխաների որակյալ կրթություն ստանալը: Բացի այդ՝ ներառական դպրոցներում անհրաժեշտ շենքային պայմաններ չկան. հաշմանդամություն ունեցող երեխաների համար հարմարեցումները սահմանափակվում են հիմնականում դպրոցների մուտքի մոտ կառուցված թեքահարթակով: Բացի այդ՝ առկա է նաև դպրոցական ծրագրերի մատչելիության խնդիրը:

«Հանրակրթական դպրոցների մատչելիությունը. օրենքը գործնականում» զեկույցի շրջանակում հաշմանդամություն ունեցող քաղաքացիներն ուսումնասիրել են 2007 թվականից հետո Երևանում, Գյումրիում և Վանաձորում կառուցված և վերակառուցված 20 հանրակրթական ուսումնական հաստատությունների համապատասխանությունը ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ մատչելիության շինարարական նորմերի մասին հրամանին: Արդյունքում պարզվել է, որ դպրոցներից միայն 14-ի (70%) մուտքի մոտ էր առկա թեքահարթակ: Դիտարկվել է նաև, թե առկա թեքահարթակները որքանով են մատչելի օգտագործման համար: Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ առկա 14 թեքահարթակների գրեթե կեսը՝ 6-ը, չեն համապատասխանում մատչելիության նորմերին: Երևանի դպրոցների ներսում սայլակով մարդու համար տեղաշարժվելու հնարավորությունը, ընդհանուր առմամբ գնահատվել է 50 %-ով բացարձակ անհնարին, 15 %-ով՝ միջին հնարավորության և 35 %-ով՝ լիովին հնարավոր: Մատչելիության շինարարական նորմերով ամրագրված է, որ դպրոցի դռներից, սանդուղքներից և թեքահարթակներից առաջ պետք է լինի ակոսավոր կամ հակադրական գույներով նախազգուշացնող մակերևույթ: Այս նորմը մշտադիտարկման ենթարկված ոչ մի դպրոցում առկա չէր¹⁶⁴:

¹⁶³ Տե՛ս ՀՀ-ի կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում <https://ombuds.am/images/files/0b44c6d762045fbc7edd99b443608b0.pdf> հղումով:

¹⁶⁴ Տե՛ս «Հանրակրթական դպրոցների մատչելիությունը. օրենքը գործնականում» զեկույցը, հասանելի է https://www.researchgate.net/publication/330359095_Hanrakrtakan_dprocneri_matceliutyun_orenk_gorcakanum_Accessibility_of_Public_Schools_Law_in_Practice հղումով:

Միաժամանակ խնդրահարույց է հանրակրթական դպրոցներում դասագրքերի մատչելիության հարցը:

Մասնավորապես խնդիր է առաջանում, երբ հատուկ դպրոցի սաները, տեղափոխվելով հանրակրթական դպրոց, իրենց կրթությունը շարունակում են ստանալ այդ դպրոցի ուսումնական ծրագրի շրջանակում: Մինչդեռ դրանցում ներառված են այնպիսի առարկաներ, որոնք չկան հատուկ դպրոցի համար մշակված ուսումնական ծրագրերում (օրինակ՝ քիմիա, ֆիզիկա և այլն): Այս հարցում երեխայի կարիքները, զարգացման հնարավորությունները հաշվի առնված չեն: Արդյունքում, տվյալ դեպքում հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման ապահովումը, ըստ էության, անհնար է դառնում կրթական առանձնահատուկ պայմանների, այդ թվում՝ համապատասխան ծրագրի բացակայության դեպքում՝ խոչընդոտներ ստեղծելով նաև սոցիալական լիարժեք ինտեգրման համար¹⁶⁵:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների մատչելիության խնդրից զատ մեկ այլ լուրջ խնդիր է հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ առկա կարծրատիպային մոտեցումը, ինչը հիմնականում ձևավորվում է ծնողների և ուսուցիչների վերաբերմունքի պատճառով:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 24-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով մատչելի բարձրագույն կրթությունը:

Ինչպես նախադպրոցական, հանրակրթական ուսումնական հաստատություններում, այնպես էլ բուհերում մատչելիությունը սահմանափակվում է մուտքի թեքահարթակի կամ վերելակի առկայությամբ:

Խնդիրը ոչ միայն անհրաժեշտ ֆինանսական միջոցների անբավարարությունն է, այլև հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց իրավունքների մասին անիրազեկվածությունը և դրանց լուծման գործընթացում ոչ բավարար ներգրավվածությունը:

Առկա են դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող ուսանողները նշում են, որ իրենց բարձրագույն կրթության իրավունքն իրացնելիս հանդիպում են բազմաթիվ խոչընդոտների: Մասնավորապես հաստատություններում առկա է ուսումնական նյութերի, ինչպես նաև ֆիզիկական մատչելիության խնդիրը: Դասախոսները հաճախ պարզապես գնահատում են՝ խուսափելով քննություն անցկացնելուց և ժամանակ տրամադրելուց¹⁶⁶:

Ոլորտի փորձագետի կարծիքով Հայաստանի բարձրագույն կրթության ամենամեծ խնդիրներից մեկն այն է, որ բուհերի (դասախոսների) և ուսանողների միջև կա լուր

¹⁶⁵ Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը <https://ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf> հղումով:

¹⁶⁶ Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձինք ուզում են ունենալ կրթություն ստանալու օրենսդրական երաշխիքներ» հրապարակումը <https://www.azatutyun.am/a/29035412.html> հղումով:

համաձայնություն հետևյալի շուրջ. մենք ձեզ նշանակում ենք դրական գնահատականներ, իսկ դուք չէք խոսում մեր դասավանդման որակի մասին¹⁶⁷:

13.3 Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը մշակութային կյանքին

2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում SUՄԻԿ-ը մտահոգված է հաշմանդամություն ունեցող անձանց՝ մշակութային կյանքին սահմանափակ հասանելիությամբ:

Ըստ այդմ՝ SUՄԻԿ-ն առաջարկում է ձեռնարկել լրացուցիչ միջոցներ մշակութային հաստատությունների ֆիզիկական մատչելիության ուղղությամբ, ինչպես նաև ապահովելու «ողջամիտ հարմարեցումներ» հաշմանդամություն ունեցող անձանց համար¹⁶⁸:

Չնայած ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորություններին՝ հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարողանում լիարժեք և ինքնուրույն մասնակցել մշակութային կյանքին: Խնդիրն այն է, որ մշակութային հաստատությունների շենքերը հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, քանի որ շենքերի ներսում ազատ տեղաշարժի համար հիմնականում բացակայում են թեքահարթակներ, առկա չեն անհրաժեշտ հարմարություններ: Ընդ որում՝ մի շարք կինոթատրոնների, թատրոնների և այլ մշակութային կառույցների դահլիճներում հենաշարժողական, ինչպես նաև լսողության և տեսողության խնդիրներով անձանց համար հատուկ հարմարեցված տարածքներ ընդհանրապես նախատեսված չեն:

Մշակութային օբյեկտների անմատչելիության մասին մտահոգություն է հայտնել նաև ՄՄԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն՝ արձանագրելով հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ երեխաների ոչ բավարար մասնակցությունը մշակութային գործունեությանն ու միջոցառումներին, հատկապես գյուղական վայրերում¹⁶⁹:

ՀՀ ԿԳՄՄՆ-ն հայտնել է, որ մի շարք մշակութային հաստատություններում մատչելիության խնդիրները, մասնավորապես՝ ազատ տեղաշարժվելու և սանհանգույցներից օգտվելու, հաշմանդամություն ունեցող անձանց համար լուծվել են: Դրանք են Հայոց ցեղասպանության և Կոմիտասի թանգարան-ինստիտուտները, Մ. Սարյանի տուն-թանգարանը, Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանը: Ի հավելումն նշվել է նաև, որ Գեղարքունիքի Վ. Պետրոսյանի անվան, Տավուշի, Լոռու, Արմավիրի մարզային գրադարանները, Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնը առաջին հարկում են և ամբողջովին հարմարեցվել են հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի համար, մինչդեռ Հայաստանի ազգային պատկերասրահում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում

¹⁶⁷ Տե՛ս «Հայաստանի բարձրագույն կրթության խնդիրները» հրապարակումը <https://168.am/2018/03/02/915038.html> հղումով:

¹⁶⁸ Տե՛ս SUՄԻԿ-ի 2014 թվականին Հայաստանին ուղղված Եզրափակիչ դիտարկումները https://www.ecoi.net/en/file/local/1339892/1930_1406729825_g1408576.pdf հղումով:

¹⁶⁹ Տե՛ս «ՄՄԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ Եզրափակիչ դիտարկումները» <https://digitallibrary.un.org/record/1310656?ln=ru> հղումով:

հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժը կազմակերպվում է աշխատակիցների օգնությամբ, Ն. Թումանյանի և Ս. Փարաջանովի թանգարաններում ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ անվասայլակով տեղաշարժվող անձանց համար միայն առաջին հարկում: Խնկո-Ապոռ անվան ազգային մանկական գրադարանում առաջին հարկի մուտքի մոտ կա թեքահարթակ, որի միջոցով էլ անվասայլակով տեղաշարժվող անձինք մտնում են գրադարան, իսկ ներսում տեղաշարժումն իրականացվում է վերելակով, ընթերցասրահներում կան հարմարեցված բազմոցներ նրանց ընթերցանությունը կազմակերպելու համար: Կոտայքի մարզային գրադարանը, Օրբելի եղբայրների տուն-թանգարանը, «Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի «Զվարթնոց» մասնաճյուղը, Շիրակի մարզային գրադարանը, Երվանդ Քոչարի թանգարանը, Ն. Շարաբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի Փայտարվեստի ցուցասրահը նույնպես ունեն թեքահարթակներ¹⁷⁰:

Ինչ վերաբերում է հաղորդակցության և տեղեկատվական միջոցների մատչելիությանը մշակութային ոլորտում, տեսողությունը կորցրած հաշմանդամություն ունեցող անձանց համար «Բրայլյան տառատեսակով գրքերի տպագրություն, տետրերի պատրաստում և «Խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ» միջոցառմամբ աջակցություն է ցուցաբերվում Կույրերի միավորմանը:

Նույն ծրագրով բրայլյան տառատեսակով լույս են տեսել Հայաստանի կույրերի միավորման ամենամյա «Բյուլետեն»-ի 1-9-րդ համարները, յուրաքանչյուրը՝ 260 օրինակ տպաքանակով:

2021 թվականի ընթացքում «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ Արագածոտնի, Արարատի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերի 36 հուշարձանների տարածքներում տեղադրվել են քառալեզու և բրայլյան համակարգով 38 տեղեկատվական վահանակներ¹⁷¹:

Թեև պետության կողմից իրականացվում են որոշ քայլեր, պետք է արձանագրել, սակայն, որ ոչ բոլոր մշակութային հաստատություններն են հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ելքի, ինչպես նաև նշված շինությունների ներսում նրանց ազատ տեղաշարժի համար:

14. Ապահինստիտուցիոնալացումը և ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը

2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում ՏՄՄԻԿ-ը մտահոգված է, որ չնայած Կառավարության ապահինստիտուցիոնալացման ծրագրին՝ հաստատություններում երեխաների թիվը, որոնց մեծամասնությունն ունի ընտանիքներ, մնում է բարձր: Ըստ ՏՄՄԻԿ-ի՝ մտահոգության առարկա է այն, որ ընտանիքները, պահպանելով ծնողական իրավունքները, իրենց երեխաներին

¹⁷⁰ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը <https://ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf> հղումով:

¹⁷¹ Նույն տեղում:

տեղավորում են գիշերօթիկ դպրոցներում և հաստատություններում՝ ֆինանսական միջոցների սղության և երեխաների հիմնական կարիքների բավարարմանն ուղղված ծախսերը հոգալ չկարողանալու պատճառով:

SUՄԻԿ-ը մտահոգություն է հայտնել նաև ֆիզիկական պատժից երեխաների ոչ բավարար պաշտպանության վերաբերյալ (հոդված 10):

Ըստ այդմ՝ SUՄԻԿ-ը հատուկ առաջարկում է մասնակից պետությանը՝

- *խոցելի (կյանքի դժվարին) իրավիճակներում հայտնված ընտանիքների սոցիալական և ֆինանսական աջակցությունն ուժեղացնել՝ այդ թվում ծայրահեղ աղքատության մեջ ապրող ընտանիքներին երեխայի համար անհրաժեշտ նպաստներ տրամադրելով, ինչը նրանց հնարավորություն կտա, նյութական կարիքներից ելնելով, խուսափելու իրենց երեխաներին գիշերօթիկ դպրոցներում և մանկատներում տեղավորելուց,*

- *ակտիվացնել ջանքերը՝ ապահովելու երեխաների համար այլընտրանքային ընտանեկան և համայնքային խնամքի համակարգեր և երեխաների տեղավորումը հատուկ հաստատություններ իրականացնել միայն որպես միակ վերջին տարբերակ,*

- *ներդնել երեխաների իրավունքների պահպանման անկախ մշտադիտարկման համակարգ ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տարածքային կառավարման ենթակայությամբ գործող հաստատություններում,*

- *բոլոր իրավիճակներում արգելել երեխաների ֆիզիկական պատիժը և պատժել մեղավորներին:*

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածն ամրագրում է, որ ընտանիքը՝ որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին:

Ընտանիքում ապրելու իրավունքը երաշխավորված է ոչ միայն «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով, այլև մի շարք այլ միջազգային փաստաթղթերով և ներպետական իրավական ակտերով¹⁷²:

Տարիներ շարունակ Հայաստանում երեխաները ընտանիքների բավարար ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով զրկվել են ընտանիքում ապրելու իրենց հնարավորությունից և տեղավորվել են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում:

Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվում են բարեփոխումներ, որոնք ուղղված են երեխաների շուրջօրյա խնամքի հաստատությունների ապահինստիտուցիոնալացման և խնամքի այլընտրանքային ձևերի զարգացման միջոցով երեխայի՝ ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու իրավունքի իրացման ապահովմանը՝ կարևորելով նաև ընտանեկան միջավայրում նրանց խնամքի կազմակերպումը:

¹⁷² Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503> հղումով:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն՝ Հայաստանի երրորդ և չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ 2013 թվականի Եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել, որ սոցիալական վիճակի, երեխաների կրթության ծախսերը կամ տարրական կարիքները հոգալու անկարողության պատճառով որոշ ընտանիքներ ստիպված են իրենց երեխաներին տեղավորել գիշերօթիկ դպրոցներում և մանկատներում¹⁷³:

Կոմիտեն արձանագրել է, որ ընտանեկան միջավայրից զրկված երեխաների համար ընտանիքահենք և համայնքահենք այլընտրանքային խնամքի ծառայությունները բավարար չեն, առկա են միայն մի քանի խնամատար ընտանիքներ, աճում է առնվազն մեկ ծնող ունեցող և խոցելի իրավիճակում հայտնված ընտանիքներից հաստատություններում տեղավորվող երեխաների թիվը, առկա չեն երաշխիքներ, որ երեխաներին հաստատություններում տեղավորելն իրապես իրականացվում է միայն բոլոր այլ միջոցների սպառված լինելու դեպքում և հաստատություններից դուրս եկող երեխաներին տրամադրվող աջակցությունը շարունակում է մնալ ոչ բավարար¹⁷⁴:

Հաշվի առնելով վերոնշյալ հանձնարարականները՝ Հայաստանի կողմից ձեռնարկվել են ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը երաշխավորելուն ուղղված հետևյալ միջոցառումները:

Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրով ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման ապահովումը դիտարկվել է որպես առաջնահերթություն: Այն ներառված էր նաև Հայաստանում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրով:

ՀՀ Կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի թիվ 432-Լ որոշմամբ հաստատվել է «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» միջոցառումների ծրագիրը:

Պետության կողմից իրականացվում են ապահինստիտուցիոնալացմանն ուղղված քայլեր, որոնց նպատակն է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունները վերակազմակերպելու կամ լուծարելու միջոցով նշված հաստատություններից երեխաներին ընտանիք վերադարձնելը և պետական միջոցներով այդ ընտանիքներին աջակցություն տրամադրելը:

2019 թվականի ընթացքում Հայաստանի Կառավարությունը ձեռնարկել է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաների՝ ընտանիք վերադարձն ապահովելուն ուղղված որոշակի միջոցներ: Մասնավորապես լուծարվել են Գյումրու թիվ 1, Դիլիջանի, Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունները և Վանաձորի մանկատունը:

Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2, թիվ 6 հատուկ (օժանդակ) դպրոցները, Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ

¹⁷³ Տե՛ս ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի՝ ՀՀ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ 2013 թվականի հունիսի 14-ի Եզրափակիչ դիտարկումները, հասանելի է <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> հղումով:

¹⁷⁴ Նույն տեղում:

կրթահամալիրը և Երևանի թիվ 12 հատուկ դպրոցը վերանվանվել են համապատասխանաբար Երևանի թիվ 1, 2, 3 և 4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների¹⁷⁵:

2020 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ Կառավարության թիվ 1878 որոշմամբ «Գյումրի քաղաքի երեխաների հոգաձության սոցիալական կենտրոն» և «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ները միաձուլման ձևով վերակազմակերպվել են «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, որն իր գործունեությունը սկսել է 2021 թվականի հունիսի 1-ից՝ իրականացնելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան 100 երեխայի ցերեկային խնամք և 0-18 տարեկան 60 երեխայի շուրջօրյա կարճաժամկետ խնամք:

2021 թվականի ընթացքում երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիք է վերադարձել 10 երեխա, ժամանակավոր խնամք իրականացնող կենտրոններից կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորվել է 48 երեխա¹⁷⁶:

Համեմատության համար հարկ է նշել, որ ըստ նախարարության տվյալների՝ 2020 թվականին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա պետական հաստատություններից (մանկատներից) ընտանիք էր վերադարձել 47 երեխա: Վերոգրյալից պարզ է դառնում, որ 2020 թվականի համեմատությամբ 2021 թվականին երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիք են վերադարձել ավելի քիչ թվով երեխաներ, ինչը ապահինստիտուցիոնալացման քաղաքականության նպատակների հաշվառմամբ դրական արդյունք չէ: Նախարարության տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի պետական հաստատություններում խնամվել է 584 երեխա: Տվյալ 584 երեխաներից 498-ն ունի հաշմանդամություն:

2021 թվականին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վերակազմակերպման կամ լուծարման գործընթաց չի նախատեսվել՝ բացառությամբ «Երևանի «Զատիկ» երեխայի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, որի վերակազմակերպումը, սակայն, դեռևս չի իրականացվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայում իրականացվում են երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների տրամադրման մոդելի գնահատում, միջազգային փորձի ուսումնասիրություն և նոր, առավել արդյունավետ մոդելի մշակմանն ուղղված աշխատանքներ, ինչն իր հերթին որոշիչ դեր է ունենալու վերը նշված կենտրոնի հետագա կազմակերպարավական կարգավիճակի փոփոխության տեսակի որոշման գործում¹⁷⁷:

Հայաստանում պաշտոնական վիճակագրական տվյալները վկայում են, որ դեռևս կան երեխաներ, որոնք ապրում են աղքատության կամ ծայրահեղ աղքատության մեջ, ինչի հետևանքով հաճախ զբաղվում են մուրացկանությամբ և դուրս են մնում կրթությունից:

¹⁷⁵ Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2019 թվականի տարեկան հաղորդումը <https://ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> հղումով:

¹⁷⁶ Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2021 թվականի տարեկան հաղորդումը <https://ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> հղումով:

¹⁷⁷ Նույն տեղում:

ՀՀ վիճակագրական կոմիտեի 2021 թվականին հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկուլյցի¹⁷⁸ համաձայն՝ 2020 թվականին Հայաստանում աղքատ է 0-18 տարեկան ազգաբնակչության 33.9 %-ը (որից աղջիկներ՝ 34.3 %-ը, տղաներ՝ 33.6 %-ը), իսկ ծայրահեղ աղքատ՝ 0.7 %-ը (որից՝ աղջիկներ՝ 1.3 %-ը, տղաներ՝ 0.8 %-ը): Ընդհանուր վիճակագրական պատկերն ամբողջ բնակչության համար հետևյալն է. 27 %-ն աղքատ է, 0.7 %-ը՝ ծայրահեղ աղքատ: Մանկական աղքատության ամենաբարձր մակարդակը 2020 թվականին եղել է Շիրակի մարզում (57.7 %): Բարձր մակարդակ է դիտվել նաև Գեղարքունիքում (56.0 %), Տավուշում (46.1 %) և Արագածոտնում (40.1 %):

Վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանում դրամական սոցիալական աջակցության ոլորտի ամենամեծ ծրագիրը, ինչպես բնակչության ընդգրկվածության, այնպես էլ ՀՀ պետական բյուջեում այդ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների առումով, ընտանեկան նպաստի ծրագիրն է:

Միննույն ժամանակ թեպետ սոցիալական աջակցության միջոցները զգալիորեն նպաստում են աղքատության կրճատմանը, Հայաստանում աղքատ բնակչության գրեթե կեսը ներառված չէ սոցիալական աջակցության որևէ ծրագրում, և այդ ծրագրերի ոչ բոլոր շահառուներն են կարողանում աջակցության շնորհիվ հաղթահարել աղքատությունը¹⁷⁹:

Ըստ վիճակագրական տվյալների՝ «ընտանեկան նպաստի ծրագրում ընդգրկվածությունը 2016-2019 թվականներին նվազման միտում է դրսևորել՝ 14%-ից հասնելով 13%-ի: Այդ միտումը 2020 թվականին շարունակվել է, և տարվա արդյունքներով ընդհանուր ընդգրկվածության ցուցանիշը եղել է շուրջ 12 %: Թեև ընդգրկվածության ցուցանիշի այս ընդհանուր նվազումն ազդել է հիմնականում ոչ աղքատների վրա և հանգեցրել ծրագրի ծախսարդյունավետության բարձրացմանը, աղքատների ընդգրկվածությունը նույնպես նվազել է գրեթե 4 տոկոսային կետով, և 2019 թվականի համեմատ ծրագրի շահառու աղքատների թիվը նվազել է ավելի քան 15%-ով»¹⁸⁰:

Ստանձնած միջազգային պարտավորություններով Հայաստանը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները՝ երաշխավորելու համար երեխայի պաշտպանությունը բռնությունից՝ անկախ բռնության դրսևորման ձևից: Երեխան պետք է պաշտպանված լինի բռնության բոլոր ձևերից, այդ թվում՝ ֆիզիկական կամ հոգեբանական, ծեծից, վիրավորանքից կամ չարաշահումից, ծաղրանքից կամ անտեսումից, կոպիտ վերաբերմունքից, շահագործումից և այլն: Պետության ջանքերը պետք է ուղղված լինեն երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերը կանխարգելելու և բացահայտելու, դրանց մասին իրավասու մարմիններին տեղեկացնելու, քննարկման հանձնելու, հետաքննելու և այդ առթիվ հետագա միջոցներ ձեռնարկելու այլ ձևերի իրականացման, այդ թվում, ըստ անհրաժեշտության, դատական գործ հարուցելու համար:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է, որ ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:

¹⁷⁸ Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի կայքէջում, հասանելի է https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf հղումով:

¹⁷⁹ Հասանելի է https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_4.pdf հղումով:

¹⁸⁰ Նույն տեղում:

Հարկ է նշել, որ ՀՀ Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի առաջին հավելվածով նշված է, որ երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը շարունակում է մնալ պետական քաղաքականության առաջնահերթություն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի հունվարի 27-ի և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 28-ի «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգը և բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյանի ձևը հաստատելու մասին» թիվ 7-Ա/1 և թիվ 464Ա/2 համատեղ հրամանով ստեղծվել են հաստատություններում սովորողների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման, բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման համար ընթացակարգեր:

2021 թվականի ընթացքում Երևան քաղաքի 12 վարչական շրջաններից ստացված տեղեկատվության համաձայն՝ Երևան քաղաքում գրանցվել է 1-17 տարեկան երեխաների նկատմամբ ծնողների, խնամատարների, օրինական ներկայացուցիչների կամ այլ անձանց կողմից ֆիզիկական պատժի և/կամ հոգեբանական ագրեսիայի, սեռական բնույթի բռնության 10 դեպք¹⁸¹:

Այս շրջանակներում կարևոր են երեխաների նկատմամբ բռնության, երեխաների դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարը, դրանց կանխարգելումը, բոլոր երեխաների կրթության իրավունքի իրացման ապահովումը և այլն: Միևնույն ժամանակ արձանագրված է, որ վերջին տարիներին մարդու իրավունքներին առնչվող ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական կիրառման խնդիրներին իրենց զեկույցներում պարբերաբար անդրադարձել են միջազգային կառույցները, և որոնք, որպես ՀՀ-ում մարդու իրավունքների լրջագույն խնդիրներ, հատկապես առանձնացրել են, ի թիվս այլնի, երեխաների նկատմամբ բռնության և մարդու իրավունքների այլ խախտումների նկատմամբ պետության անհամարժեք արձագանքը:

Այսպիսով՝ Կոմիտեի առաջարկությունները կատարվում են մասամբ:

¹⁸¹ Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2021 թվականի տարեկան հաղորդումը <https://ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> հղումով: